



Հեղինակը շնորհակալություն է հայտնում
Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությանը, նրա հայկական
բաժանմունքի տնօրեն Ջավեն Եկալյանին՝ գրքի
հրատարակությունը հովանավորելու համար:

Sounds of Devotion

Կազմեց և խմբագրեց *ՆԱՐԻՆԵ ԴԵԼԼԱԼՅԱՆԸ*

ՀՏԴ 78 (479.25)
ԳՄԴ 85.31(23)
Ն 942

Ն 942 ***Նվիրումի հնչյուններ.***— Եր. Երևանի Համալս. հրատ. 2005, 256 էջ:

Գրքում ընդգրկված են հայ մշակութային երգահան Հարություն Դելլալյանի մասին տարբեր տարիներին գրված հոդվածները, կարծիքներն ու տպավորությունները, նրան ուղարկած մամակների փոքրիկ ընտրանին:

Դ $\frac{490500000}{704(02)05}$ 2005

ISBN 5-8084-0627-7

ԳՄԴ 85.31(23)

© Նարինե Դելլալյան - 2005 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ


Եվիրույի հնշյուններ



ԵՐԵՎԱՆ - 2005

Մենք արվեստագետների ազգ ենք:
Մեղծագործելու գաղսնիքն այն է,
որ եւզ անընդհատ նեւեւ
կյանքի հորշանութը,
եւ չմնաս, չլճանաս, չմեկուսանաս,
խիզախես և ամենակարևորը
կարողանաս ցույց տալ այն՝ ինչ ունես...

Արշիլ Գորկի





արություն Դելլալյանը պատկանում է հայ կոմպոզիտորների այն սերնդին, որն ասպարեզ իջավ 1970–ականների երկրորդ կեսին՝ նոր շունչ և թափ հաղորդելով ազգային երաժշտությանը: Հայ երաժշտական մշակույթն ապրում էր բազմապիսի գեղարվեստական երևույթներով հարուստ մի շրջան, որը բնորոշվում էր դեռևս 60–ականներին սկիզբ առած 20–րդ դարի համաշխարհային երաժշտության ձեռքբերումների գործուն յուրացմամբ, ազգային ավանդույթների նորովի մեկնաբանմամբ, դրանց բազմակողմանի համադրումով: Ահա այս խմորումների, յուրատեսակ դրսևորումների համանվագում Հարություն Դելլալյանին վերաբաղահաված էր հնչեցնել իր ուրույն ձայնը, աշխարհին ուղղել իր ասելիքը:

Սահուն և դյուրին չէր Դելլալյանի ստեղծագործական կազմավորումը: Դնկատագրի բերումով բավական ուշ սկսելով մասնագիտորեն զբաղվել երաժշտությամբ՝ նա, իր տաղանդի ուժով կարծես ջանալով վերագտնել կորցրած տարիները, իր նպատակասլացության և աշխատասիրության շնորհիվ կարողացավ արագ զինվել անհրաժեշտ գիտելիքներով և հմտությամբ, գտավ իր ուղին արվեստում, նախասիրած գաղափարների, թեմաների և արտահայտչալեզվի ոլորտը:

Արդեն ուսանողական տարիներին դիմեց ամենատարբեր–ժանրերին, որոնց թվում էին և՛ կամերային, և՛ սիմֆոնիկ սեռի գործեր, նաև՝ մանկական օպերա: Հետագայում ստեղծվեցին այնպիսի երկեր, ինչպիսիք են *Նվիրում Կոմիլասին* անգուգական Սոնատը դաշնամուրի համար, որն այսօր էլ եզակի տեղ է գրավում հայ դաշնամուրային երաժշտության մեջ իր ինքնատիպ մտահղացումով, ազգային վառ լեզվով և խիստ արդիական բնույթով: Այնուհետև դա *Topophono* կամերային կոնցերտն էր, հնչյունի և հնչերանգի տարածական հետաքրքիր լուծումներով, փառահեղ երգեհոնային *Requiem Trionfale*–ն և մի շարք այլ ուշագրավ գործեր:

Դելլալյանի ստեղծագործությանը անդրադառնալիս ակներև է, որ մեր առջև ցայտուն անհատականության տեր արվեստագետ է, որին հուզել են փի-

լիտփայական ընդգրկում ունեցող հավերժական թեմաներ, որին հոգեհարազատ էր արտահայտվելու չափազանց անկեղծ, քնարախոհական, խոստովանական կերպը: Այդ մասին են վկայում *Մահ* սիմֆոնիկ պոեմը՝ ըստ Ավետիք Իսահակյանի համանուն բանաստեղծության, *Ջրասույզ արև* դրամատիկ կանտատը սոպրանոյի, երգչախմբի, ասմունքողի և սիմֆոնիկ նվագախմբի համար, գրված Արևշատ Ավագյանի խոսքերով: Սիմֆոնիկ գործերում դրսևորվել է նաև Դելլալյանին հատուկ նվագախմբային հնչերանգային մտածողությամբ: Վստահ ենք, որ այդպիսիք են նաև նրա հեղինակած երկու սիմֆոնիաները և կամերային կոնցերտները, որոնք դեռ սպասում են իրենց կատարմանը:

Կամերային երաժշտության ոլորտում Դելլալյանը մշտապես ձգտել է նորարարական հնարքների կիրառմանը: Նրան հատկապես գրավել է դասական ավանդական գործիքների դեռևս չկիրառված հնարավորությունների բացահայտումը, ինչը ծնունդ տվեց մասնավորապես փայտյա փողային գործիքների համար գրված ինքնօրինակ ստեղծագործություններին:


Հարությունը ապրեց կարճատև, սակայն շատ հագեցած և բեղուն մի կյանք: Նրա ստեղծագործությունները կենդանի արձագանք և հետաքրքրություն է առաջացնում թե՛ կատարողների և թե՛ ունկնդիրների շրջանում: Նա ըմբռնեց միջազգային ճանաչման և մեծ հաջողությունների բերկրանքը: Արժանացավ հեղինակավոր պարգևների և բարձր գնահատականների: Նրա գործերի կատարման աշխարհագրությունը՝ Կանադայից մինչև Ճապոնիա, ապշեցնում և ուրախացնում է: Երկերի մի զգալի մասը ունեցավ բազում հրատարակություններ աշխարհի տարբեր երկրներում: Այդ ե՞րբ հասցրեց՝ ապրելով ընդամենը 53 տարի...

Դելլալյանի երաժշտությունը, հաճախ հայտնություն դառնալով սփյուռքահայ և օտար ունկնդիրների համար, հատկապես վերջիններիս հաղորդակից էր դարձնում մի հինավուրց ժողովրդի պատմությանը, մշակույթին, ցավերին և հույսերին, որոնց իսկական կրողն էր նա:

Դելլալյանի ստեղծագործություններն այսօր էլ առկայծում են նրա հոգու լույսը, հավաստելով այն անուրանալի վաստակը և ուրույն տեղը, որ իրավամբ իրենն են՝ անցյալ դարի վերջին քառորդի հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի ակնառու նվաճումների համապատկերում:

Աննա Արևշատյան

*Արվեստագիտության դոկտոր,
Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի պրոֆեսոր*



ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ*

Անհավասարին մեր կողքին

*... Ես անխոթյամբ վճարեցի
իմ սագած գեղագիտական մայրունի դիմաց,
որովհետև ամբողջ գիշեր, իրոք,
ինչ «հալածում» էր տնտեսի երաժշտությունը...*

Ելանքի հմայքներից մեկը, գուցե ամենաթանկը, այն թաքուն, խորապես կենդանի, հոգին թարմ պահող զգացողությունն է, թե միշտ էլ մի լավ անակնկալ սպասում է քեզ՝ չգիտես ինչ, երբ, որտեղ: Այդպիսի անակնկալ էր Վերին Ձեթունի Կամարակ թաղամասում, մոտ քառասուն տարի առաջ հայրենադարձի կառուցած մի պարզուկ տան մեջ. ծանոթացա հրաշքի նման մի երևույթի, որ ունի անուն՝ Հարություն Դելլալյան: Հիմա կասե՞ք՝ ո՞վ է, ի՞նչ հրաշք: Համբերեցե՛ք: Ձեզ համար նույնպես կլինի անակնկալ, եթե հեռվից սկսեմ նրա պատմությունը, որին ես էլ անծանոթ էի դեռ մի երկու շաբաթ առաջ:

Քառասունյոթ տարեկան է Հարություն Դելլալյանը, ունի համակրելի, անձնվեր կին և երկու դուստր, երկուսն էլ կոմսերվատորիայի ուսանողուհի, մեկը՝ հինգերորդ կուրսում, դաշնակահար, մյուսը՝ երկրորդ կուրսում, ջութակահար: Ինքը ծնվել է Աթենքում, պատերազմից առաջ, կեսարացի արհեստավոր հոր և պոլսեցի զարգացած, մի քանի լեզու իմացող մոր ընտանիքում: Ծանր մանկություն է ապրել պատերազմի տարիներին. հիտլերյան արհավիրքի տակ տառապող Աթենքի փողոցներում տեսել է հազարավոր սովահարների մահը, զնդակահարությունների և ռմբակոծությունների սարսափն է ապրել, մնացել է որբ, երբ ֆաշիստներն իր հորն էլ ձերբակալել ու տարել են Գերմանիա, իսկ փրկված հայրիկի վերադարձը, պատերազմից հետո, եղել է այնպիսի ցնցող ուրախություն, որ մինչև հիմա էլ այդ պահը նա հիշում է որպես իր կյանքի ամենավառ մի ապրումը: Այնուհետև՝ հայրենադարձություն 1947–ին: Հարությունը տասը տարեկան է և, բնական է, դպրոց է հաճախում: Շատ չանցած, հողամաս են ստանում և սկսում տուն կառուցել: Եվ այդ դժվար գործին մասնակցում է նաև դպրոցականը, ինչպես բոլոր հայրենադարձ երեխաները այդ տարիներին, երբ իրենց ծնողներն զբաղված էին համատարած տնաշինությամբ և (արժե այստեղ հիշատակել այդ պատմական փաստը) կարճ ժամանակում Երևանի շուրջ, ամայի տարածությունների վրա, ծաղկում էին ընդարձակ թաղամասեր, որոնցից մեկը հենց Ձեթունն էր:

Ճակատագիրը դեռ պատանեկան տարիքից փորձությունների է ենթարկել Հարությունին: Դժբախտ պատահարի հետևանքով ծանր հիվանդանում է հայրը, և նա,

դեռ միջնակարգը չավարտած, ստիպված է աշխատանքային կյանքն սկսել որպես բանվոր: Հետո վաղաժամ մահանում է մայրը: Եվ ընտանիքի ամբողջ հոգսը ծանրանում է ավագ որդի Յարությունի ուսերին: Զինվորական ծառայությունից հետո երկար տարիներ որպես ֆրեզերագործ աշխատում է Երևանի ֆրեզերային հաստոցների գործարանում: Բարձրագույն ուսման մասին այլևս չէր էլ կարող մտածել. վաղուց արդեն հրաժարվել էր պատանեկան այդ երազանքից:

Բայց նրա հոգում արվեստի սերն էր կայծկլտում: Դեռ տառապալից մանկության օրերին մայրն է գցել այդ կայծն իր կոմիտասյան երգերով ու գեղեցիկ խոսքերով, գցել բնականորեն, նախնականորեն, չկասկածելով անգամ, որ իր զավակի հոգու խորքում տաղանդ է թաքնված, կյանքի և բնության գեղեցկություններն ու արհավիրքները տարերայնորեն ընկալող և կուտակող տաղանդ, որ կարող է մի օր բռնկվել այդ կայծից: Բայց ինքը՝ Յարությունն էլ չի կասկածել, գաղափար անգամ չի ունեցել իր տաղանդի մասին մինչև... հասել է կյանքի ճանապարհի կեսին: Չի կասկածել նույնիսկ այն օրը, երբ իր բանվոր ընկերներից մեկի գրած քառյակի վրա, կիթառ տնկտնկացնելով, հորինել է մի մեղեդի, որ իսկույն գրավել է իր ընկերներին, սկսել են երգել: Միայն արվեստի սիրուց մղված, նույնպես նախնականորեն, փորձել է բանաստեղծություններ գրել ու նկարել, և դա տարերային հաճույք է պատճառել նրան: Գործարանում կազմակերպվել է արվեստասերների խմբակ, մեծ արվեստագետների հետ ծանոթանալու ինքնաբերական ցանկությունը նրանց մղել, համարձակություն է տվել այցելելու Մ. Սարյանին, Յ. Ներսիսյանին, Վ. Փափագյանին: Յարությունը հուզմունքով հիշում է մանավանդ Փափագյանի սիրալիկ ընդունելությունը, պատմածները Վարուժանի, Սիամանթոյի, Կոմիտասի մասին և հատկապես մի խոսքը. «Եկեք, եկեք, սիրելիներս, եթե արվեստի սերը ձեզ մղում է գալ՝ երկաթ տաշելու հոգնությունից հետո»:

Շուրջ տասնհինգ տարի առաջ Երևանում կազմակերպվեց ժողովրդական կոնսերվատորիա, ուր մեր հայտնի կոմպոզիտորները, իրենց բարի կամեցողությամբ, անձնավիրաբար, անշահախնդրորեն, աշխատեցին երեք տարի: Ի՞նչն ստիպեց ֆրեզերագործ բանվոր, հասուն մարդ Յարություն Դելլալյանին՝ ընդունելության դիմում տալու, երբ ոչ երաժշտական նոտագրություն գիտեր, ոչ էլ ընդհանրապես գաղափար ուներ լուրջ երաժշտության մասին, մեծ կոմպոզիտորների անուններն անգամ չգիտեր՝ ոչ Բախ կամ Մոցարտ, ոչ Բեթհովեն կամ Լիստ, միայն՝ Կոմիտաս: Ինչո՞ւ դիմում տվեց բուռն ցանկությամբ և հույսով, բայց նրա սիրտ մարեցնող վախով, որ կարող են չընդունել իրեն: Այսօր ինքն էլ դժվարանում է պատասխանել այդ հարցին: Երևի թաքուն տաղանդն սկսել էր արդեն բռնկվել արվեստասիրության կայծկլտումից: Ստուգեցին նրա երաժշտական ընդունակությունները և ընդունեցին: Ոչ միայն ժողովրդական կոնսերվատորիա, այլև, որոշ ժամանակ հետո, Երևանի պետական կոնսերվատորիա: Երեսուհինգ տարեկան բանվորը մատեց առաջին կուրս՝ դպրոցավարտ պատանիների հետ: Հասուն մարդ, որ դեռ լողալ անգամ չգիտեր, նա բուռն թափով նետվեց երաժշտական ուսումնառության ծովը, որպեսզի հինգ տարի հետո, ամցնելով իրեն համար քառապատիկ բարդ առարկաների լրիվ դասընթացը, դուրս գա մյուս ափը որպես... լուրջ կոմպոզիտոր:

«Արևոտ օրեր էին իմ կյանքում, ամեն օր մի նոր աշխարհ էր բացվում ինձ համար», – ասում է Հարությունը, երախտագիտությամբ խոսելով իր ուսուցիչների՝ Է. Միրզոյանի, Ղ. Սարյանի, Է. Բաղդասարյանի, Ա. Տերտեյանի և մյուս դասախոսների մասին, որոնք շարունակ հուսադրում, քաջալերում էին նրան: Եվ նա կենսականորեն կարիք ուներ այդ քաջալերության, որովհետև արևոտ օրեր էին իր հոգու, իր բացվող տաղանդի համար, բայց շատ դժվար օրեր՝ արդեն ամուսնացած, երկու երեխայի տեր մարդու իր կենցաղում: Կյանքի անողոք առօրյան իրենից պահանջում էր կամքի մեծ լարում և լուռ զոհողություններ: Գիշերներն էր աշխատում ապրուստի համար: Օրական երկու տոննա երկաթ էր անցնում իր ձեռքերով, մատները սևանում էին ու փայտանում, և դաշնամուրային դասի գնալուց առաջ կես ժամ, մեկ ժամ տաք ջրի մեջ էր պահում այդ նույն մատները, որպեսզի կարողանա նվագել, որպեսզի «ամոթով չմնա դասատուի առաջ»: Բայց ամեն ինչ իր չափն ու սահմանը ունի. վերջիվերջո ստիպվեց հրաժեշտ տալ տարիներով սիրելի դարձած, բայց այնքան հոգնեցուցիչ երկաթներին, բոլոր ուժերը նվիրելու համար երաժշտական քառատրոփ ուսումնառությանը: Ահա թե ինչու «անձնվեր» կոչեցի իր համակրելի կնոջը՝ Հերմինեին...

Բռնկված թաքուն տաղանդի կրակը դուրս էր ժայթքում արդեն, բոցավառվում կամերային երկերի մեջ, որ նա ստեղծում էր ուսումնառության շրջանում, իսկ դիպլոմային աշխատանքը դարձավ իր առաջին սիմֆոնիան: Կոմսերվատորիան ավարտելուց հետո, հաջորդ տարի՝ 1979-ին, Հարություն Դելլալյան կոմպոզիտորը դարձավ Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ: Այժմ նա արդեն շուրջ երկու տասնյակ երկերի հեղինակ է՝ սոնատներ դաշնամուրի, ջութակի, թավջութակի, կլարնետի, ֆագոտի, դաշնամուրային կոմպերտ, վոկալ-սիմֆոնիկ երկեր, երեք սիմֆոնիա, երգեհոնային ռեքվիեմ, մանկական օպերա: Երևանում կատարվել են մի քանի սոնատ, ըստ որում ինքն էլ հանդես է եկել կատարումով: Վերջերս հեղինակային համերգ է ունեցել Նովոսիբիրսկ քաղաքում: Արտասահմանյան երկրներում էլ կատարվում են նրա որոշ երկերը: Եվ ամենուրեք նշում են գնահատանքով, որ նա իր ուրույն ոճն ունեցող, ինքնատիպ կոմպոզիտոր է:

Այս բոլորը ես (և ոչ միայն ես) բացարձակապես չգիտեի այն օրը, երբ իմ անծանոթ ընթերցողներից մեկը՝ մի ինժեներ տիկին, որ, ինչպես պարզվեց հետո, ֆրեզերային հաստոցների գործարանում արվեստասերների այն խմբակի մասնակից է եղել, ինձ առաջարկեց այցելել իմ «հունահայ հայրենակից» կոմպոզիտորի տունը՝ ծանոթանալու իրեն և իր երկերին: Սիրով, բայց նաև, անկեղծ ասած, որոշ թերահավատությամբ գնացի: Ուսումնառությունն սկսել է երեսունհինգ տարեկանում: Այն էլ կոմպոզիտորը: Անհավատալի է: Ինձ թվաց՝ հերթական մի ինքնուսի մասին է խոսքը:

Երեկո էր, մութ: Մտանք պարզուկ տան բակը: Ներսիս դաշնամուրի լիահնչուն նվագ: Սեզար Ֆրանկ: Առաջին զարնանքը: Բայց պարզվեց, որ նվագողը Հարությունի ավագ դուստրն է՝ կոմսերվատորիայի հինգերորդ կուրսի ուսանողուհին: Իսկ Հարությունն ինքն առաջին իսկ հայացքից գրավեց իր անմիջականությամբ, պարզությամբ, ջերմ սրտով, սևամորուք դեմքից ու սև աչքերից ճառագայթող բա-

րի ժպիտով, որի խորքում, սակայն, մտահոգության պես մի բան էր զգացվում, ինչ-պես աչքերի շուրջ երևում էին մանր կնճիռներ ժպիտի հետ:

Չենց այդպես էլ, առաջին իսկ վայրկյանից, առաջին իսկ հնչյունից, գրավեց Կոմիտասին նվիրված իր դաշնամուրային սոնատը, որ սկսեցինք լսել մագնիտոֆոնային ձայնագրությամբ: Գրավեց ու ստիպեց լարված ունկնդրել մինչև վերջին հնչյունը, ստիպեց նույնիսկ աչքերս փակել, ամբողջ հոգով համծնվել այդ խիստ տպավորիչ, պատկերավոր, զարմանալիորեն նոր, ինքնատիպ երաժշտությանը, որ նաև հարազատորեն սրտառու է իր բարձր հայկականությամբ, խորապես հուզական է ու դրամատիկ: Վերջում անակնկալորեն ծափեր՝ բռնում ու երկարատև: Համերգի՞ց է ձայնագրվել: Որտե՞ղ: Նյու Յորքի նշանավոր համերգասրահ Կամենեզի Յոլլում: Ահա նաև այդ համերգի ծրագիրը անգլերեն. չորս դաշնամուրային սոնատ, առաջին բաժնում՝ Մոցարտի և Բեթհովենի, երկրորդ բաժնում՝ Հարություն Դելլալյանի և Լիստի: Ինչպիսի ճակատագիր: Տասներկու տարի առաջ Հարություն Դելլալյան բանվորը չգիտեր անգամ այդ մեծ անունները, չգիտեր նաև, որ նրանց կողքին հնչելու է Հարություն Դելլալյան կոմպոզիտորի անունը՝ ոչ միայն Նյու Յորքում, այլև Վաշինգտոնում, նաև Կանադայի և Իտալիայի տարբեր քաղաքներում և այլուր, որտեղ կատարվել է այդ սոնատը...

Չիրավի ինքնատիպ ստեղծագործություն՝ ոչ միայն իր ոճով, երաժշտական ուրույն պատկերավորությամբ և հուզական ու իմաստային լիցքով, այլև տեխնիկական նոր, հնարամիտ միջոցներով, որոնք տեղ-տեղ արտասովոր հնչողություն են տալիս դաշնամուրին, բայց ոչ ինքնանպատակորեն զարմացնելու, այլ բովանդակությունն ազդու արտահայտելու համար միայն: Ոչ մի ավելորդ հնչյուն, զգացումների չթուլացող լարվածություն և հագեցվածություն, որ բախվող հակադրությունների միջով անցնում է սոնատում ծայրից ծայր, ստեղծելով յուրօրինակ էպիկա-քնարական դրամատիզմը և պատկերալից իմաստի ամբողջականությունը: Սոնատն սկսվում է գահավեժ, թավալուն հնչյուններով, որոնք փոթորկման, հրդեհման կամ փլուզման պատկեր են ստեղծում: Եվ ապա՝ ծանր զանգերի դողանքը: Գլխավոր մեղեդին, շատ հայկական և շատ հուզիչ, երբեք չի կարողանում ամբողջանալ, շարունակ ընդհատվում է փլուզումներով շիկացած ժայթքումներով, ասես ուզում է մոտենալ կարոտի աշխարհից, իշխող ներկայություն դառնալ, բայց մնում է նույն կարոտի աշխարհում և, ի վերջո, տարբերակվում է ու հնչում մարդկային ձայնով հեռուներից, տրտմորեն ու լացացնելու չափ հուզելով, ասես կարոտի լեռնալանջից բերելով հուշ դարձած ծաղկավետ ապրումների բուրմունքը: Ի դեպ, այդ մարդկային ձայնն էլ, որ դաշնակահարն է կատարում, ընդամենը չորս նոտա, սոնատի ժանրում տեխնիկական նորություն է, հնարանք, որ տեղին է ու հենց դրա համար էլ շատ ազդու:

Սոնատը կոչվում է *Նվիրում Կոմիտասին*: Վերնագիրը ծրագրայնություն է թելադրում: Եվ ծրագիրը պարզ է դառնում այն պահին, երբ սոնատի հյուսվածքի մեջ հանկարծ անցողակիորեն առկայծում են Կոմիտասի «Ամսուրնի» երգի դաշնամուրային հանճարեղ նվագակցության մի երկու տարաշխարհիկ, ասես աստղային հնչյուններ-

րը: Այո, Անտունի դարձած Կոմիտասի փլուզվող աշխարհն է՝ կարոտների երազայնությամբ և շիկացած պոռթկումներով: Բայց ծրագրի հենց այդ պայմանական կոնկրետության շնորհիվ սոնատը թելադրում է նաև հուզական–իմաստային մեծ ընդհանրացում, զգում ես մեր դարի մարդու տագնապած հոգեկան աշխարհը՝ իր կարոտների լուսավոր թախիծով, փլուզման արհավիրքի դեմ պոռթկումներով, աշխարհի նորոգման տենչով: Իսկ երբ ծանոթանում ես հեղինակի կենսագրությանը, զգում ես նաև, որ նրա արհավիրք տեսած, բայց կյանքի և բնության սիրով բաբախած մանկության ապրումներն են հաժում սոնատի խորքերում: Գուցե այս երկի ստեղծագործական մեկնակետն են եղել, Կոմիտասի «Անտունի» երգի դաշնամուրային նվագակցության արձագանքների հետ, նաև հեղինակի մանկությունից եկած այդ ապրումները հենց, ավելի ճիշտ՝ վաղ տարիքում մորից լսած կոմիտասյան երգերի ընդհանրացված վերապրումը, որ մարմնավորվել է սոնատի գլխավոր մեղեդու մեջ:

Երևանյան մի կատարման առիթով «Կոմսոմոլեց» թերթն այս սոնատը որակել է որպես «վառ ստեղծագործություն», որ «մեծ հետաքրքրությամբ ընդունվեց հասարակայնության կողմից»: Իսկ «Նյու Յորք թայմս» թերթի գրախոսը Կամենեի Դոլլուն այն համերգի առթիվ ասում է, որ այս սոնատը «ծրագրի ամենագրավիչ երկն էր». ու ճշելով նաև տեխնիկական նորարարությունը, սոնատին տալիս է «հալածող ստեղծագործություն» բնորոշումը: Դիպուկ բնորոշում: Ես անքնությամբ վճարեցի իմ ստացած գեղագիտական ապրումի դիմաց, որովհետև ամբողջ գիշեր, իրոք, ինձ «հալածում» էր սոնատի երաժշտությունը: Եվ հաջորդ օրերին կրկին ու կրկին գնացի լսելու, գնացի արվեստագետ ընկերների հետ, որոնք նույն ոգևորիչ տպավորությունն ստացան:

Լսեցի նաև ջութակի, թավջութակի և կլարնետի սոնատների ծայնագրությունները: Կլարնետի սոնատ, կոչվում է *խորհրդածություններ* և նույնպես նորարարական է այդ գործիքի համար, հատկապես գրված է իր խորությամբ: «Սովետական մուզիկա» ամսագիրը հայտնում է այն կարծիքը, թե այս սոնատում «հեղինակը խորապես անհատական շնչով է բացահայտում իր մտահղացումը»: Նույն ամսագիրը գտնում է, որ Դելլալյանի թավջութակի սոնատը, որ նրա ուսանողական շրջանի երկերից է, աչքի է ընկնում «մարդկային կենդանի զգացմանը դիմելու հատկությամբ, որն այնքան գրավիչ է»:

Իմ լսած բոլոր այդ երկերին, առհասարակ, հատուկ է նույն անձնադրոշմ ոճը, որն ստիպում է ունկնդրել առանց քննադատական կեցվածքի, որովհետև հմայում է իր անկեղծությամբ, զգում ես, որ հեղինակը ուղղակի իր էությունն է արտահայտում երաժշտական հնչյունների միջոցով, նրա երաժշտությունը ոչ թե պարզապես զգացումների, մտքերի, մասնագիտական գիտելիքների, այլ ապրած կյանքի գեղարվեստական մի ձուլվածք է, և նույնիսկ թվում է երբեմն, որ մարդկային կենդանի խոսքի հուզաշեշտերն են լսում դրա մեջ: Որքան կուզեի ծանոթանալ նաև նրա մյուս, մանավանդ մեծածավալ, սիմֆոնիկ երկերին, որոնք առհասարակ դեռ չեն կատարված: Ինքն ավելի է ցավում դրա համար, որովհետև... «սխալներս կուզեի լսել»,– ասում է նա:

Ինձ հատկապես հետաքրքրեց նրա վերջին երկերից մեկը, որ կոչվում է *Ռեքվիեմ տրիումֆալ*, այսինքն՝ *Ռեքվիեմ հաղթական*: Խիստ ուշագրավ վերնագիր, առաջին հայացքից հակասական, բայց կռահելի է իմաստը, որ մեզ համար այժմեական է այսօր: Ոչ թե լոկ հետաքրքրական, այլ դարձյալ ինքնատիպ մտահղացում: Այդ երկը գրել է ամերիկահայ ականավոր երգեհոնահար Պերճ ժամկոչյանի խնդրանքով: Երևանում էր գտնվում ժամկոչյանը: «Այո,– պատասխանեց նա իմ հարցին,– երբ տարի մը առաջ Հարությունի դաշնամուրային սոնատը լսեցի հոս՝ իր կատարումով, խնդրեցի, որ երգեհոնի համար ալ աղվոր բան մը գրե, ես կատարեմ»: Եվ նա Բոստոնում, համերգում Բախի երկերի կողքին, կատարել է արդեն այդ «աղվոր բան» ռեքվիեմը, որ ծայնային մեծ հնարավորություններ ունեցող երգեհոն է պահանջում, ինչպես ասում է ժամկոչյանը, ավելացնելով, որ այս *Ռեքվիեմ տրիումֆալը* մշտապես մտքով է իր ծրագրի մեջ և շուտով կատարելու է նաև Գերմանիայում, Ճապոնիայում, Չինաստանում և այլուր:

Ահա քանի օր է արդեն, ուզում եմ հասկանալ, իմաստավորել «կոմպոզիտոր Հարություն Դելլալյան» երևույթը: Չեմ հիշում երաժշտության պատմության մեջ նման դեպք. այդքան ուշ տարիքում սկսել, երաժշտական կատարյալ անգրագիտությունից բարձրանալ մինչև ստեղծագործական նվաճումներ: Ուղղակի ասեմք՝ հրաշք է: Անհավատալի իրականություն է դարձել մեր կողքին: Առօրյայի սովորությունը թող չխանգարի մեզ տեսնելու այդ իրականությունը և գնահատելու ըստ արժանվույն: Սովորաբար թերություն է համարվում, երբ երաժիշտը մանկությունից չի սկսել իր ուսումնառությունը: Բայց տվյալ դեպքում, մտածում եմ, հենց այդ թերությունը վերածվել է առավելության. բնածին տաղանդը, որ ինքնին անիմանալի խորհուրդ է, հանկարծ բացվել է հասուն տարիքում, ասես երկրաչափական հարատևությամբ յուրացրել երաժշտարվեստի միջոցները և դրանք ծառայեցրել ուղղակի հասուն հոգու ինքնարտահայտմանը: Եվ միաժամանակ «երիտասարդ կոմպոզիտոր» եմ կոչում քառասունյոթամյա Դելլալյանին. իմաստալից պարադոքս: Հատկանշական է, որ երբ ժամկոչյանը խնդրել է երկ գրել երգեհոնի համար, Հարությունը ամաչել է ասելու նրան, թե երաժշտական ամենաբարդ այդ գործիքին դեռ անծանոթ է ինքը: Կարճ ժամանակում ուսումնասիրում է երգեհոնային գրականությունը՝ սկսելով Բախից, և ստեղծում իր *Requiem Trionfale*: ժամկոչյանն իր խնդրանքից մեկ տարի հետո արդեն կատարում է այդ երկը և նույնիսկ դիմում նոր խնդրանքով՝ գրել կոնցերտ երգեհոնի և սիմֆոնիկ նվագախմբի համար:

Երբ նայում ես Հարությունի դեմքին, մերթ ունենում ես այն տպավորությունը, թե նա ինքն էլ հոգու խորքում զարմանում է հաճախ, հիշելով իր կյանքի ուղին: «Ես շարունակում եմ ամեն օր սովորել, ուսումնասիրելով մեծ կոմպոզիտորների երկերը»,— ասում է նա իր անմիջական, բացսիրտ համեստությամբ, ինչպես ժամանակին բանվոր Հարությունը կասեր, որ ամեն օր գնում է գործարան՝ երկաթ տաշելու: Արդարև, իր դաշնամուրի վրա, մեծ կոպոզիտորների երկերի կողքին, տեսա նաև Ներսես Շնորհալու երաժշտական երկերը, որ նա ուսումնասիրում էր հենց այս օրերին:



ՊԵՏՐՈՍ ԱԼԱՅԱՅՏՈՅԵԱՆ*

*Դեղլիալեան
կամ ճակատագրի կողին
խրաժ մեխը*

*Ահա վերջապէս մէկը, որուն առանցքը եղաւ
Կոմիսսա – Եղեռն – արդիականութիւն երթողին:*

...Յոյսերն ափ էին նետուած
 եւ մի անմեղ երագի միջով,
 մեն մենակ լողում էր տղայի հոգին ...

Ա. Ասագեան («Ձրասոյգ արեւ»)



ասներկու տարիներ առաջ, 1990–ի ապրիլին, Երեւանի մէջ իր մահականացուն կը կնքէր, տարածամօրէն, 53 տարեկանին, հայ արդի երաժշտութեան ամենէն կարկառուն ներկայացուցիչներէն՝ Յարութիւն Դելլալեան:

Յ.Դելլալեան հեղինակն է միայն 20–էն 25–ի մօտ զանազան ժանրի ստեղծագործութիւններու, որոնց մէկ մասը տակաւին ձեռագիր վիճակի մէջ է եւ վերջին երկը՝ «Լիլիթ» թատերապարը (պալէթ)՝ անաւարտ: Եթէ նկատի ունենանք, որ Դելլալեանի անբարեխիղճ ճակատագիրը զինք, ըլլալով փոխն ի փոխ կօշկակարի աշակերտ, բանուոր, աշխատաւոր, ապա խորհրդային բանակի զինուոր, եւ մինչեւ 24–25 տարեկանը երաժշտական դոյզն կրթութիւն իսկ չէ ստացած՝ մենք կը գտնուինք հրաշքի համագօր անօրինակ երեւոյթի մը առջեւ:

Դելլալեան կը ծնի Աթենք՝ Կեսարիայէն գաղթած ընտանիքի մէջ: Դազիւ 10 տարեկան ընտանիքով կը ներգաղթեն Դայաստան: Յունաստան եղած շրջանին պատանի Յարութիւն արդէն ամբողջութեամբ ներծծած է Կոմիտասն ու հայ եկեղեցւոյ սրբազան երաժշտութիւնը՝ շնորհիւ իր նրբաճաշակ եւ զարգացած մօր. «Սուրբ Սուրբ»ը, «Դայր Մեր»ը, «Գարուն ա»ն խարիսխ նետած էին անոր սրտին մէջ, երբ կը հասնի հայրենիք: Ան իր ներաշխարհին մէջ ամուր քանդակած հայրենիք կը տանի նաեւ 1915–ի արհաւիրքներէն ազատած իր ծնողքին պատումներն ու վկայութիւնները, ինչպէս նաեւ անոնցմէ ժառանգած գերզգայուն, ներամփոփ, անձնուրաց, սակաւախօս, նրբազգաց եւ չափազանց ազնիւ նկարագիրը: Ահա այսպէս զինուած, ան իր կեանքի մնացեալ 43 փոթորկալից աշունները, մինչեւ 1990–ի կանխահաս մահը, պիտի ճաշակէր կեանքի բազում դառնութիւնները, պիտի պայքարէր անգութ ճակատագրին հրամցուցած բոլոր խոչընդոտներուն դէմ եւ անհամար մարտահրաւերները պիտի չկարենային կասեցնել իր տկարութիւն չճանչցող կամքին խոյանքը: Եւ երբ կը մահանար, ցաւօք սրտի, կարելի չէր եղած իրագործել իր սրտի ամենաջերմ փափագը ու ամենէն մտերիմ ծրագիրը՝ Լեւոն Շանթի «Դին

Աստուածներէն» կերտել թատերախաղ մը, որու կեդրոնական կերպարը, Աբեղան, պիտի եղած ըլլար ... Կոմիտասը, ի՛նքը:

Երաժշտական որեւէ ուսումնէ շատ առաջ, ուսում որ իրեն զլացուեցաւ երկար տարիներ, ան հայրենիքի մէջ իր ներաշխարհէն ներս գաղտնօրէն կը սնուցանէր զոյգ սրբութիւններ, որոնք անուսուցանելի են՝ Կոմիտասի հոգին եւ 1915–ի հայ ժողովուրդին կրած անջնջելի արհաւիրքը: Այն ինչ որ ան օր մը պիտի յղանար կամ յօրինէր, երաժշտական ինչ սեռի որ պատկանէր իր գրչէն ելածը, անպայմանօրէն պիտի կրէր 1915–ի դրոշմը, նոյնիսկ, եթէ ան իր ստեղծագործութիւնը յատուկ ձօնած չըլլար եղեռնի զոհերուն: Կարծես ան դաշինք կնքած ըլլար անտեսանելի ուժի մը հետ, սեւ եւ դաժան ուժ մը, որուն կեդրոնը հայուն ճակատագրին մէջ մխրճուած է, իսկ տրամագիծը կ'անցնի իւրաքանչիւր հայու սրտէն՝ հասնելու համար Մասիսի գագաթին. ան գրաւի եկած էր Մասիսին հետ, որ պիտի յաղթէր այդ ուժին, որ զինք կը կրծէր, բայց որմէ երբեք չկրցաւ ձերբազատուիլ: Այդ սեւ ուժը կը նմանէր պողիպոթի արիւնկզակ, արիւնածուծ լպրծուն թաղանթներուն, հուժկու թւերուն, որոնք յանկարծ կը պլլուէին իր հոգիին թւերուն եւ կը ջանային զինք արիւնքաւմ ընել: Այսպէս, *Նուիրում Կոմիտասի սոնատը*, *Յաղթական Ռէքվիէմը*, թէ *Topophobia*–ն այդ սեւ ուժին դէմ պայքարն է, կամ ուժին շղթայազերծման ու ազատագրման ճիգի արդիւնք երկեր են: Մինչ Խորհրդային Չայաստանի մէջ մեծ ու փոքր յօրինողներ զիրար կը հրմշտկէին Կարմիր բանակին կամ «պիոներական» խումբերու առատ ներբողներ թխելու համար՝ *par excellence* անհամ, անարուեստ, անհայրենիք եւ սնամէջ, Դեկլաիւան, Նոր Զէթուն թաղամասի իր անկիւնին մէջ, իր փոքրիկ ընտանիքին տաքուկ շունչով կը բոցավառուէր եւ կը ստեղծէր հոն իր ուրոյն հայրենիքը, եւ անկէ թուղթին կը յանձնէր անմահ գործեր, որոնց բոլորին ենթաբնագիրը եւ բաբախումը 1915–էն կը սերին:

Դեկլաիւան իր յուշերուն մէջ կը խոստովանի թէ դաժան օրեր էին 50–ական թուականները, երբ ջարդարար համաշխարհային պատերազմէն մոր պրծած Խորհրդային կայսրութեան տարածքին կը տիրէին չքաւորութիւնն ու սովը: Այս ընդհանուր մռայլ պատկերին վրայ կը գծագրուէին իր կեանքին անողոք եւ անողորմ հանգրուանները: Ուսումնական տարիները կ'ընդհատուին յանկարծ, երբ մօրը մահուան կը յաջորդէ հայրը անդամալուծող արկածը. ան ստիպուած է ինքն իր ուսերուն վերցնել հաշմանդամ հօր եւ փոքր եղբօր ամենօրեայ հոգսերը: Կը ճաշակէ ամեն կարգի արհեստներու փորձառութիւնը, միաժամանակ կը յաճախէ գիշերային դպրոց, ուրկէ բացակայ է երաժշտական տարրական կրթութիւնն իսկ:

Վրայ կը հասնին զինուորագրութեան տարիները. 1956–ին իբրեւ զինուոր կ'ուղարկուի Չայաստանէն շատ հեռու, բիւլոռուսական հանրապետութեան տարածքները: Թէեւ երաժշտութենէ բոլորովին անտեղեակ, սակայն բանակին մէջ մաս կը կազմէ սիրողներէ կազմուած երգչախումբի մը: Շատ շուտով, սակայն, իր երաժշտական ուշիմութեան եւ գեղեցիկ ծայնին շնորհիւ, կը դառնայ այդ խումբին

մեներգիչը: Բանակին մէջ իր ունեցած յաջողութիւնները զինք կը տոգորեն երաժշտութեան նուիրուելու աննկուն կամքով:

60–ական թուականներուն, բանակէն վերադարձին, մուտքի քննութեան դիմում կը կատարէ Երեւանի Ռոմանոս Մելիքեան երաժշտական ուսումնարանը: Հիասթափութեամբ կը տեղեկանայ զինք ունկնդրող ուսուցչապետէն, որ չի կրնար արհեստավարժ երգիչ դառնալ. վնասուած են ձայնավարերը՝ բանակին մէջ բարձր նոթաներ երգելու ընթացքին: Ճարահատ՝ կը հեռանայ եւ կը մտնէ ծանր աշխատանք պահանջող գործատան մը մէջ: Այդ կոշտ գործին ետեւը կանգնողը սակայն նրբաճաշակ եւ համակ երաժշտութիւն բուրող Դելլալեանն էր. ինչպէս կ'ըսէ Թամար Յովհաննիսեան, «Երաժշտութիւնը, որ նա լսում էր, հեռու եւ խոր ակունքներ ունէր, ծնուել էր Մասիսից այն կողմ, պապեմական օջախից, տանիքից հարցականի պէս կախուած կոկորդահեղձ արագիլի կանչից...»¹: Հոն եւս կը յաջողի կազմել երգեցիկ խումբ գործաւոր քանի մը տղոց հետ: «Մեր խումբը», կը պատմէ ան պոսթընաբնակ լրագրող ճէքի Աբրահամեանին, «կը հրաւիրուէր երեւելի անձնաւորութիւններու տունները եւ հոն կ'երգէինք մեր երգացանկէն կտորներ: Այդ նշանաւոր անձերէն էին Մարտիրոս Սարեան, Հրաչեայ Ներսիսեան, Խորէն Աբրահամեան, Գրիգոր Խանճեան ...ամոնք անկեղծօրէն կը գնահատէին մեր կատարումները»²: Վահրամ Փափագեանի դրդումով ան կ'որոշէ մտնել Երեւանի ժողովրդական երաժշտանոցը: Հասած ենք 1963 թուականը. Դելլալեան 26 տարեկան է, դեռ ոչինչ գիտէ երաժշտութենէն: Այս հաստատութիւնը երաժշտական ուսում կը մատակարարէր եւ հնարաւորութիւններ կ'ընծայէր օժտուած, սակայն երաժշտական կրթութիւն չունեցող տղոց, ինչպիսին էր Դելլալեան: Վերջինս կը դառնայ սանը անուանի երգահան եւ մանկավարժ Է. Միրզոյեանի եւ շուտով ձեռք կը բերէ հիմնական գիտելիքներ եւ կը սերտէ ստեղծագործութեան (երգագրութեան) հիմնատարերը: Կ'ըսուի թէ Դելլալեան եղած է ժողովրդական երաժշտանոցի պատմութեան «ամենադժուար» ուսանողը: Արդարեւ իր երաժշտական բացառիկ օժտուածութիւնը եւ ստեղծագործելու ներքին յախուռն փափաքը մէկ կողմէն, մասնագիտական գիտելիքներու պակասն ու անփորձութիւնը միւս կողմէն չափազանց բարդ կացութեան մատնած էին թէ՛ ուսանողը, թէ՛ դասախոսները: Չմոռանանք յիշեցնելու, որ ապագայ մեծ երգահանը, այս մղձաւանջին մէջ, կը շարունակէ ծանր ու հիւժոճ աշխատանքը գործատուներէ ներս, իսկ ընտանիքի հոգը շատ ջանքեր եւ ժամանակ կը խլէր իրմէ: Այս շրջանի իր գործերէն մէկը կը կոչուի «Երազ» ձայնի, կիթառի եւ ձեռնադաշնակի (աքորտէոն) համար»:

Ժողովրդական երաժշտանոցը հազիւ աւարտած Դելլալեան կ'ընդունուի Ռոմ. Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանը եւ կը յաճախէ Էտուարդ Պադախանեանի յօրինումի դասարանը: Հոն եւս իւրացումներն եւ ուսման յառաջադաշնը կ'ըլլան աննախադէպ, իսկ ստեղծագործական առաջին քայլերը՝ անելի քան խոստումնալից, «իսկ աշխատանքը հաստոցի գործարանում՝ երաժշտի լսողութե-

ան համար անտանելի մղձաւանջային աղմուկի մէջ, շարունակւում էր», կը վկայէ Թամար Յովհաննիսեան, «այստեղ Յարութիւնի ներկայութիւնը անհրաժեշտ էր. առանց նրա հմտացած ձեռքերով պատրաստուած արտադրական մանրամասի կը կանգնէր աշխատանքի խիստ կանոնաւորուած ընթացքը»³:

1972, Սեպտեմբեր 1–ին Յ. Դեղլալեան ի վերջոյ կը մտնէ իր այնքան երազած ու փայփայած Երեւանի խստապահանջ Կոմիտասի անուան երաժշտանոցէն ներս: Ան 35 տարեկան է, ամուսնացած է եւ հայր երկու դուստրերու: Եւ սակայն «... ես սովորում էի իմ կէս տարիքը ունեցող ուսանողների հետ, 17 կամ 18 տարու երիտասարդներ, որոնք աւարտած էին բնականոն պայմանների մէջ Ռ. Մելիքեանի անուան կամ Չայքովսկու անուան Երեւանի ուսումնարանները: Ես ինքս շատ վատ էի զգում. բոլորից գաղտնի էի պահում, որ ես ամուսնացած եմ ... Իմ առաջին երգերից մէկը, որուն անունը չեմ յիշում, չէի կարողացել գրանցել. այդ ժամանակ ժողովրդական կոմսերվատորիայում էի եւ յիշում եմ ինչպէս Նորա անունով մի աղջիկ ինձ օգնեց. ես կիթառը վերցրի, երկու տընկ–տընկ, երգեցի եւ այդ աղջիկը գրի առաւ այդ երգը, որը անմիջապէս շատ սիրուեց եւ տարածուեց ...»⁴: Ժողովրդական երաժշտանոցի իբրեւ աւարտաճառ ան կը գրէ սրինգի եւ դաշնակի սոնատը մը: «Կարելի է ըսել», կը շարունակէ Դեղլալեան, «որ այդ սոնատը իմ առաջին գործն է»:

1988 Յուլիսին տեղի ունեցած վերոյիշեալ հարցազրոյցին մէջ Դեղլալեան կ'արտայայտուի իբրեւ հեղինակը «մօտաւորապէս» 25 գործերու: Ըսինք, որ վերջին երկը, *Լիլիթ* բեմախաղը, սկսուած այդ թուականին՝ անաւարտ պիտի մնար, իսկ *Յին Աստուածներու* թատերախաղը՝ լոկ ծրագիր եւ իղձ... 53 տարեկանին, ուժեղ ստեղծագործական երկունքներու յորձանքին անձնատուր, երբ կը մահանար, Դեղլալեան գրեթէ անծանօթ մըն էր Յայաստանի մէջ (բացի իբրեւ ուսուցիչ, եւ որպէս այդ՝ չափազանց յարգուած իր սաներէն), եւ սակայն այդ 20–25–ի սահմաններուն սակաւաթիւ երկերու ընդմէջէն, որոնց կարգին երեք սիմֆոնիաներ, արտակարգ *Topos*–ն, *Նուիրում Կոմիտասի* կոթողական սոնատը, *Մահ* սիմֆոնիկ պոէման, *Հաղթական Ռէքվիէմ*ը, ան կը հանդիսանայ արդի երաժշտական բարդ թեքնիքներու սխրանքներով եւ անմախատեսելի գիւտերով հարուստ, միաժամանակ հայ հոգիին մէջ թաթխուած ու անկէ տառապանքի ճիչեր եւ փայլակներ, սարսռացուցիչ ահազանգեր հնչեցնող անմնան ստեղծագործը:

Ազնուակերտ, մեղմասիրտ, գորովագութ, ծառայասէր տեսանելի մարդու կերպարին կը հակադրուէր հեղինակի անկանխատեսելի ներաշխարհը (քիչ մը Վահէ Օշականին նման), մշտական հրաքիսային ցնցումներու եւ պոռթկումներու թատերավայր՝ ուրկէ կը բոցավառէր անընդիատ յեղափոխութիւն ապրող եւ ընդմիշտ ըմբոստութեան յաճախանքին ենթակայ ստեղծագործողը: Ապրիլ 24–ի թաթը չէ՞ միթէ, որ կը հրահրէր անդադար իր հոգիին կայծերը: Ան այն քիչերէն է, որոնք վերջնականապէս խզեցին իրենց կապերը թէ՛ ռուսական Կլինքա–Չայքովսկի–Ռախմանինով երրեակի դասական դպրոցին հետ, թէ՛ ձերբազատուեցան Խորհրդային շրջանի

պարտաւորիչ եւ պայմանադրական՝ «պրոլետար» լաւատեսութիւնը հեւ ի հեւ պանծացնելու ծառայող կեդրոնախոյս, պոռոտաբանութիւն բուրոդ դրոյթէն: Ահա վերջապէս մէկը, որուն առանցքը եղաւ Կոմիտաս–Եղեռն (1915) – արդիականութիւն երթողին: Հոն այլեւս կարելի չէ զուարճանալ ենթարկուելով կրաւորական, իգամերձ մեղեդիներով ծանրացած, ենթակայածիգ թոյլատու ոճին, այլ ներապրումներու եւ վերապրումներու մոլորակները շանթահարիչ ուժգնութեամբ պայթեցնող անտարագելի ոճ մըն է իրենը, որ կը բնորոշուի իր բացարձակ անկեղծութեամբ եւ խորխտ ազատութեամբ:

Դելլալեանի կարեւորագոյն երկերէն առ նուազն երեքը զինք անմահութեան պատուանդանին կանգնեցուցին եւ այդ՝ շնորհիւ երեք սփռնաբաշտ մուրեալ երաժիշտներու ջանքերուն: Անոնց հանդէպ Դելլալեան յավերժ երախտապարտ գտնուեցաւ եւ զանոնք որակեց իր կնքահայրերը: Ան դաշնակահար Արթուր Փափագեանին կը պարտի *Նուիրում Կոմիտասի* դաշնակի (եւ ձայնի) սոնատին (1982) փառաւոր Ա. կատարումը Երեւանի մէջ. խմբավար Արամ Ղարաբեկեանին՝ *Topophonon*–ն համաշխարհային Ա. ներկայացումը Պոսթընի մէջ (1986), իսկ ամերիկահայ երգեհոնահար Պերճ Ժամկոչեանին՝ իր *Յաղթական Հոգեհանգիստ* (Ռէքվիէմ)ը երգեհոնի համար (1984): Այս *Յաղթական Ռէքվիէմի* Երեւանի կատարումը տեղի պիտի ունենար 1990 Ապրիլ 25–ին Պ. Ժամկոչեանի կողմէ, որուն մուրիուած է այս գործը. հեղինակը հիւանդ է եւ հիւանդանոց փոխադրուած է դարմանումի համար. շրջապատուած իր անմիջական հարազատներով, ամեն ոք սրտատրոփ կը սպասէ, որ երգահանը նուագագոյն կազդուրման նշաններ ցոյց տայ որպէսզի, մոյնիսկ անհանգիստ վիճակով, կարենայ գէթ վերջապէս լսել իր յորինումը առաջին անգամ ըլլալով: Այս գործը արդէն շրջած էր, Ժամկոչեանի մեկնաբանութեամբ, աշխարհի շարք մը մայրաքաղաքներու մէջ եւ բարձրացուցած անզուսպ ոգեւորութիւն եւ աներկբայ գնահատանք: Դելլալեաններու ուրախութիւնը չափ ու սահման չունի: Ապրիլ 15–ին լավատեսութիւնը իր բարձրագոյն կէտին վրայ կը գտնուի: Բայց Ապրիլ 17–ին սիրտը կը վատթարանայ, եւ հիվանդին թոյլ չեն տար, որ անկողնէն ելլէ: Լավատեսութիւնը կը փոխակերպուի ծանր յուսահատութեան եւ որոշում կը գոյանայ որ զոնէ իր կողակիցը, Հերմինէն ներկայ ըլլայ մենահամերգին. բայց, կը պատմէ Հերմինէն, «Աստուած ա՛յս էլ շատ տեսաւ...»: Ապրիլ 22–ի գիշերը կացութիւնը անյոյս է եւ 23–ի առաւօտեան սիրտը կը դադրի բաբախելէ: Համերգը, 25 Ապրիլին, տեղի կ'ունենայ հեղինակին թաղման օրը...

Յաղթական հոգեհանգիստը կը վերածուի սուգի հոգեհանգիստի, կարծես զայն գրած ըլլար իր յուղարկաւորութեան համար: Դելլալեանը՝ Ապրիլ 24–ի ուշացած զոհերէ՞ն. կրնայ ըլլալ. չէ՞ որ «Աստծու ծաղրն է աշխարհն ալ արդէն»: Ինչպէ՞ս կրնայ հոգեհանգիստը «յաղթական» ըլլալ: Հարցը, մահէն անդին շնորհուած, վերջնականացած, հանգիստին չի՞ վերաբերիր արդեօք: Լսենք երգեհոնին պատգամը – ահա խուլ հռնդիւն մը, որ կը ծագի պերճ նուագարանին խորերէն, բամբ,

ճնշիչ, միաշառուիղ, կարծես անծանօթ մոլորակի մը կեդրոնէն ձգուած ըլլայ: Անգոյութեան թէ սկզբնական խաւարի տիրապետութիւնն է: Քիչ ետք այդ մէկ հատիկ թաւ ծայնի խորքին վրայ կը հակի խոկացող միտքը. չորցած արցունքներու բովէն կը հեւայ ամանուն աղօթք մը, որ կը հիւսուի ինքն իր վրայ եւ տակաւ կը ծուլուի երկինքէն փոխ առնուած «ապրիլեան» մրմունջի մը մէջ: Լռութիւնը խաւարի տիրապետութենէն կը զատորոշուի եւ կ'ոռնայ իր գոյութիւնը. Ցաւն ու Տանջանքն են, որ կ'ապրին իրենց երկունքը Լռութեան ծոցին մէջ: Յանկարծ լռութիւնը կը պայթի ... Մենք կը լսենք երկար հոսքը՝ բռնուած, դնչակալուած ծայներու, քլոսթրոններով շանթահար, որ կը հասնի մեզի եւ կը բռնէ մեր կոկորդէն:

Ռէքվիէմը յաղթական ... հոգեհանգիստ՝ իրենց հանգիստը չգտած հոգիներու: Ապրիլ 24 է: Արարատը սուգի մէջ է, եւ սակայն իր ամեհի անշարժութեամբ արեւացած, մեր դիմաց, մեր վերեւ, մեր մէջէն, ան, Արարատը, մեզի կը յիշեցնէ, պիտի յիշեցնէ մշտնջենապէս, թէ մահը պարտուած է: Ահա այդպէս է, որ հոգիներու հանգիստը յաղթանակ կը պարզէ: *Յաղթական Ռէքվիէմ*, բոլոր մը սեւ արեւ պարտուած մահուան իբրեւ պատանք:

Իմ առաջին ծանօթութիւնս Պելլաբեան մոլորակին հետ տեղի ունեցաւ 1986-ի Նոյեմբեր 16-ին: Այդ կիրակի երեկոյեան Լոս Անճէլըսի Music Center-ի մէջ, ծովածաւալ երաժշտասերներու ներկայութեան, ելոյթ պիտի ունենար պոսթըմաբնակ Արամ Ղարաբէկեան իր «Սիմֆոնովա» լարային նուագախումբին գլուխը անցած: Պիտի կատարուէին չորս կտորներ սենեկային նուագախումբի համար գրուած, որոնց երկուքին հեղինակները հայ էին: Այդ կատարումները յայտագրուած երկերուն Արեւմտեան ափի առաջին ունկնդրութիւններն էին: Է. Միրզոյեանի համբաւաւոր *Տիմբաւի* Սիմֆոնիային ծանօթ էի, բայց Յարութիւն Պելլաբեան անունը բնաւ չէի լսած: Ներկայացուելիք գործը կը կոչուէր Topophono: Topophono-ն ունէր անսովոր կառոյց եւ արտակարգ կազմութիւն. լարային-սենեկային նուագախումբին կը միանային դաշնակը (դաշնակահարն էր Աւօ Գույումճեանը) եւ գալարափողը (Ֆրէնչ Զօրն): Կատարումի ընթացքին պիտի լսուէր (արտասանութիւն) Վ. Տէրեանէն քերթուած մը – Աշուն է՝ անծրել / ստուերներն անծել / դողում են դանդաղ / պաղ, միապաղաղ: Նուագահանդէսը կազմակերպած էր «Հայ ամերիկեան թատերաերաժշտական ընկերակցութեան» նախագահ Վիկտոր Մարտիրոսեան: Խմբավարը գործին քաջածանօթ էր. Պոսթընի մէջ կատարուած էր, նոյն դերակատարներով, այս գործին Ա. ունկնդրութիւնը՝ նոյն տարուայ Փետրուար 28-ին (դաշնակահարը՝ Արթուր Փափազեան):

Այդ գիշեր Topophono-ն թողուց ցնցիչ տպաւորութիւն: Հեղինակին հետ չկրցայ ծանօթանալ:

Topophono-ն հեղինակին ամենէն իւրայատուկ եւ ինքնադրոշմ ստեղծագործութիւններէն է: Հոն կարելի չէ նշմարել իր ուսուցիչներուն՝ Է. Միրզոյեանի կամ Է. Պաղտասարեանի ստուերը, ոչ ալ Արամ Խաչատուրեանին հովանին կը վայելէ:

Անոր պայմանաձեւ – նախատիպարները (մօտէլ) արդի եւ գերարդի երաժշտութեան արդէն դասականացած հսկաներն են՝ Շնիթքե, Տէնիգով, Փէնտէրեցքի, Այվզ, Վարեզ, ... որոնք ան ուսումնասիրած է գրեթէ իր ուսուցիչներէն գաղտնի եւ անցուցած իր հոգեմտաշխարհի պրիսմայէն, ինչպէս, միւս կողմէ, Կոմիտասը եւ աւանդական երգն ու պարը: Ահա հոս է հրաշքը: Ի՞նչպէս կարելի է այս երկու գերօայրայեղ աշխարհները հաշտեցնել, կարելի՞ է ի մի ձուլել հայրենի արեւն ու արեւմտեան մետաղեայ բանականութիւնը, մէկ գրչի տակ հնագանդեցնել ակնբախ անհամատեղելիութիւնները, ինչպէս Սասունցի Դաւիթի մոզական ցուպին ենթարկուող «գառնուկը» (հայ երգը) եւ «գայլը» (Արեւմտեան երգագրութային բարդ ոլորտները): Այս գործը իրմէ խնդրած էր Արամ Դարաբէկեան: «Սինֆոնովա» նուագախումբին ղեկավարը Carnegie Hall-ի մէջ լսած էր *Նուիրում Կոմիտասի* Սոնատը. զմայլած այս կտորին անստգիւտ գեղեցկութենէն՝ փափագ յայտնած էր, Պոսթընէն ուղարկուած յատուկ նամակով (1985), որ Դելլաւեան իր գրիչով պատուած ըլլար «Սինֆոնովա»-ն: Կը խոստանար գրուելիք կտորին համաշխարհային առաջին կատարումը հրապարակել Պոսթընի մէջ՝ իր ղեկավարութեան ներքեւ: Այս առաջարկը մեծ ազդեցութիւն ունեցած էր համեստութեան մարմնացումը եղող հեղինակին վրայ. լրջօրէն պարտաւորեցնող խօստում էր եւ մեծ պատիւ: Այս խնդիրքը իրագործելու վճռականութեամբ ան կը մեկնի Դիլիջան, ուր եւ կը յորինէ Topophobia-ն:

Առաջին եւ երկրորդ ջութակները նստած են կիսաբոլորականձեւ. առաջին շարքի վրայ, խմբավարին դիմաց, կը գտնուին ջութերը (վիոլա). ջութակներուն եւ ջութերուն միջեւ՝ թաւջութակները. թաւջութերը (տապլ պաս)՝ բեմին խորքն են: Դաշնակը դրուած է խմբավարին աջ կողմը, շրջանակէն դուրս: Ո՞ր է գալարափողը ... Կը տիրէ քար լռութիւն: Խմբավարը արձանացած է: Ցանկացած լռութիւնը կը ճեղքուի հեռուն (անտեսանելի) եկող փողին միայնակ կանչով, վշտահար եւ մեղամաղծոտ, հազիւ գծագրուող յուշանուագ՝ Կոմիտասի ոգին յուշող եւ «կար ու չկար» թախծոտ հէքեաթ մը սկսելով ... ինչպէս պիտի գիտնայինք յետագային, Դելլաւեան իւրաքանչիւր ստեղծագործութեան մէջ, հոս եւս, կը ծաւալէ խոհախմաստասիրական խորհուրդ: Միայնակ գալարափողը կը խորհրդանշէ լեռներու մէջ իր անցեալը վերապրող ծերունի Զայը՝ հին օրեր, կցկտուր յուշեր, տխուր ծառեր, վար ու ցանքի պատկերներ... Գալարափողի այս հեռաւոր (բեմին ետեւէն եկող) կադկանձին յանկարծ կը հակադարձեն, ուժգին զարկերով, դաշնակէն ժայթքող բամբ որոտներ (թաւ լարերուն վրայ մէկ ձայն իր ութեակով, հաւասար հեռաւորութեամբ հնչող). այս ահեղ ղօղանջը, ծանր զանգերու նմանակ, ահագանգ է՝ Եղեռնի սոսկումէն չարաքաստիկ յուշեր վերակոչող: Գալարափող եւ դաշնակ երեք անգամ իրարու կը բախին եւ այսպէս, մէկը միւսին հակադրուելով, կտորին սկիզբը կը ձեւաւորեն, ինչպէս միեւնոյն կեանքով ապրող հուժկու հակաբեւեռներ, միւսն ու անմիջականը, միեւնոյն էակին էութեան մէջ միաժամանակ կը բնակին մշտնջենական պայքարով եւ անքակտելի ամբողջականութեամբ: Այնուհետեւ դաշնակին ամբողջ ստեղնա-

շարին վրայ կը փայլատակէ «ճարճատին» մը, որ պատռուածք մը կը գոյացնէ իրար խաչաձեւող, միաժամանակ իրարու լրացուցիչ վերոյիշեալ հակասութիւններու միջեւ: Դեկլաբեանի սոյն գործը անվերջ կը բաբախէ, հրաբխային մոլորակներու նման, միայնակ (մէկ նոթայով գոյացած) ձայներու պայթիւններով, որոնք եռեւեփ եկող ձայնային լաւաներով կը զալարուին եւ իրենց հեւքին մէջ կ'առնեն մեր ողջ էութիւնը: Այս կարգի մութ ու լոյս նախազգացումներն ու յանկարծ փոթորկող սարսափները կը լեռնանան ու կը պայթին ահեղ քրէշչէնտոյի վրայ: Այնուհետեւ արեւը կը ծագի սօլօ ջութակի պայծառ զարթումով (կոմիտասեան բներգ): Այս երկակենցաղ երաժշտական բջիջները իրարու կ'ընդելուզուին եւ կը զարգանան զուգահեռաբար: Շատ ներթափանցող է, երկրորդ մասէն առաջ, երկարատեւ թրթռացող ջութակներու ընկերակցութեամբ, դաշնակին լուսաթափանց հծծիւնը, ափսոս, շատ կարճ՝ ներսի լարերուն վրայ մատներով տաւաղահարուած եւ, անոր հակազդող, նոյն լարերուն (բամբ կողմը) տրուած ափի դոփիւնները, որոնց երկարածոցող արծագանգը կը գուժէ մօտալուտ աղէտներ ...

Topophono-ի երկրորդ մասը (առանց ընդմիջումի) յաճախանքներու եւ բանդագուշանքներու վախազդու շարք մըն է. երկու անգամ յայտնուող քոչարիներու միջեւ, որոնք մահապարերու վերածուած ըլլալ կը թուին իրենց շրջուն կրկնութիւններով, կոմիտասեան պայծառութիւնը կրկին կը ցոլայ: Հոս կը լսենք մէջբերում մը՝ Շոփէնի «Մահերգ»ը: Շոփէնի ծանօթ մահերգը կը խորհրդանշէ համամարդկային եւ համատարած մահուան ուրուականը՝ մարդ արարածին ողբերգութիւնը ընդգծող: Հոս է, որ կը լսուին Վ. Տերեանի վերոյիշեալ տողերը, կարծես կեանքին ինքնին փաստ մըն է, որ մարդ դատապարտուած է ապրելով տառապելու եւ տառապելով ապրելու այս մոլոր մոլորակին վրայ: Յանկարծ կրկին կը լսենք, տագնապայարոյց ձայներու վրայ, դաշնակէն փրթած “անյատակ” պատռուածքը: Վերջին անգամ գալարափողը կ'ոռնայ իր վիշտը մէկ նոթայի եմթահողին վրայ՝ անանուն, սեւ եւ խոր վիրապի («ունայնութեան փոսը») մը առաջնորդելով մեզ:

Ի՞նչպէս չմտածել այս գործին ունկնդրութենէն ետք, Փէնտրէքցիի «Հիրոշիմայի զոհերուն» նուիրուած «Թրենա»-ին (THRENE) մասին, նոյն «օրհասական անհաշտութիւններու» բախումներն են, նոյն ահազանգ-մահերգանքներու սպառնալիքը: Սակայն կը խորհիմ թէ Յ. Դեկլաբեանի Topophono-ն աւելի «մարդկային» է՝ իր փիլիսոփայական խորքով եւ կոմիտասեան զուլալ ներկայութեամբ, մինչ լեհ հեղինակին յոռետեսութեան դժոխային ուժգնութիւնը կը խորհրդանշէ Համաշխարհային երկրորդ պատերազմին աղէտը եւ Հիրոշիմայի հարուածը:

Յ. Դեկլաբեանի Topophono-ն արժանացած է Գալիֆորնիոյ Շարժանկարի եւ Պատկերասփիւռի Խորհուրդի «Ոսկէ փառապսակ»-ին եւ «Super Star» վկայականի:

Topophono-ն միակ ստեղծագործութիւնը չէ, որուն ընդերքներէն կ'արտացոլուի Դեկլաբեանի ողջ ներաշխարհային դիմագիծը: Եթէ Topophono-ն հեղինակին

էաբանական կորիզին մէկ երեսն է, այսինքն կեանքի հակասական երեւոյթներու խոհափիլիսոփայական բախումը կը բնութագրէ երաժշտականօրէն, էաբանական միւս կորիզը կը կազմէ *Նուիրում Կոմիտասին* սոնատը: Հոս է, որ զմայլելի գեղեցկութեամբ կ'երաժշտաւորուին, ձեռք ձեռքի տուած, հոգիին անբեկանելի երազը եւ հեղինակին գաղտնի կեանքը:

Այս 12 վայրկեան տեւող եւ երկու մասերէ բաղկացած սոնատը գրուած է 1982–ին: Առաջին կատարումը տեղի ունեցած է Երեւանի մէջ դաշնակահար Արթուր Փափագեանի կողմէ, 1983 Ապրիլ 23–ին. կրկին խորհրդաւոր զուգահիւսութիւն ... Այդ Ապրիլ 23–ը հեղինակին մահուան օրը պիտի ըլլար ուղիղ եօթ տարիներ ետք:

Եթէ Topophono–ի ունկնդրութեան ընթացքին բոլոր զգացումներու իրարանցումին ենթակայ ենք, աղաղակելու կամ խենթեմալու պատրաստ, հոս, արտայայտապաշտ փոթորիկներու փոխարէն, ներաշխարհէդ կը ծագի խորասուզուելու բուռն բաղձանք եւ յուզումնասարսուռ դող մը կը շարունակէ մէջէդ «երգել» «Նարոյի» հծծիւնները՝ «Անլռելի Զանգակատունի» խորանէն, եւ դեռ չես ուզեր արթննալ այս դիւթիջ երազէդ... Իրաւամբ, *Նուիրում Կոմիտասին* սոնատը հիւսուած է Պարոյր Սեւակի մագնիսացնող վերոյիշեալ պոէմին խորը ըմբռնումին թելադրանքով. Սեւակի անմար դողանքները կը միանան Դելլալեանի սրտին մէջ ընդմիշտ բնակող կոմիտասեան անջրպետին: Կոմիտաս ոչ միայն ներկայ է իբրեւ մոգական արեւագալ, որուն ընդմէջէն կը մաւարկես դէպի բիրեղացած հայու ոգին, այլեւ սոյն սոնատին մէկ մասը «Անտունի»ի ոսկէ թելերով է հիւսուած եւ կտորը անդիմադրելի, սակայն մեղմ ու զուլալ խռովքի մէջ կը ձգէ մեզ. հոս է, որ ծայրը, դաշնակահարին կողմէ մրմռացող «Նարոյը», կու գայ գրկելու նոյն դաշնակահարին մատներէն միաժամանակ ծորող մահերգը եւ նուագարանին ներսի լարերէն հոսող, տաւաղահարուող մրմունջները (այս գրելաձեւը գործածուած է նաեւ Topophono–ին մէջ): Հայ երգին, «Նարոյի», մրմունջները (չորս նոթա, բայց ինչ վսեմ մեղեդի) վստահիլ նուագողին՝ գիւտ է, հազիւ լսելի, ուրուականային եւ անկանխատեսելի գեղեցկութիւն, որուն հմայքը շնչահեղձ կ'ընէ մեզ եւ չի մարի կտորին ծայնական աւարտէն վերջ իսկ:

Վերոյիշեալ ծայնա–նուագային հատուածը կը գտնուի կտորի վերջաւորութեան, սակայն սոնատին երկրորդ մասը կը սկսի առնական, Սասնոյ պարերէն մէկը յիշեցնող, կշռոյթով: Հոս հեղինակը վերակոչել կ'ուզէ մեր աւանդական կեանքի պատկերներէն մին, նման Բ. Կանաչեանի «Նանորին»։ Խորհրդապաշտական սրբազան հաղորդութեան վերակոչումին կը յաջորդեն հայկական պարն ու խրախճանքը: Հոս պարի խորհրդանշանը կայ միայն, խնճոյքը չկայ ընդհակառակն, «Նարո»ի երգային երեւոյթը, հեղինակին տուած բացատրութեամբ, մեզի կը յայտնէ պանդխտութեան մեկնած միմուճար, մենակեաց, մեկուսացած, ծով թախծներու գիրկը ինկած, տունէ եւ հարազատ զրկուած հայ տղուն տառապանքը: Այս կսկծաւի, բայց հարազատ պատկերը տալու համար, Դելլալեան չի մխրճուիր ոճային բռնազբօսիկ բարդութիւններու մէջ. արդի երաժշտութեան բարդ կառոյցները զինք

չեն կալանաւորած, այլ, ինչպէս տեսանք նախորդ գործի քննութեան ընթացքին, այդ նոր արտայայտչական կերպարը օգտագործուած են նուրբ ճաշակով, ճարտար եւ զուսպ երգագրութային խաղերով եւ հաւաստիքն են խոր ճանաչողութեան: Օրինակ, մատներով դաշնակին ներսի լարերուն վրայ տաւաղահարումը կամ ափով թմբկահարումը կատարուած են լուսամիտ գիտակցութեամբ. առաջինը ստեղծած է պատկերը զեփիւռին թեթեւ չմշկումին խոնաւ մակերեսներու վրայ, իսկ ափով նոյն լարերուն տրուած հարուածները՝ եղերերգական մթնոլորտ կամ խորհրդաւոր անկում կը մշեն, միշտ զոյգ իմաստներով, մէկ կողմէն բնութենէն քաղուած պատկերը, միւս կողմէ՝ ներաշխարհային համապատասխան դրոյթներու դրսեւորումը: Դելլաւեան այս եւ այլազան ճարտարագիտական հնարքներու շնորհիւ կարողացած է ստեղծել, մեծ ստեղծագործներու յատուկ, մագնիսական դաշտեր, որոնց կ'ենթարկուինք անզգայաբար եւ սիրով, եւ որոնց ներգործութեամբ մեր մագնիսական տարրերը կը վերադասաւորուին գործին տրամադրութեան համեմատ, մինչեւ կտորին վերջը եւ անկէ ալ անդին եւ, այսպէս կ'ապրինք չափազանց հարազատ, նաեւ առեղծուածային ու յեղաշրջիչ, երաժշտական գոյացումը հայ հոգեմտաւոր բնաշխարհին:

Յեղիմակէն մեզի ժառանգ մնացած տետրակին մէջ արձանագրուած յուշերէն կը քաղենք. «Նուիրում Կոմիտասին դաշնամուրի եւ ծայնի սոնատում, ըստ իս, Կոմիտասը իմաստաւորում է որպէս հայկական ոգու եղերական տուայտանքների հաւաքական կերպար. եւ միաժամանակ այդ սոնատը երաժշտական յուշարձան է Մեծ Եղեռնի զոհերին: Երբ ինքը եւ կատարում այդ, ինչ յուզումներով եւ տոգորում...»: Արդարեւ, 1986-ի Դեկտեմբերին Լոս Անճելէսի «Յոլիվուտ» պանդոկի մէջ, ի պատիւ իրեն կազմակերպուած հանդիսութեան ընթացքին կը հրաւիրուի իր «խօսքը» ըսելու: Հոն, Դելլաւեան կը նուագէ (եւ կ'երգէ) իր այս եզակի գործը: «Բարձրացնում եմ ձեռքերս՝ դահլիճը լռում է: Այս գործը՝ Նուիրում Կոմիտասին, սկզբից կանգնած եմ նուագում, դաշնամուրի լարերի վրայ: Կոկորդս կրկին խեղդում է կծիկ դարձած կարօտի զգացումը, որն առկայ է սոնատիս դաշնութիւններում: ... Նարոյ, մարոյ, մարոյ ջան. պանդոկիստ տղան յիշում է հանդում քաղհան անող իր եարին»⁵: Ուրիշ տեղ, հեղինակը իր այս գործին մասին արտայայտուելով կ'ըսէ. «...սկզբնահատուածի հնչողութիւնը յիշեցնում է այգաբացին պղնձացած ժայռերից բարձրացած գոլորշիի շղարշ եւ մեղմ փչող զեփիւռ ..., որ սակայն շուտով վեր է ածուելու փոթորկի: Դա, ասես, Կոմիտասի խռովայոյզ հոգին է...»⁶: Հեղինակ-կատարողը կը հասնի ինքնաարարման եւ ինքնաարարումը հեղինակ – կատարողէն փութով կը հասնի՝ գործին ներգործութեամբ վերածնած, քար լռութեան մէջ անէացած ունկնդիրներին: Այս կարգի հրաշք շատ չի պատահիր արդի երաժիշտներու արդի ստեղծագործութիւններուն ունկնդրութեան ընթացքին: Այս գերագոյն փաստն է, որ երկը կը շնչէ, կ'ապրի ու կ'ապրեցնէ, եւ չէ թէքնիկական խաղ՝ հազիւ բանականութիւնը զարդարող:

Վերջին անգամ այս սոնատը լսեցինք Լոս Անճելեսի մէջ, 1988-ի Փետրուար 19-ին: Լիզպոնէն հրաւիրուած էր «Դելլաւեան Եռեակ»-ը. եռեակին անդամներն էին դաշնակահար Մարինա եւ ջութակահար Նարինէ Դելլաւեանները, Յարութին Դելլաւեանի դուստրերը, եւ թաւջութակահար Լեւոն Մուրատեան՝ Հայրիկ Մուրատեանի թոռը: Այս համերգն ալ կազմակերպած էր Վ. Մարտիրոսեանի «Հայ-ամերիկեան թատերա-երաժշտական ընկերակցութիւնը»: Այդ օր Մարինան մեզի կը հրամցնէ «Կոմիտասի բառամբերքով» հիւսուած եւ «Տօ՛ւած տնակեր»-ի արեան կաթիլներով կենդանացած» այս նոյն սոնաթը: Մարինան, իր անմահ հօր յիշատակով թաթխուած, հազիւ կը յաջողի զսպել իր լեռնացած յուզումը եւ ունկնդրութիւնը վերջ կը գտնէ առանց «Նարոյի» երգասացութեան ... Մարինան չէր կրցած երգել եւ զսպութեամբ նախընտրած էր կտորը աւարտել անսայթաք: Իր ալեկոծ սրտի խորերէն մենք լսեցինք իր հօր լուռ ներկայութիւնը փոխան «Նարոյի» չորս նոթաներուն:

Հոս քննարկուած երկու գլխաւոր գործերէն ետք, որոնք ամբողջականօրէն կը ներկայացնեն հեղինակը, պետք չէ կարծել, որ Յ. Դելլաւեանի միւս կտորները կարելի է երկրորդական համարել. պարզապէս հոս տեղը չէ բոլոր գործերը նկատի ունենալ: Անոնցմէ են, ի միջի այլոց, երեք սիմֆոնիաները, որոնք, ցաւ ի սիրտ, ցարդ մատչելի չեն, ինչպէս նաեւ երգային-երգչախմբային ստեղծագործութիւններէն ոմանք, ինչպէս *Փեփուշ* մանկական օփերան (1975), *Երբ իջնում է մթնշաղը* վոկալ շարք կանացի բարձր ձայնի համար (1984), *Լռութեան թուպէ* կանանց երգչախումբի համար (1986) եւ ուրիշներ:

Մեղիտացիաներ քլարինէթի եւ դաշնակի սոնատը (1981) բարդ ծաւալումներով զարգացած վերացական շաղախով գործ մըն է: Ան, ինչպէս իր միւս սոնատները (ջութակի եւ դաշնակի, թաւջութակի եւ դաշնակի, ...), «տարածական հնչողութիւն»ներով եւ շերտաւորումներով կը հոլովուի. հարուստ է երգագրութային հնարքներով եւ գիւտերով: Մահուան ու կեանքի «երկխօսութեամբ» ընթացող եւ կեանքի ու սիրոյ յաղթանակին յանգող այս հոգեվիճակները երաժշտական հնչիւն մտորումներ են: Կտորը դժուարամերձ ստեղծագործութիւն է զոյգ կատարողներուն համար: Հոն կան «հարց ու պատասխան» ելեւէջներ, կշռութամեղեդիական բանուածքը յաճախակի փոփոխութիւններով եւ դադարներու լռութիւններով համեմուած է: Ահա ուրիշ մը. *Medium* ֆակոթի (bassoon) համար (1984) գրութիւնը փաստ մըն է, որ հեղինակը եթէ ուզէ կրնայ գրել «Արեւմուտքի մտաւորականութիւնը գոհացնող» բարդ ստեղծագործութիւն: Հոն օգտագործուած են ֆակոթի ծայրագոյն հնարաւորութիւնները: Այդ է պատճառը, որ ամոր կատարումը հնարաւոր չէ եղած Երեւանի մէջ: Այս տասը վայրկեան տեւողութեամբ ծայր աստիճանի դժուարամերձ կտորը կատարուած է 1990-ի Փետրուարին Գերմանիոյ Հանովր քաղաքի միջազգային փառատօնի ընթացքին՝ ֆակոթահար Ֆոլկներ Թեսմանի կողմէ:

Ջրասոյգ արեւ դրամատիկ քանթաթա, կանացի բարձր ձայնի, երգչախումբի, ասնունքողի եւ սիմֆոնիկ նուագախմբի համար: Խօսք՝ Ա. Աւագեանի: Գրուած է

1988–ին: Հոս եւս լսելի են անագորոյն ծայներ, կացինահարուածներու նմանակ թմբկահարումներ, կրկին միայնակ, մերկ ծայնի անվերջանալի պրկումներ... Սովորանոյի անխօսերգութիւնը (վոքալիզ) լացող մայրն է՝ տարագրութեան ճանապարհին իր կորսնցուցած զաւակին վրայ:

Խորախորհուրդ երկ մըն է Մահ սիմֆոնիկ պոեման (1978), ներշնչուած Ա. Իսահակեանի համանուն գրութենէն: Համեմատաբար սկզբնական այս գործը առաւելապէս պատկերային է, ուր գրելածեւի խիստ հնարամիտ միջոցներով, հեղինակը ստեղծած է բազմամարմին Մահի կերպարներ՝ մերթ ծաղրող, չարախինդ, մերթ ահաբեկող՝ արտայայտուած «ճչացող» տարահնչիւն ուղղահայեաց դաշնեակներու (ագռռ) շարահիւսութեամբ: Կոթողերգութիւնն թէ մահնչիւնակերտում – մահի ամէնուրեքութիւն. մահաշունչ ճնշող զանգեր, մահասարսուռ լռութիւններ, մահաշրջիկ հիւծածանքներ՝ տրուած փայտա–պղնձեայ փչաւոր նուագարաններու շքեղ հիւսուածքներով, մահասփիւռ մթնոլորտ, մահաբեր ահազանգեր, մահախռով խուճապներ, եւ, հիմնականօրէն՝ մահատարած Նահատակները մեր 1915–ի Եղեռնի: «Ապրիլ 24–ը մշտավառ ներկայութիւն էր իր հոգիին մէջ: Ամէն երկի մէջ մի քանի կաթիլ ծորած է այդ կանթեղի իւղէն, Տէր–Ձօրի անապատներու անպարագիծ, բայց կիզիչ ու զանկացած լռութիւնը վերածուած է, իւրաքանչիւր գործի մէջ, խտացած վրէժի եւ ցասումի, արեան կանչի...» (Հերմինէ Դեկլարեան): Արդարեւ, ինչպէս բնորոշած ենք սկիզբը, իր ստեղծագործական երթուղիին առանցքը եղաւ, սկիզբէն իսկ, Կոմիտաս – Եղեռն – արդիականութիւն երրորդութիւնը, որուն հաւատարիմ մնաց մինչեւ իր վերջին շունչը:

Մեր ունկնդրած Մահ սիմֆոնիկ պոեման կատարուած է զմայլելիօրէն «Նովոսիբիրսկի ակադեմիական նուագախումբ»–ին կողմէ, խմբավար՝ Ա. Կաց:

Յարութիւն Դեկլարեան կը մարմնաւորէ ներքին անդուլ պայքարի երաժշտա–ողբերգական խմորումներու պայթուցիկ արտայայտութիւնը: Յ. Դեկլարեան իրեն վիճակուած սեւ ու դաժան ճակատագիրը վերածեց ստեղծագործական լուսեղէն աղբիւրի: Ան օրինակելի է իր անտեսանելի եւ յարատեւ վերելքով, որու ընթացքին, աննկուն կամքի եւ աննահանջ ճակատումի շնորհիւ, իր տեղը ապահովեց պատմութեան բեմին վրայ՝ նոր արժեքափեր ստեղծելով հայ ստեղծագործութեան երկնակամարին:

Բագին, ամսագիր գրականութեան եւ արուեստի
Թիւ 2 ԳԱՐՈՒՆ 2002 , Պէյրութ



ՀԵՐՄԻՆԵ ԴԵԼԼԱԼՅԱՆ*

Եվիրումի հնչյուններ

Այն երաժշտությունը,
որ հնչում է հոգուս մեջ,
երբեմն չի լռում...
երաժշտություն, որ գալիս է
ոչ միայն էությունը բնորոշող շայներից,
այլ կյանքի թողած
նսսվածքների ներկայությունից,
ենացող կրակից,
որ երբեմն չդադարեց այրվել
նրա հոգում...

Մ որ անդրադառնում եմ կյանքիս ապրած տարիներին՝ հետադարձ հայացք նետելով անցյալիս էջերին, հուշերս պատկերվում են սիրո և հավատարմության լուռ վկայությամբ, որոնք վերհիշում եմ անսահման սիրով ու կարոտով...

Սկսում եմ խորհել միատեղ ապրած 30 տարիների ուրախ և տխուր օրերը, փորձելով վերհուշերիս միջից ասելիքս դարձնել կենդանի հիշողություններ մի մարդու մասին, որը եղավ կյանքիս հավատարիմ ընկերը, ուղեցույցը, հենարանը՝ իր զուսպ խառնվածքով, գրավիչ հոգով և սիրով:

Հարություն Դելլալյան՝ կոմպոզիտոր, մանկավարժ, հայրենիքի նվիրյալ, ում կյանքը և ստեղծագործական ուղին եղան դժվարին, լեցուն պայքարով, խոչընդոտներով, սակայն եղավ վերելք, որը կերտեց բացառիկ տաղանդով, աստվածատուր շնորհով և կամքի ուժով:

Դելլալյանը կյանքի և ստեղծագործական բուռն ծաղկման շրջանում, 53 տարեկանում հեռացավ մեզնից, որպես լուսատու աստղ փայլելով հայ երաժշտության երկնականարում, թողնելով անջնջելի հետք:

Լինելով հոգով արի, հայացքներով լավատես, վստահելով իր ուժերին՝ առաջնորդվելով ներաշխարհի հարուստ ծայների բազմերանգ հնչյուններով, անտեսեց բոլոր դառնությունները՝ ամբողջովին նվիրվելով միմիայն իր նպատակային սուրբ գործին, իր գաղափարներին...

Ցանկանում եմ այսօր տխրություններս դնել մի կողմ և խոսել միայն դժվարին ճանապարհով անցած ու ծնունդ առած այն երևույթի մասին, որ արվեստի պատմության մեջ քիչ ենք հանդիպում:

Իմ հուշերում Դելլալյանը եղավ և մնաց որպես իսկական հայ մարդու վառ, օրինակելի կերպար՝ իր ապրած կյանքով, հայի ոգով թաթախված ստեղծագործություններով, ուր զգում ես անկեղծ հմայքով ստեղծագործողին՝ իր ինքնուրույն ոճային դրոշմով, իր էությունը արտահայտող երաժշտական հնչյուններով, որոնք եղել են միջոց ինքնաարտահայտության և ինքնահաստատման:

Ստեղծագործեց ընդամենը տասը տարի, գրավելով լայն լսարաններ, աշխարհի տարբեր բեմահարթակների վրա, հուզելով բազում ունկնդիրների սրտերը:

«Ժամանակակից երաժշտական երկ ստեղծել չի նշանակում շեղվել ազգայինից: Մտածելակերպը պետք է լինի ազգային, թեկուզև արդի գրեթե անհնար է չափազանց հմարքներով: Բովանդակությունը պետք է լինի հայկական»¹: Հարությունը մարդ էր հարուստ ներաշխարհով՝ տոգորված սիրով, կարոտով, երազանքներով: Ուներ տիեզերքի գաղտնիքները բացահայտելու ոգի, քնքուշ սիրտ, նպատակային ջիղ, բարի ժպիտ, արցունք: Օժտված էր գեղեցիկը ընկալելու բացառիկ ունակությամբ, սիրում էր բնությունը, հողը, հողից ելած առաջին բողբոջը և վերջապես կյանքը, լույսը, արևը՝ վառ ճառագայթներով:

Դեկլայմի ներաշխարհը հոգևոր հնչյունների գանձարան էր, ուր կար մանկուց բուն դրած առաքելական եկեղեցու շունչն ու հոգին: Պարզ թեմային կյանք էր տալիս, հավատարիմ մնալով ազգայինին՝ աշխարհին ներկայացնելով հայ երաժշտությունը արդի մտածողությամբ:

Մեր տան օդը, շունչը շատ երաժշտական էր: Ով լինում էր մեր տանը, հատկապես արվեստի մարդիկ, չէին ուզում հեռանալ, նստում էին մինչև ուշ գիշեր: Մեր տունն էլ փոքրիկ էր, սակայն շատ լուսավոր, ուր վառվում էին մեր կյանքի մոմերը՝ լուսավորելով շուրջը: Եվ այդ փոքրիկ տան պատերի ներսում ծնվում էին մի շարք ստեղծագործություններ, ուր կային նրա կյանքի ծխացող մոմերի շունչն ու հոգին, ուր կար մի կաթիլ յուղ իմ կյանքի մոմից, մի շիթ արև իմ արցունքներից վերածնած...

Հարությունի վերջին գործը Ավետիք Իսահակյանի *Լիլիթ* պատմվածքի մոտիվներով գրված բալետային երաժշտությունն է, որը մնաց անավարտ: Գրվեց միայն 32 էջ: Հիշում եմ, ինչպիսի ոգևորությամբ էր խոսում այն ավարտելու մասին: Կյանքի վերջին շրջանում տեսողությունը շատ էր վատացած: Ընկերները մեծ թղթերով նոտաթղթեր էին պատրաստել, սակայն դրանց վրա աշխատելն էլ էր դառնում անհնարին:

Մի օր սրտնեղած ասաց ինձ.

«Հոգիս լեցուն է *Լիլիթի* երաժշտությամբ, որը լսում եմ շարունակ: Երբ վերականգնվի տեսողությունս, երեք օրը բավարար է, որպեսզի գրի առնեմ այն...»:

Հարությունի փափագներից շատ ցանկալին Լևոն Շանթի *Հին աստվածներ* դրամայի հիման վրա երաժշտություն գրելն էր, որը, ցավոք, նույնպես չհասցրեց իրականացնել: Խորհրդային կարգերի գաղափարախոսությանը չհամապատասխանելու պատճառով անընդհատ արգելքներ էին առաջացնում այն իրագործելուն: Սակայն, միևնույնն է, Դեկլայմը կվերադառնար այդ թեմային, քանզի խոսում էր վերապրելով, այրվելով հոգում կուտակվող և մշակվող երաժշտության հնչյուններից, մի օր գրելու և լսելու տենչով, եթե անողոք մահն այդքան շուտ չայցելեր...

Մենք հաճախ էինք միասին այցելում Պանթեոն, ծաղիկներ դնելով արվեստի նվիրյալների շիրիմներին և ամեն անգամ Հարությունը, մոտենալով Կոմիտասի հուշարձանին, շոյում էր ձեռքերը՝ իր ընտրած դժվարին ուղու համար օգնություն խնդրելով Մեծն Կոմիտասից:

Շատ անգամ Ղեկավարի ստեղծագործությունները հնչել են համերգների, կոմպոզիտորների միության համագումարների ժամանակ: Սակայն 1983-ի ապրիլի 23-ը հիշողությանս մեջ այն անցնեցելի օրն է, որ եղավ մեր կյանքի հիշատակելի էջերից, ուր տեսա և զգացի գեղեցիկի և ճշմարիտի արժանավայել գնահատումը:

Այդ օրը, Երևանում, Կոմիտասի անվան կամերային տանը Շումանի, Դեբյուսիի կողքին առաջին անգամ պետք է հնչեր Հարությունի *Նվիրում Կոմիտասին* դաշնամուրային սոնատը հանրաճանաչ դաշնակահար Արթուր Փափազյանի կատարմամբ: Սա Ղեկավարի համար որոշիչ կատարում էր արվեստի երկրպագուների լայն ընտրանու առջև: Սրտատրոփ սպասումի օրեր, ժամեր, վայրկյաններ...

Վերջապես համերգը սկսված է, բեմ է դուրս գալիս վայելչակազմ դաշնակահար Արթուր Փափազյանը՝ արտիստիկ կեցվածքով, զգացողական շնչով, մեծ հուզմունքով հանդիսատեսին ներկայացնում Հարությունի սոնատը իր բազմաշերտ զույներով: Սա արդեն ուրիշ աշխարհ է, Ղեկավարն է՝ ընկղմված իր մոլորակի խորհրդավոր լուսության մեջ, կամաց-կամաց լուսավորելով իր շուրջը հոգու պայծառ ճառագայթներով:

Այս ստեղծագործության ձևը դասական իմաստով չի համապատասխանում սոնատ հասկացողությանը: Սա արարում է, աղոթք է, նվիրում է Եղեռնի զոհերին՝ հանձինս Կոմիտասի: Այս սոնատի կորիզը իր՝ Ղեկավարի հոգին է, ներդաշնակ Կոմիտասի և Սևակի արարչագործ ոգուն, մեղմ զեփյուռի հովերից եկող քնքուշ «Նա-րոյ»-ով՝ հոգի արարող իր դղղանքներով:

Մարում են վերջին հնչյունները, վերջին մրմունջները... լռություն է... Հանկարծ սրահը պայթում է խելացնորի, հոտնկայս ծափերից... Հանդիսատեսը ցնծում է, ուզում են տեսնել հեղինակին: Ծափերի տարափի ներքո բեմ է բարձրանում հեղինակը:

Այս նշանակալից օրվան Ղեկավարը երկար էր սպասել: Ես տեսա նրան՝ վերացած իր իսկ ստեղծած աշխարհից: Ես տեսա բեմում խոնարհվող Ղեկավարին՝ ամբողջացած իր ստեղծագործության հետ, հուզմունքից փայլատակող, հուրհրա-ցող աչքերով և... խաղաղված հոգով...

Սա Հարությունի անցած ստեղծագործական ճանապարհի մեծ հաղթանակն էր:

Շատերը մոտեցան Ղեկավարին արցունքոտ աչքերով, սեղմեցին ձեռքերը՝ խոնարհ շնորհակալությամբ...

Ղեկավարի երաժշտությունը չես չփոթի որևէ մեկի երաժշտության հետ, այն յուրահատուկ է և ինքնատիպ : Նրա հոգևոր աշխարհը կլանում է իր մագնիսական ձգողությամբ, բացում փիլիսոփայական մտորումներով հագեցած մի աշխարհ, երկնայինի և երկրայինի երկխոսություն, ուր հաղթանակում են և՛ կյանքը, և՛ մահը, և՛ սերը :

Ղեկավարի յուրաքանչյուր ստեղծագործություն թանկ և սիրելի է ինձ, սակայն առանձնակի տեղ եմ տալիս Topophono կոնցերտին: Սիրով եմ հիշում այն երանելի օրերը, որ հագեցված էին ստեղծագործական բուռն և հետաքրքիր շնչով: Նորաստեղծ հնչյունները դառնում էին նոտաներ, ճիշ ու աղերս, ողբ ու հառաչ... որոնք զարգանալով դառնում էին հզոր ու հաղթական պարեր, Քոչարիի կանչերով,

հայոց լեռների պես ուժեղ, ուս–ուսի տված հայ տղաների պարեր ու պարեր: Topophonon–ն իմ զգացմունքների գազաթնակետն է, որի երաժշտության խորին շերտերում թևածում են իմ ու Հարությունի հոգիները: Երբ սկսում է նվագել գալա–րափողը, վերանում են, չեն ուզում մտածել որևէ բանի մասին, ուզում են գրկել մե–ղեդին, փնտրելով հոգևոր կանչեր, կորսված դեմքեր, թանկագին արժեքներ...

Բոստոնում արդեն տեղի էր ունեցել ստեղծագործության ամերիկյան դեբյու–տը, որը ընդգրկված էր Ամերիկյան երաժշտական փառատոնի ծրագրում: Հարու–թյունը հրավիրված էր ներկա գտնվելու այդ համերգին: Սակայն Խորհրդային կար–գերը արգելք հանդիսացան, չիրականացավ Դելլապյանի մեկնումը: Երկրորդ հա–մերգը հնչեց Լոս Անջելեսի Dorothy Chandler Pavilion սրահում, ուր, ի դեպ, ամեն տարի տեղի է ունենում մահ ամերիկյան կինոխորհրդի Օսկար մրցանակաբաշխու–թյունը: Հարությունն արդեն երկրորդ անգամ հրավիրված էր Լոս Անջելես, Հայ–Ամերիկյան թատերա–երաժշտական ընկերության կողմից (նախագահ՝ Վիկ–տոր Մարտիրոսյան), մասնակից լինելու Արամ Ղարաբեկյանի ղեկավարությամբ Topophonon կոնցերտի կատարմանը: Իր մեկնումը Միացյալ Նահանգներ մերժվում է երկրորդ անգամ: Համերգի անմախաղեպ հաջողությունը առաջացրել էր Հարու–թյունի անձի հետ ծանոթանալու հախուռն հետաքրքրություն: Նույն ընկերությունը մոր համերգ է կազմակերպում, կրկին անգամ Վիկտոր Մարտիրոսյանը ձեռնար–կում է մոր հրավերը, որն այս անգամ հաջողվում է: Դելլապյանը տասնօրյա ուղևորությամբ էր. Միդգոյանի հետ մեկնում է Լոս Անջելես՝ համերգ–հանդիպման: Այստեղ է, որ առաջին և վերջին անգամ հանդիպում է տաղանդավոր երաժիշտ Արամ Ղարաբեկյանի հետ, որի մասին հետո հիշում էր հուզմունքով և խանդավա–ռությամբ:

Մինչև հիմա հիշում են իր իսկ խոսքերը. «Ես ճանաչեցի Արամին ճիշտ այնպես, ինչպես պատկերացրել էի իմ մտապատկերում, որի նկարագիրը հասկացել էի իր նամակների բովանդակությունից»:

Առանձնակի ոգևորությամբ էր հիշում 1986 թվականի դեկտեմբերի 7–ի օրը կայացած համերգ–հանդիպումը, որը եղավ ջերմ ընդունելության, գնահատանքի հանդիսություն:

Վերադառնալով Հարությունի նկարագրին՝ ուզում են հիշատակել նրա հայրե–նասիրությունը, որով շնչում էր իր ողջ էությամբ: Իրեն կյանք և ուժ տվողը հայրենի հողն ու ջուրն էին, որոնց մնաց հարազատ մինչև իր վերջին շունչը: Նվիրված էր հայրենիքին իր ուժերից շատ ավելի: Անկախ կյանքի վերջին շրջանի վատառողջ վիճակին, մասնակցում էր Արցախյան շարժման պայքարում մարտնչող զինվորնե–րին օգնելու կազմակերպման գործին:

Նվիրում եմ ամուսնուս՝ Տարություն Դեղալայանի ծննդյան 65-ամեակին

Սիրելի՛ ընթերցող,

Հուշերիս առաջին գրությունից անցել են ամիսներ... Կրկին անգամ ուզում եմ գրուցել ձեզ հետ՝ քայլելով, անցնելով վերհուշերիս ճանապարհով, կրկին բացելով Հարություն Դեղալայանի կյանքի, ստեղծագործական ուղու դռները: Անդրադառնալով գրելիքիս, հասկանում եմ, դժվարին ճանապարհ ունեմ անցնելու, սիրտս մաշող անպատասխան մնացած «իմչո՞ւ»-ներից, որոնք կազմում են Հ. Դեղալայանի կյանքի պատմության խորհրդավոր առանցքը, պատմություն, որոնք հուշերիս կայացած ոսկե օղակներն են, շղթայված հոգուս՝ ամուր, անմոռաց անցյալով...

Այն երաժշտությունը, որ հնչում է հոգուս մեջ, երբեք չի լռում... երաժշտություն, որ գալիս է ոչ միայն էությունը բնորոշող ծայրերից, այլև կյանքի թողած նստվածքների ներկայությունից, եռացող կրակից, որ երբեք չդադարեց այրվել նրա հոգու մեջ:

Հոգևոր և խորհրդավոր աշխարհը, որը սկիզբ էր առել դեռ մանկուց, երբ Աթենքի իրենց տան ջերմ ու լուսավոր սենյակում լսում էր կոմիտասյան երգերը, Հռոմի մայրապետների դպրոցում կրթություն ստացած իր պաշտելի մորից՝ Մարի Փաշայանից, եղավ հիմնաքարը հոգևոր զարգացման, որի մեջ ձևավորվեց, ապրեց ու ստեղծագործեց կոմպոզիտորը, արվեստի պատմության մեջ մնալով այն անհատներից, որոնք գալիս են այս աշխարհ՝ թողնելով իրենց հետքը: Հարությունը նույնպես ասաց 20-րդ դարի ստեղծագործողի իր խոսքը ուրույն ու բացառիկ ինքնատիպությամբ՝ ազգային մտածելակերպով, նորարարի միտումներով, էլ ավելի հարստացնելով հայկական երաժշտությունը:

Հիանալի գրուցակից էր, հիանալի պատմում էր և կարողանում լսել դիմացի-նին... զգում էր ժամանակը, արձագանքում կատարվող իրադարձություններին, արվեստագետին հատուկ խանդավառ տարերայնությամբ:

«Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր հետ բերում է իր խնդիրներն ու հնչյունները, որոնց լուծումներն էլ հանդիսանում են այդ ժամանակաշրջանի արվեստագետի առաքելությունը»²:

Ազնիվ էր, վեհամեծ ու սկզբունքային: Չենթարկվեց ժամանակի իշխող կուսակցական գաղափարախոսությանը: Մերժում էր կեղծիքն ու հաճոյախոսությունը, շռայլ էր ոչ թե խոսքերում, այլ գործում, որին նվիրված էր անմնացորդ...

Յուրաքանչյուր ստեղծագործություն համահունչ էր իր հոգու մեջ ապրող նախնիների ճակատագրին: Երաժշտական հնչյուններով պատմեց մարդկությանը, հատկապես օտարներին, հայի դառը անցյալը, ապրիլյան շաղախներից ծնված, բայց և վերածնունդ ապրած, հաղթանակած երաժշտությամբ, դժվարին՝ բայց հմայիչ:

Ստեղծագործական կարճ, բայց բեղուն կյանքում ստեղծեց գործեր, որոնք հնչեցին աշխարհի տարբեր բեմահարթակներից՝ նվաճելով լայն լսարաններ:

Նվիրում Կոմիտասին դաշնամուրի սոնատը (կատարվել է Երևանում, Նյու Յորքում, Լոս Անջելեսում, Բոստոնում, Աթենքում, Լիսաբոնում, Կիպրոսում, Իտալիայի, Ճապոնիայի, Գերմանիայի բազմաթիվ քաղաքներում) հրատարակվել է «Սովետական գրող» հրատարակչությունում՝ Երևան, 1988 թ., *Meditations*՝ կլարնետի և դաշնամուրի (կատարվել է Երևանում, Մոսկվայում, Լիսաբոնում), *Սեդիում*՝ ֆագոտի սոնատ (կատարվել է Զանովերում), *Մահ* սիմֆոնիկ պոեմ (կատարվել է Նովոսիբիրսկում), *Հաղթական Ռեքվիեմ* (կատարվել է Բոստոնում, Երևանում, Մոսկվայում, Վենետիկում, Քյոլնում, Բեռլինում, Տոկիոյում, Տորոնտոյում, Ռիգայում, Կազանում), *Topophonos*՝ կոնցերտ լարային նվագախմբի, դաշնամուրի և գալարափողի համար (կատարվել է Երևանում, Բոստոնում, Մոսկվայում, Լոս Անջելեսում, արժանացել Կալիֆորնիայում կինոյի և հեռուստատեսության խորհրդի «Ոսկե փառապսակ» և «Գերաստղ» դիպլոմին), *Ջրասույզ Արև* դրամատիկ կանտատ (կատարվել է Երևանում), *Լռության թուպե*՝ կանանց երգչախմբի համար (կատարվել է Երևանում, Կիպրոսում, Զուլաստանում) և այլն...

Ամառային վառ արևոտ օրերից մեկն էր, երբ մեր տան հաճելի հյուրն էր հայազգի տաղանդաշատ կինոռեժիսոր Զենրիկ Մալյանը: Լսելով Զարությունի երաժշտությունը, խիստ հուզված գրկախառնվեց, շնորհավորեց և պատից կախված ազդագրի վրա գրեց. «Զարություն, այս ստեղծագործության միջոցով ճանաչեցի քեզ, բայց զգացի, որ քեզ գիտեմ շատ տարիներ առաջ: Իմ մանկությունից, չծնվելուց դեռ առաջ... ես քեզ գիտեմ մեր պատմության միջոցով...»:

Դեռ պատանի հասակից նկարում էր, գրում բանաստեղծություններ, արձակ գործեր, հանդես գալիս «Սուրազ» կեղծանունով: Ուներ մի քանի ընտրյալ ընկերներ, որոնց համարձակվում էր ցույց տալ իր գրվածքները: Չէր կարծում, որ արվեստի տեսակներից ամենաբարձրյալը և նվիրականը, որին տրվելու էր ամբողջովին՝ լինելու էր երաժշտությունը... Երաժշտությունը եղավ այն արտահայտչամիջոցը, որով խոսեցրեց իր ներաշխարհի զգացմունքները:

Գրում էր զարմանալի գեղեցիկ ձեռագրով, իսկ երբ սկսում էր մաքրագրել վերջնական ավարտված ստեղծագործությունը, ամենայն զգուշությամբ, նոտաները հավասար ու գեղեցիկ շարվում էին հնգագծի վրա՝ բժախնդի կոկիկությամբ:

Լավ գիտեր նոտագրքերի շարվածքը գրապահարանի մեջ՝ ըստ հերթականության: Ոչ մեկս իրավունք չունեինք դիպչելու սեղանի վրա շարված թղթերին, նոտագրքերին, գրչին... Սիրում էր իր առջև դրված խնդիրը պատշաճին հասցնել մինչև վերջ, առանց ձգձգելու: Ես ականջալուր էի նոր ծնված առաջին հնչյուններին, լինում էի առաջին մեկնարկողը... Գնահատում էր իմ կարծիքը: Ձարմանում էի... Չէ՞ որ ես երաժիշտ չեմ...

1976 թվական. ուսանողական տարիներ: Զարությունը սովորում էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Դժվարին տարիներ էին... Ե՛վ աշխատել, հոգալ ընտանիքի հոգսերը, և՛ սովորել, հասցնել բոլոր դասերը, ստեղծագործել, հանձնել քնություններ... Այս բոլորը

երբեմն բերում էին ժամանակի պակասի: Չէր սիրում անպատրաստ գնալ դասի: Լրջորեն սովորում էր յուրաքանչյուր առարկա: Կային դասախոսներ, որոնք չէին փորձում հասկանալ այս իրավիճակները և եկավ մի շրջան, ուր ասվեց որ՝ «Հարուստները որոնումների մեջ է»:

Կարծես մարտահրավեր նետվեց Հարությունին: Ստեղծվեց առավել դժվարին կացություն, ավելի համառ ու տքնաջան ստեղծագործական օրեր, փաստելու համար իր ինքնությունը: Սկսեց միաժամանակ աշխատել երկու տարբեր բնույթի գործերի վրա՝ մանկական *Փեփուշ* օպերայի (ըստ Վարդգես Բաբայանի համանուն գրվածքի), թավջութակի և դաշնամուրի սոնատի: Աշխատում էր անդադրում, լարված, որպեսզի հասցներ տարեվերջյան քննություններին: Մոտենում էին քննական օրերը... Դեկլայանը հանգիստ, խաղաղ հոգով ներկայացնում է երկու ստեղծագործությունները: Քննական հանձնաժողովի անդամները զարմացած են՝ տեսնելով երկու հսկայական աշխատանք: Այս երկու աշխատանքներն էլ ապացուցեցին հանձնաժողովի անդամներին, որ իրենց առջև տաղանդավոր և ուժեղ անհատականություն է:

1979 թվական: Երևանում՝ Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում, անցկացվում է հայ կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունների պլենում, ուր պետք է հնչեր նաև Հարությունի թավջութակի և դաշնամուրի սոնատը:

Սոնատի առաջին կատարման փաստը, սպասողական վայրկյանները, լեփ-լեցուն դահլիճը, անհանգիստ ու անհամբեր էին դարձրել երգահանին: Համերգին ներկա էին հայ մշակույթի անվանի դեմքեր՝ երաժիշտներ, կոմսերվատորիայի դասախոսներ, պրոֆեսորներ, ընկերներ, բարեկամներ: Կարծես թե սա էլ լինելու էր Դեկլայանի երկրորդ քննությունը...

Բեմ են գալիս երաժիշտները՝ Ֆելիքս եւ Նելլի Սիմոնյանները:

...Քարացած լռության մեջ հնչում են թավջութակի (սկիզբը՝ մենամովազ) թավշային գերող հնչյունները սահուն մեղեդայնությամբ, որին միանում է դաշնամուրը՝ իր մեջ առնելով հանդիսատեսին, տանելով մինչև վերջին մարող պիցիկատոները...

Սոնատը լսում ես լարված՝ անսահմանության մեջ, փիլիսոփայական խոհերը, հոգեբանական խորիմաստ դրամատիզմը:

Այդ օրվանից անցել է 25 տարի... Քարմ են հիշողություններս այն հուզումների, գրկախառնությունների, որոտալից ծափերի, գնահատանքի, որին արժանացան հեղինակը և ստեղծագործությունը:

Ես տեսա լեցուն դահլիճի ջերմ ընդունելությունը, հանդիսատեսների շողշողացող դեմքերը... Շատերի համար Դեկլայանը, որը երևաց երաժշտական աշխարհում բավական ուշ, եղավ անսպասելի հայտնագործում...

«Հարություն Դեկլայանի թավջութակի և դաշնամուրի սոնատը քնարական անկեղծ պաթոսով տոգորված երկ է: Այս յուրատիպ երաժշտությունը մարդկային խոր ու նվիրական զգացմունքների գովերգումն է»³:

Թավջութակի սոնատն՝ իր ոճական, հուզական, ասելիքի խորությամբ, ճա-

նաչվեց երեկոյում հնչած ամենաազդեցիկ, ամենատպալորիչ, ամենահիշելի ստեղծագործությունը: Շատերը մոտեցան և շա՛տ անկեղծ սրտով շնորհավորեցին, համբուրեցին, ասացին իրենց սրտի ջերմ խոսքերը՝ ստեղծագործական նորանոր հաջողությունների մաղթանքներով... Մոտեցան նաև նրանք, ովքեր ասում էին՝ Հարությունը որոնումների մեջ է... Նրանք արդեն մոռացել էին այդ մասին. վկան օրն էր, հնչած երաժշտությունը, որը առիթ տվեց խոսելու Դելլալյանի ինքնատիպ մտածողության, ինքնատիպ խոսքի կարողության մասին, այն դասելով հայ մշակույթի, հայ երաժշտության կամերային դպրոցի մի նոր, արդիական շնչով գրված ստեղծագործությունների շարքին: Կոմպոզիտոր Ավետ Տերտերյանը մի քանի անգամ ոգևորվածությամբ գոչեց. «Հարություն, դու հերոս ես...»:

Ես ցնծության մեջ էի... չէ՞ որ տեսնում էի նրա կայացած կրկնակի հաղթանակը, որը եկավ ճշմարտության ձայնով, բերելով լայն ճանաչողություն Հարությունին, և նույն տարին՝ 1979 թվականին, Դելլալյանը դարձավ Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ:

Այս ստեղծագործությունը անցել է կատարողական լայն ճանապարհ, գրավելով երաժիշտների սրտերը նոր կատարումներով, նոր ասելիքներով:

«Երջանիկ եմք, որ մեզ բախտ վիճակվեց կատարել Հարություն Դելլալյանի թավջութակի սոնատը: Այդքան արդիական և միաժամանակ այդքան ազգային: Նրա երկերի կատարումը Նովոսիբիրսկում երևույթ էր քաղաքի երաժշտական կյանքում: Հ. Դելլալյանը վառ անհատականություն է, գրելածը՝ հետաքրքիր, յուրօրինակ»⁴:

*Օքսաննա Անիսիմովա՝ դաշնակահար,
Նիկոլայ Գիրունյան՝ թավջութակահար*

Սոնատը հնչել է՝ Երևանում, Լոս-Անջելեսում, Փարիզում, Լիսաբոնում, Մյունխենում, Նովոսիբիրսկում:

Երևան, 1984 թվական:

Արվեստի Ա. դպրոցում, ուր աշխատում էր Հարությունը, միջոցառում էր՝ համերգ-հանդիպում: Դելլալյանը նվագում է Նվիրում Կոմիտասին դաշնամուրի սոնատը: Միջոցառմանը ներկա էր հռչակավոր երգեհոնահար Պերճ ժամկոչյանը:

Ազդված սոնատի եղերական, գունային ու դրամատիկ հնչյուններից, համերգից հետո նա մոտենում է Դելլալյանին, ծանոթանում, շնորհավորում և խնդրում է հանդիպում: Այս հանդիպումը եղավ ճակատագրական՝ որոշիչ մի նոր ստեղծագործության ծնունդի, որը գրվեց Պ. ժամկոչյանի խնդրանքով:

Դելլալյանի ընկերներից ճարտարապետ և երգիչ Արթուր Մեսչյանը, իմանալով այս մասին, սիրով տրամադրեց իր էլեկտրոնային երգեհոնը Հարությունին, որի հնչողական հնարավորություններն ավելի նպաստավոր էին երգեհոնային ստեղծագործություն գրելու համար:

Սկսվեց հետաքրքիր, լարված ու շատ պատասխանատու աշխատանքային, ստեղծագործական շրջան, ուր նյութի խորությունը կլանեց Հարությունին հիմնովին: Ստեղծագործությունը՝ առեղծվածային լռության միջից եկող, ոչ տեսանելի, ոչ շոշափելի խորքերից լսվող աղերսներ են՝ խորհրդավոր ասելիքներով...

«Երբ ստեղծագործում ես, մախ պետք է դու զգաս նյութի խորությունը, որպեսզի մարդիկ էլ քո միջոցով, քո ապրումներով զգան և վերապրեն այդ բոլորը»⁵:

Ստեղծագործությունը կոչվեց *Հաղթական Ռեքվիեմ*, գրված Եղեռնի պատկերավոր վերապրումներով: Սա մի հուզական, կոթողային երկ է՝ մտքի թռիչքի և զգացմունքների բացահայտման...

Երկրորդ հանդիպումը Պ. Ժամկոչյանի հետ կայացավ մեր տանը՝ ընտանեկան ջերմ ու հաղորդակից մթնոլորտում, ուր ներկա էին մահ հայ հոգևոր երգի նվիրյալներ Լուսինե Ջաքարյանը և Խորեն Պալյանը:

Սիրով և կարոտով եմ հիշում այն անմոռանալի, անկրկնելի երեկոն՝ շաղախված ջերմ ու հաճելի զրույցների, երաժշտության ունկնդրման, փոխադարձ մտերմության մթնոլորտում: Թերևս այն ժամանակ ոչ մեկիս մտքով չէր անցնում, որ երկնային խորհրդով իմաստավորված երեկոյի ավարտը երկու ստեղծագործողների մեջ այստեղ էլ պետք է վերջանար: Մտերմություն, որը սկսվեց ստեղծագործական ջերմ շրջանակում, սակայն եղավ կարճ՝ ֆիզիկապես, իսկ հոգևորը՝ Դելլալեան ամհատ-ստեղծագործողի մասին պայծառ հիշողություններով միշտ ուղեկցեց Պ. Ժամկոչյանին:

Երրորդ հանդիպումը չկայացավ...

Այդ հանդիպմանը Հարությունը սպասում էր երկա՛ր... Ի ուրախություն բոլորիս, Պ. Ժամկոչյանը կրկին գտնվում էր Երևանում: Հայֆիլիարմոնիայի մեծ դահլիճում 1990 թվի ապրիլի 25-ին նշանակված էր համերգ Պ. Ժամկոչյանի կատարմամբ, ուր հայտագրի մասն էր կազմում մահ *Հաղթական Ռեքվիեմը*: Ժամկոչյանի կատարմամբ այս գործն անցել էր երկար ճանապարհ, նվաճելով շատ երկրների՝ ճապոնիայի, Գերմանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Կանադայի հանդիսատեսների սրտերը, մեկ անգամ ևս հայ երաժշտությանը հաղորդակից դարձնելով թե՛ հայագրի, թե՛ այլազգի ունկնդրին:

Երևանում, Պ. Ժամկոչյանի կատարմամբ *Հաղթական Ռեքվիեմը* պետք է հնչեր առաջին անգամ: Դելլալյանի կյանքում ապրիլ 25-ի կատարումը այն երջանիկ օրերից մեկն էր լինելու, որ դժվարանում եմ գրել, հիշելով այն ներքին հրճվանքը, որով ապրում էր հեղինակը, որ վերջապե՛ս... իրականա՛պես էր երկար սպասված երազանքը՝ լսելու, վերապրելու ստեղծագործական օրերն ու ժամերը...

...Անսպասելի, սև ուժով անողորբ մահը իր գույժով ներխուժեց իմ գեղեցիկ ընտանիքը՝ 1990 թ. ապրիլ 23-ին...

...Հնչեց *Հաղթական Ռեքվիեմը* ապրիլ 25-ին... առանց հեղինակի մասնակցության... Երբ մուս օրը Հարությունի շուրջը հնչում էին ուրիշ մեղեդիներ, մեղեդիներ սգո և թաղման...

Ամեն ինչ ունայն, երազ անցավոր...⁶:

Երգեհոնի փողերից բարձրացող Ռեքվիեմի հնչյունները հասան առ Աստված՝ բողոքի ձայնով, այն խորհրդավոր «ինչո՞ւ»-ին, որն առ այսօր մնաց անբացատրելի, անհայտ...

— Ինչո՞ւ այս երկի ստեղծման ժամանակ, երբ գրվում էին առաջին նոտաները, հոսում էին արցունքները...

...Արդյո՞ք իր հոգու գաղտնարանում զգում և տեսնում էր մահվան սև ուրվականը...

...Դժվարանում են պատասխանել...

Սիրելի՛ ընթերցող,

Բնավ չէի ցանկանա գրել այս մասին՝ տխրությունս փոխանցելով ձեզ, սակայն սա պատմությունն է *Հաղթական Ռեքվիեմի* ստեղծման և կատարման, և անջատել այս մասը անիմաստ կլիներ:

Որքան էլ Հարությունի ներաշխարհում խորն էր Ապրիլյան Եղեռնի դրոշմը, այս ստեղծագործության ուղեկիցներն են ԼՈՒՅՍԸ, ՀԱՎԱՏԸ, ՀԱԴԹԱՆԱԿԸ:

Ստեղծագործությունը ավարտվում է հաղթական՝ վերածննդի ոգեկոչելով հայ ժողովրդին:

Ստեղծագործական հաջողություններից Դելլալյանը գլխապտույտ չէր ունենում, հակառակը՝ այս հաջողությունները մղում էին նրան դեպի նոր ոգեշնչումներ, ավելի պատասխանատվությամբ անցյալի ձեռքբերածների հիմքով ստեղծելու նոր գործեր:


1988 թվականին բոստանահայ լրագրող Ժաքլին Աբրամյանի հարցին, թե ի՞նչ կընտրեր որպես մասնագիտություն, եթե կրկին ծնվեր, Դելլալյանը պատասխանեց.

«Եթե ծնվեմ նորից՝ ապա կընտրեմ միայն երաժշտությունը, ուրիշ ոչինչ: Չկա ավելի բարձր բավականություն, քան արտահայտել հոգիդ երաժշտության միջոցով: Երաժշտությունն իր մեջ ընդգրկում է այնպիսի ստեղծագործական եզրեր, որոնք վերցնում, տանում են քեզ հեռուները, որտեղ սահմաններ չկան: Դա մի իրականություն է՝ իրականությունից դուրս... Իմ հավատամքն ու պատգամն են՝ ծառայել ազգին: Ես այն անում եմ երաժշտության միջոցով»:

Ահա այս նվիրվածությամբ ու հավատքով, հավատարիմ իր սկզբունքներին ապրեց ու ստեղծագործեց կոմպոզիտոր Հարություն Դելլալյանը:

«Չորիզոն», գրական հավելված, թիվ 6 (226)

Յունիս, 2003



ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ*

Ուխտագնացությունն մը

Անմոռելի արդիապաշ մը ամենն ճաշակատր ու ցնցող
սեսակէն: Մէկը, որուն ստեղծագործութիւնները մէկ
անգամն կը հարուածեն ունկնդիրը ու զայն կ'առնեն
իրենց իրայատուկ մթնոլորտին մէջ:



այաստանի Հանրապետության տօնն է, եւ պողոտաներու զանազան անկյուններուն վրայ արտակարգ շարժում կը տեսնուի: Ոստիկաններ հաւաքուած են, կամ գործաւորներ գեղարուեստական ելոյթներու համար բեմեր կը կառուցանեն: Կարգ մը փողոցներ փակուած են երթելէկին: Բայց դեռ խրախճանքը չէ սկսած:

Եւ սակայն ես այսօր ուխտագնացութիւն մը պիտի ընեմ դէպի տուն մը, որ թեւ տակաւին տուն թանգարանի չէ վերածուած պաշտօնապէս, բայց ինծի համար տուն թանգարան մըն է: Երեւանցի բարեկամ մը, Քրիստափոր անուն, մեզ պիտի առաջնորդէ դէպի այդ տունը: Դարձդարձիկ ճամբաներէ պիտի անցնինք, պիտի անցնինք նեղ փողոցներէ, պիտի մտնենք բակի մը մէջ ու կանգ պիտի առնենք այդ դրան առջեւ: Քիչ անդին երեւանի նշանաւոր Պարսկական մզկիթին ետեւի մասը կը տեսնուի իր գունագեղ խճանկարներով: Տունը քովի տուններէն մեծ տարբերութիւն մը չունի: Բայց այս տան դրան առջեւ քանդակուած է յուշարձանային պատկեր ու անուն մը: Այդ անունը շատ սիրելի անուն մըն է ինծի համար, բայց նոյնքան եւ սիրելի ուրիշ անուն մըն ալ կայ, որ թէեւ հոն արձանագրուած չէ, որ սակայն կը հմայէ զիս դէպի այդ տունը: Դեռ մինչեւ վերջերս զրեթէ ոչինչ գիտէի այդ երկու անուններուն մասին, որոնք մէկմէկ հսկաներ են մեր երաժշտութեան համար: Իսկ հիմա շատ բան գիտեմ: Եւ կերթամ դէպի այդ տունը, որպէսզի շնչեմ այդ տան մէջ մնացած մթնոլորտը, երկու հսկաներուն նկարները, ալպոմները, նօթատետրերը, եւ օդին մէջ ծփացող այն երաժշտութիւնը, որ կը յամենայ անոնցմէ:

Այս տան մէջ բնակած է հայ ժողովրդական երգի մեծ երգահաւաք ու երգիչ Հայրիկ Մուրատեանը: Կեանքիս մէջ տակաւին երկու տարի առաջ էր, որ առաջին անգամ ըլլալով լսած էի անոր մէկ ծայնապնակը եւ ապշահար մնացած էի: Դիւրին չէր լսել այսքան տաքուկ ու հաղորդական ծայն մը, որ հայ ժողովրդական երգի ընդերքէն դուրս կուգար մարդուս սիրտը ճաքեցնող ջերմութեամբ ու բնականութեամբ: Ու՞րկէ կուգար այդ ծայնը, հայաշխարհի ո՞ր հողէն ու ջուրէն: Հայրիկ Մու-

րատեան այս տան մէջ է որ բնական էր ահաւասիկ եւ դրան առջեւ քանդակուած էր անոր անունը:

Բայց այս տունը խնամիական կապով կ'աղերսուէր երկրորդ հսկայի մը հետ ալ, այս անգամ յորինող, երաժշտական արտակարգ ստեղծագործ մը, որուն նկատմամբ հիացումս ու յարգանքս զիս կը քաշէր ու կը բերէր դէպի այս տունը: Ինչ զարմանք, որ այս անունն ալ ինծի անծանոթ մնացած էր մինչեւ մօտաւորապէս երկու տարի առաջ եւ դեռ ալ ո՛վ գիտէ որքան ժամանակ անծանոթ պիտի մնար եթէ օր մը յօդուած մը չկարդայի Մոնրէալի «Չորիզոն» շաբաթաթերթի գրական յաւելուածականին մէջ եւ նոյն օրն ալ, ինչ դիպուած, այդ յորինողին մէկ գործէն հատուածներ չլսէի Չայաստանի պետական հեռատեսիլէն: Օրեր շարունակ ես ինծի հարց պիտի տայի, թէ աստուծային ո՞ր հրաշքն էր, որ այդ յօդուածին ընթերցումը ու հեռատեսիլէն այդ յայտագրին սփռումը նոյն օրուան մէջ իրարու հետ ժամադրած էր ինծի համար: Խորհուրդ մըն էր այդ: Խորհրդաւոր ոյժ մը ուզած էր, որ ես այդ մարդը նոյն օրուան մէջ ճանչնայի նախ իր մասին գրուած յօդուածով, յետոյ անոր ստեղծած երաժշտութեամբ:

Այս արտակարգ յօրինողին անունն էր Յարութիւն Դելլալեան: Հիմա շատ բան գիտէի անոր մասին: Հիմա քանի ու քանի անգամներ ունկնդրած էի անոր բոլոր այն գործերը որոնք մեկնաբանուած էին զոնէ անգամ մը: Հիմա գիտէի, որ այդ յորինողը պէտք է դասուէր Չայաստանի ամենէն արժեքաւոր յորինողներու կարգին: Անմըցելի արդիապաշտ մը ամենէն ճաշակաւոր ու ցնցող տեսակէն: Մէկը, որուն ստեղծագործութիւնները մէկ անգամէն կը հարուածեն ունկնդիրը ու զայն կ'առնեն իրենց իւրայատուկ մթնոլորտին մէջ: Մէկը, որ ուշացած տարիքի մէջ մուտք գործած էր երաժշտական աշխարհէն եւ աւաղ, կամիսահաս մահով, շատ կանուխ մեկնած էր երաժշտական աշխարհէն: Բայց երաժշտական կեանքի շատ կարճատեւ այդ ժամանակաշրջանին մէջ, ան տուած էր պատկառելի գործ մը: Յարութիւն Դելլալեան: Մէկը, որուն անունը իմ անմիջական շրջանակիս մէջ տակաւին միայն ինծի ծանօթ էր: Մէկը, որուն մասին ուխտած էի, սակայն շատ բան գրել: Հիմա այս տան մէջ անոր ալ շունչէն բան մը մնացած էր, որովհետեւ հոն, Չայիկ Մուրատեանի յատկացուած անկիւնին դիմաց, կար նաեւ Յարութիւն Դելլալեանի անկյունը: Քրիստափորը, ես եւ Մաքրուհին նստանք երկու մեծ արուեստագէտներուն նկարներուն դիմացը ու նայեցանք անոնց, նայեցանք անոնց ալպոմներուն, լուսանկարներուն, համերգներու յայտագիրներուն, նօթատետրերուն, անոնց մասին հրատարակուած յօդուածներու հավաքածուներուն, նայեցանք պատերէն կախուած դիմանկարներուն: Յուզում մը զգացի: Ականջներուս մէջ հնչէց Յարութիւն Դելլալեանի ամենէն նշանաւոր գործերէն Topophobia—ն, տրամաթիք հնչիւններով բանուած գործ մը, զոր ես այլեւս գրեթէ անգիր գիտէի:

Քրիստափորին որքան շնորհակալ ըլլալու էի, որ մեզ բերած էր հոս, բացած էր

այս տունը, ուր հիմա թեև ոչ մեկը կը բնակէր այլեւս, որ սակայն բնաւ անմարդաբնակ չէր: Ամեն ինչ պահուած էր այնպէս, ինչպէս պիտի պահուէր, եթէ պայմանները տարբեր կերպ ըլլային: Բայց Յարութիւն Դելլալեանի ընտանիքը հիմա Լիզպոն կը բնակէր այլեւս: Կողակիցը, երկու աղջիկները, փեսան՝ որ Զայրիկ Մուրատեանի որդին էր, բոլորն ալ երաժիշտ, բոլորն ալ արուեստագէտ, դաշնակահար, ջութակահար, թավջութակահար, Լիզպոն էին հիմա, բայց ես հոս այս տան մէջ կը զգայի անոնց շունչը: Գիտէի, որ անոնք գիտէին թէ հիմա ճիշտ այս վայրկեանին ես հոս նստած էի ու կը նայէի այդ նօթատետրերուն: Գիտէին, որ ես հիմա հոս եկած էի որպէսզի ամբողջ աշխարհին յայտարարէի, թէ որքան կը յարգէի այս երկու անունները:

Մօտաւորապէս ժամ մը մնացինք այս տան մէջ: Երբ կը բաժնուէինք, գիտէի, որ օր մը ես շատ բան պիտի գրէի Յարութիւն Դելլալեանի մասին: Ես իմ յուզումներէս ու իմ վայելքներէս ի՞նչ բան մինչեւ այսօր բաժնած չէի իմ սիրելի ընթերցողներուս հետ:

Դուրսը Զանրապետութեան Տօնի խրախճանքը սկսած էր: Կեանքը կը շարունակուէր: Ամէն օր նոր էջ մը կը բացուէր հայ ժողովրդի կեանքին մէջ:

Բայց մենք մեր կուրծքին վրայ կը սեղմէինք նաեւ հին էջերը:

ԱԼԲԻՆԱ ՔԵՐՈՐԵՅԱՆ*

Մի Ծառ էլ ընկաւ...

*Չհասցրեց...
Իսկ ո՞վ է հասցնում,
ո՞ր ստեղծագործողն է գրում
իր «վերջին» ստեղծագործությունը:
«Վերջինն» անխնայալի է,
իսկ «սկիզբը»՝ անստամուտի:*





նչի՞ց սկսել: Այսօր սկիզբը, առավել քան երբևէ, դժվար է, քանի որ արդեն անցյալով պիտի խոսենք մրա մասին: Ու երբ սկսում ես խոսել անցյալով, ասելիքդ դառնում է մի տեսակ տխուր, վերածվում հուշի, զղջման խոսքի՝ արածի և չարածի համար: Իսկ երբ փորձում ես հեռանալ տխրությունից, սկսում ես կառչել «կենդանի հիշողություն» կոչված անհեթեթ մտքից՝ ամեն անգամ հասկանալով, որ «կենդանի հիշողություն», այնուամենայնիվ, չի լինում, նորից վերադասավորում, ամբողջականացնում ես հիշողությունդ, որպեսզի գոնե հիշողությամբ կարողանաս պահել, բայց ոչ՝ կենդանացնել նրան:

Վաղ, բայց արդեն մեր հիշողությամբ հանձնեցինք ևս մի մարդու՝ Զարություն Դելլալյանի կյանքը, կենսագրությունը: Իսկ թե ինչպիսին էր նրա ապրած կյանքը, և ինչ գնահատական է տրվելու նրա ստեղծագործական կենսագրությամբ... թողնենք ժամանակին:

Առաջինը չեմ, որ գրում եմ Զարություն Դելլալյանի մասին և ոչ էլ վերջինը կլինեմ: Դեռ նոր պիտի գրեն ու խոսեն Դելլալյան – կոմպոզիտորի ստեղծագործական հայտնագործությունների, արտասահմանում ջերմ ընդունելության արժանացած նրա գործերի մասին: Դեռ նոր պիտի չափ ու կշիռ անեն նրա արածն ու չարածը, հասցրածն ու չհասցրածը, և կոմպոզիտորի գնահատականը՝ ճիշտ գնահատականը, նոր է տրվելու: Կյանքը բարենպաստ չեղավ նրա նկատմամբ, ճակատագիրն էլ անողորմ էր:

Նա չհասցրեց ավարտել արվեստագետի իր ամբողջական դիմանկարը:

Զհասցրեց...

Իսկ ո՞վ է հասցնում, ո՞ր ստեղծագործողն է գրում իր «վերջին» ստեղծագործությունը: «Վերջին» անիմանալի է, իսկ «սկիզբը»՝ անտեսանելի:

Ո՞րն էր սկիզբը:

Երևի 1947 թվականին Զուլաստանից Մայր Զայրենիք վերադառնալը, քանի որ տասնամյա Զարությունի համար հայրենիքը հույս էր, հավատ՝ իրականացվելիք

երազանքների: Եվ շատերի ու բոլորի նման, նա էլ ամուր ոտք դրեց մայր հողին, հավատով, որ երազած հայրենիքն իրոք կդառնա մայր ու կգուրգուրի մոր նման, սակայն...

Դժվար ժամանակների հայրենիքն ինքն էլ չէր հասկանում, թե իր գութից ուն և ինչքան բաժին հանի: Ու սկսվեց «եկածների» համար դժվարին ճանապարհի սկիզբը: Բաներիտ դպրոցում ստացած կրթությանը հաջորդեց աշխատանքը ֆրեզերային հաստոցների գործարանում, որպես բանվոր: Իսկ երաժշտության աշխարհի նա մտավ նախ՝ ինքնակրթությամբ, ապա՝ ժողովրդական կոմսերվատորիան, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը (Է. Բաղդասարյանի ստեղծագործական դասարան) և վերջապես՝ 1977 թ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոմսերվատորիան ավարտելուց հետո: Երկա՛ր, շա՛տ երկար ճանապարհ:

1985 թ. նշանավոր Carnegie Hall-ում համերգներից մեկի ժամանակ հնչեցին Մոցարտի, Բեթհովենի, Լիստի և Դելլապյանի ստեղծագործությունները: Համերգից հետո մարտի 24-ի համարում «Նյու Յորք Թայմսը» գրեց.

«Ծրագրի ամենաուշագրավ գործը Հարություն Դելլապյանի «Նվիրում Կոմիտասին» դաշնամուրային սոնատն էր: Ունկնդրին «հալածող» մի ստեղծագործություն, որտեղ օգտագործված են ժողովրդական մեղեդիներ, երգեցողություն և դաշնամուրի ներքին լարերի հնչողություններ»:

Իսկ «Մոմիտոր» թերթը նույն թվականի մարտի 26-ի համարում գրեց.

«Նվիրում Կոմիտասին»:

Սա հոգեբանական տանջահարման մի շնչեղ ցուցիչ գործ է, որի ունկնդրումը սակայն, երբեք տանջալի չի դառնում, այն ամենուր երաժշտականապես ներշնչող է և ծայրեծայր լսելի»:

Հայկական ժողովրդական երաժշտության խորը գիտակը կարող էր միայն ստեղծել ժողովրդի ոգին մարմնավորող Կոմիտասին նվիրված այդպիսի սքանչելի ստեղծագործություն, քանզի Կոմիտասն ու հայ ժողովուրդը Դելլապյանի համար մի ամբողջություն են՝ հոգեկան ծուլվածք, և նրան է ծուլվել նաև ինքը՝ հեղինակը, որպես իր ժողովրդի այսօրվա մի մասնիկը:

Եվ պատահական չէ, որ *Նվիրում Կոմիտասին* դաշնամուրային սոնատը լայն ճանաչման արժանացավ, հնչեց աշխարհի շատ բեմերից՝ Ամերիկա, Կանադա, Իտալիա, Անգլիա, Պորտուգալիա: 1989 թ. դաշնակահարուհի Գայանե Ջաղացպանյանի կատարմամբ այս ստեղծագործությունը հնչել է ճապոնիայում և Հունգարիայում՝ երկրաշարժի զոհերին նվիրված համերգների ժամանակ: Հավատարիմ մնալով ազգայինին, յուրացնելով համաշխարհային մտածողության արտահայտչաձևերը՝ նա աշխարհին ներկայացրեց հայ երաժշտությունը ժամանակակից մտածողությամբ: Դա հաստատեց նաև Լոնդոնի «Նոր Կյանք» թերթը. «Հարություն Դելլապյանը ժամանակակից ստեղծագործող է. 20-րդ դարի երաժշտություն էք ու-

զույգ, զուտ ազգային, տեխնիկական հնարքներ, ատոմա՞լ, բազմատոմայի՞ն – բարի՜ եղեք, ուրեմն, լսել Հայություն Դելլալյանի Topophobia ստեղծագործությունը:

Մենք չգիտենք, թե Հայաստանում ինչպես է ընդունվել այդ ստեղծագործությունը, բայց վստահ ենք, ամեն մի մասնագետ–երաժիշտ պիտի որ հիացած լինի հեղինակի նորարարությամբ»:

1974–ին Դելլալյանը գրում է թավջութակի սոնատը, 1977–ին՝ առաջին սիմֆոնիան, 1983 թվականին նա ավարտում է *Երբ իջնում է մթնշաղը* վոկալ ցիկլը, իսկ 1983–ին՝ երկրորդ կոնցերտը (կամերային նվագախմբի համար) և 1985–ին՝ երրորդ սիմֆոնիան: 1986–ին՝ *Ecloga* կամերային կոնցերտը (Ֆլետտայի, լարային նվագախմբի, դաշնամուրի և հարվածային գործիքների համար): 1987–ին՝ *Լռության Բուպե* (կամանց երգչախմբի համար), 1988–ին՝ *Ջրասույզ Արև* դրամատիկ կանտատը (սիմֆոնիկ նվագախմբի, ծայնի և ասմունքի համար) և այլն:

Թե ինչ գնահատանքի են արժանացրել այս ստեղծագործությունները մեր երաժշտական քննադատները, նրա գործընկերները և ունկնդիրները, — իսկ մինչև գնահատվելը, — ինչ դժվարություններով են կատարվել կամ չեն կատարվել, — հասկանալի մնաց միայն իրեն՝ կոմպոզիտորին: Իսկ մենք երբեք էլ չենք փորձել մեզ վրա վերցնել մեղքի մեր բաժինը՝ ժամանակին տեսնելու և գնահատելու անկարողությունը...

Եթե ժամանակին ի գորու չեղանք փոքր–ինչ կիսելու նրա դժվարությունները, ապա այսօր գոնե խոստովանենք, որ շատ հաճախ «բարձր» գնահատելու համար մենք ոչ միայն ուժ, այլև պատշաճ գիտելիք և կրթություն չենք ունենում և փոխանակ ինքներս բարձրամանք, նրանց ենք իջեցնում, հավասարեցնում մեզ, փոքրացնում: Այսպես ավելի հեշտ է: Սա մեզ համար ապրելակերպ է դարձել: Այսպես շարունակվել են տարիներ, այսպես ընդհատվել են կյանքեր...

Քանի՜–քանիսն են քայլել տառապանքի այդ ուղիներով և քանի՜–քանիսն էլ դեռ քայլելու են:

Քաղաքացու նրա նկարագիրն էլ էր այդպես՝ ազնիվ ու շիտակ: Սեփական ուժերին միայն ապավինող և սեփական ձեռքերով ճանապարհի հարթող մարդուն խորթ է հովանավորության ու կեղծիքի ամեն մի դրսևորում: Նա միշտ մերժում էր թե՛ իրեն և թե՛ ուրիշներին հասցեագրված ավելորդ հաճոյախոսությունները: Շռայլ պետք է լինել գործում և ոչ թե խոսքում, և իր գործին նա նվիրված էր շռայլորեն: Աշխատանքը նրա համար գերագույն հաճույք էր, որքան էլ այն դժվար լիներ: Գործերը ծնվում էին փոքրիկ սենյակում, ուր հազիվ մի սեղան ու դաշնամուր էր տեղադրված: Բայց նա ստեղծագործում էր... Ստեղծագործում եռանդով, անմնացորդ, երբեք բարձրաձայն չդժգոհելով ու չտրտնջալով նեղ պայմաններից, անընդհատ հետապնդող կարիքից: Շրջանցելով ամեն տեսակի մանր ու ճղճիմ խոսակցություններն ու «քննադատությունները», նա իր գործին էր:

Ազնիվ, շիտակ ու չընկճվող բնավորություն էր և հայրենասեր,— ասել է թե՛ հայրենիք սիրող: Բայց երևի միայն սիրելը քիչ է. որ սերը դառնա իմաստ, խորհուրդ, պետք է անպայման զոհաբերել ինչ—որ բան: Եվ նրա սերը հեռվից կարոտալի սեր չէր և ոչ էլ ավելորդ խոսքեր ու ճառեր: Նրա սերը ոտքի վրա մի կերպ կանգնող հիվանդ մարդու ուժ էր՝ մինչև վերջին րոպեն հայրենիքին օգտակար լինելու ցանկություն: Վատ էր, արդեն լավ չէր տեսնում, չէր կարողանում ստեղծագործել ու շատ էր նեղվում, իսկ Արցախին պետք էր օգնել՝ ինչո՞վ, ինչպե՞ս: Եվ միայն նա գիտեր՝ ինչպես: Վերջին անգամ մենք նրան տեսանք այդպես՝ Արցախի օգնության համար մի կերպ ոտքի կանգնող հիվանդ մարդու գերլարված դեմքով:

«Բացառիկ ինքնատիպ ստեղծագործություն», «ուժեղ արվեստագետի անհատականություն»,— այսպիսին էր արտասահմանյան մամուլի արձագանքը, հատկապես նրա վերջին՝ Topophono կոնցերտի մասին (գրված լարային նվագախմբի, դաշնամուրի և գալարափողի համար): Կոնցերտը գրվել է Բոստոնի «Սինֆոնիկա» նվագախմբի գեղարվեստական ղեկավար Ա. Ղարաբեկյանի խնդրանքով: Topophono—ի պրեմիերան կայացավ Բոստոնի Jordan Hall, Symphony Hall և Լոս Անջելեսի Dorothy Chandler Pavilion երաժշտական դահլիճներում՝ 1986 թ. դեկտեմբերին:

1987—ին Հարություն Դելլալյանն արժանացավ ամերիկյան «Ոսկե փառապսակ» և «Գերաստղ» դիպլոմի: Դա հեռուստատեսության և կինոյի խորհրդի ամենամյա մրցանակն է, որը շնորհվում է տարվա լավագույն կոմպոզիտորին:

Topophono—ն հնչել է նաև Երևանում՝ դիրիժորներ Զավեն Վարդանյանի և Էմին Խաչատրյանի ղեկավարությամբ: Այս ստեղծագործությունը բացառիկ է թե՛ իր մեկնաբանության և թե՛ ոճական իմաստով:

Թատերականացված երաժշտական այս գործի կատարման ժամանակ երաժիշտները դառնում են նաև «արտիստներ», որոնք շարժվում են բեմի վրա՝ մոտեցնելով և հեռացնելով ծայրի աղբյուրները, ստեղծելով երաժշտական յուրահատուկ արտահայտչական պատկերներ:

«Այս բոլորի կողքին գուցե ծիծաղելի հնչի, որ ես մինչև հիմա իմ գրած երեք սիմֆոնիաներից և ոչ մեկը չեմ լսել: Մահը սիմֆոնիկ պոեմն ու *Յուլյարժան Նահատակներին* կանտատ—ռեքվիեմը նույնպես չեմ լսել:

Ո՞վ պետք է կատարի մեր սիմֆոնիկ և օպերային գործերը: Իհարկե մեր սիմֆոնիկ նվագախմբերը և օպերային թատրոնը:

Ո՞վ պետք է հայ կոմպոզիտորներին միջազգային ասպարեզ հանի, ո՞վ պետք է մեր թռիչքին թևեր տա»,— գրել է Հ. Դելլալյանը 1989—ին «խորհրդային Հայաստանում»:

Ստեղծագործական գործունեությանը Դելլալյանը զուգորդում էր նաև մանկավարժականը:

Երկար տարիներ նա աշխատել է Երևանի թիվ 1 արվեստի դպրոցում՝ որպես կոմպոզիցիայի և տեսական առարկաների ուսուցիչ, կրթել ու դաստիարակել է երաժիշտ կատարողների ու ստեղծագործողների այնպիսի սերունդ, որոնք սովորել ու դեռ այսօր էլ շարունակում են իրենց կրթությունը մեր հանրապետության բարձրագույն երաժշտանոցում: Նրանցից շատերը վերադարձել էին դպրոց և աշխատում էին նրա հետ, նրա ղեկավարած բաժնում՝ նորից սովորելով իրենից: Նրա բոլոր սաներն ունեն իրենց ուսուցչի նկատմամբ հարգանքի ու հպարտության մի յուրահատուկ զգացում՝ նրան աշակերտած լինելու հպարտության զգացումը:

Երգեհոնի համար գրեց *Չաղթական Ռեքվիեմը*՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին: Մտքի ու զգացմունքների խորությամբ և կատարման առանձնահատկությամբ ստեղծագործությունն անմիջապես գրավեց շատերի ուշադրությունը տարբեր երկրներում:

Բոստոնի «Պայքարը» գրեց.

«*Չաղթական Ռեքվիեմ*»:

Այս իւրօրինակ ստեղծագործութիւնը փոթորկումներու, ցաւի, մահատարած լռութեան եւ հոգեհանգիստի զանազան փուլերէն յետոյ, իր յաղթական հնչումներով կ'ոգեկոչէ, իր ամբողջութեամբ, նոյնիքն հայ ժողովուրդը»:

Երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի փայլուն կատարմամբ *Ռեքվիեմը* հնչել է աշխարհի տարբեր մայրցամաքներում՝ ԱՄՆ, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Անգլիա՝ մեկ անգամ ևս աշխարհի մարդկանց հաղորդակից դարձնելով հայ երաժշտությանը, ծանոթացնելով հայ ժողովրդի ճակատագրին:

Չաղթական Ռեքվիեմը համաշխարհային հաղթարշավ ունեցավ: Սակայն երբ այն պետք է հնչեր մեզ մոտ՝ Երևանում, ապրիլի 25-ին, Չայհամերգի մեծ դահլիճում՝ Պերճ Ժամկոչյանի կատարմամբ, հեղինակն այլևս չէր լսելու, որովհետև ճիշտ նույն օրը ուրիշ մեղեդիներ էին նրա շուրջը հնչում՝ սգո և թաղման:

Չհասցրեց... Եվ նորից բոլորս կրկնում ենք՝ «Չհասցրեց»:

Բայց ոչ թե նա, այլ մենք չհասցրինք: Մենք միշտ այդպես չենք հասցնում, միշտ ուշանում ենք և ուշանալով՝ ապրում, ուշացումով գովեստներ ասում, պարզևներ բաժանում: Միայն վերջն է, չգիտես ինչու, շուտ գալիս:

Չիմա մնում է միայն ասել՝ «Ների՛ր, Չարություն: Մենք պարզապես չհասցրինք: Եվ հավատա՛, որ դա ոչ այնքան քո՝ հեռացածիդ, այլ մեր՝ ապրողներիս դժբախտությունն է»:

— Իսկ ի՞նչ է պատահել,— կհարցնեն շատերը:

— Ոչինչ, պարզապես մեր նոսր անտառից մի ծառ էլ ընկավ...



ՊԵՐՏ ԺԱՄԿՈՉՅԱՆ*

*Կոմսյոգիտ
Տարություն Գելլալյանը
ընկերոջ հուշերում*



նցյալ տարվա նոյեմբերին ինձ բախտ վիճակվեց կատարել շուրջերկրյա համերգային շրջագայություն, այդ թվում եղա նաև Հայաստանում, ուր համոզես եկա երկու համերգով: Այնտեղ խոսվեց այն մասին, որ հաջորդ տարի կրկին վերադառնամ Հայաստան՝ ապրիլյան չափազանց կարևոր տարեփոխները նշելու կապակցությամբ, տարեփոխներ, որոնք նշանակալից են իմ կյանքի, ինչպես նաև ողջ հայության համար:

Ավելի քան 30 ամգամ եղել եմ Հայաստանում, սակայն այդ ամգամ լրանում էր 1965 թվականին Հայաստան կատարած իմ առաջին այցելության 25-րդ տարեփոխը: Ապրիլի 20-ին իմ ծննդյան օրն է, ապրիլի 24-ին՝ Մեծ Եղեռնի 75-րդ տարեփոխը, իսկ ապրիլի 15-ին՝ Սուրբ Զատիկը: Այնպես որ, բոլոր իրադարձությունները ինձ տանում էին դեպի Հայաստան:

Հայաստան կատարած իմ բոլոր այցելությունները կարևոր նշանակություն են ունեցել ինձ համար: Նրանք բոլորն էլ շատ հետաքրքիր են եղել, լի հաճելի կամ ոչ հաճելի հիշողություններով: 1990 թ. ապրիլին մախատեսվող իմ այցելությունն ուներ ամենահուզիչը լինելու բոլոր մախադրյալները: Նախապես առաջարկվել էր նվազել երեք համերգ Ֆիլհարմոնիկի մեծ դահլիճում, և ես առաջին ամգամ հայկական երգեհոնային երաժշտության մի ամբողջ ծրագիր էի մախապատրաստել, որտեղ ներառել էի նաև հատուկ ինձ համար գրված ստեղծագործություններ:

Ծրագրով մախատեսվում էին երկու հեռուստատեսային նկարահանումներ, համերգներ՝ նվիրված ապրիլի 24-ին և, անշուշտ, կատարումներ Ս. Էջմիածնում և Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում:

Սակայն իմ այցելությունը հիշատակվեց անսպասելի և ողբերգական դեպքով, ապրիլի 23-ին իմ ընկերոջ և եղբոր՝ Հարություն Դելլալյանի հանկարծակի մահով: Նրա մահը մեծ կորուստ էր ոչ միայն ինձ, այլև համաշխարհային երաժշտության համար: Առավելապես, այն անդամալի կորուստ էր հայ ժողովրդի համար:

Հարությունին առաջին ամգամ հանդիպել էի 1983թ. դեկտեմբերին: Այդ ժամանակ Հայաստանում էի գտնվում Պետրոս Ադամյանի մրցանակով պարգևատրվելու

կապակցությամբ: Այդ օրերին ինձ հրավիրեցին Ձեյթունի Արվեստի դպրոցի համերգին, որից հետո կազմակերպվելու էր ընթրիք: Տնօրենը՝ Սիգիզմունդ Ներսեսյանը, խելացի և աշխատասեր անձնավորություն էր: Դեկլայանը դասավանդում էր այդ դպրոցում և այդ երեկո պետք է մասնակցեր համերգին:

Նա կատարեց իր *Նվիրում Կոմիտասին* սոնատը, որը շատ վառ տպավորություն թողեց ինձ վրա: Այն դուրսեց ինձ իր կախարդիչ հմայքով: Հայ կոմպոզիտորների երբևէ իմ ունկնդրած ստեղծագործություններից այս սոնատը տարբերվում է իր թարմությամբ: Դեկլայանն ունի յուրահատուկ երաժշտական լեզու: Նրա մոտ դաշնամուրը ձեռք է բերում արտասովոր հնչողություն, իսկ գործիքի լարերի վրա նվագելը, որ նաև ուղեկցվում է երգով, մորարարություն է: Նրա երաժշտությունը բացահայտում է հայ մարդու հոգին, որը անցնելով բազմաթիվ ողբերգությունների և տառապանքների միջով, հասել է մաքրագործման:

Անչափ տպավորիչ էր Դեկլայանի բեմական արտաքինը: Նա շատ երիտասարդ տեսք ուներ: Արտաքնապես նա իր իրական տարիքից երկու անգամ ավելի երիտասարդ էր երևում: Ամաչկոտ թվացող այդ մարդը բեմի վրա ամբողջապես կերպարանափոխվում էր՝ ստիպելով ունկնդրին ևս տեղափոխվել իր աշխարհ: Համերգից հետո ես առիթ ունեցա մոտիկից ծանոթանալու այդ անմիջական և ջերմ ժպիտով մարդու հետ: Նրա երիտասարդ արտաքին տեսքի տակ թաքնված էր տառապանքի կնիքը, և մեզ միավորեց այն ցավը, որ կրում էր Դեկլայանն իր հոգու խորքում:

Սոնատի ունկնդրման ողջ ընթացքում ինձ չէր լքում այն միտքը, որ պետք է խնդրեմ նրան ինչ-որ բան գրել երգեհոնի համար: Իմ առջև տաղանդավոր մարդ էր՝ հայի մեծ հոգով, պրպտուն մտքով, որը կարող էր յուրօրինակ գործ ստեղծել երգեհոնի՝ գործիքների արքայի համար: Դեկլայանն առանց երկմտելու ընդունեց իմ առաջարկը: 1985թ. դեկտեմբերի 7-ին դպրոցի խնդրանքով երգեհոն նվիրեցի նրանց: Այդ առթիվ կազմակերպված հանդիսավոր երեկոյին Դեկլայանը ինձ ներկայացրեց հանդիսատեսին: Այնտեղ էին նաև իմ ընկերներից շատերը, այդ թվում թանկագին բարեկամ Լուսինե Ջաքարյանը: Երբեք չեմ մոռանա այդ օրը: Ո՞վ իմանար, որ մի քանի տարի հետո դեկտեմբերի 7-ը պետք է նշվի որպես հայ ժողովրդի պատմության ամենացավոտ ու մութ օրերից մեկը:

Հարությունը իրոք գրեց մի ստեղծագործություն երգեհոնի համար՝ *Հաղթական Ռեքվիեմը*, նվիրելով այն ինձ: Որպես ավարտման ամսաթիվ նշեց 1984թ. նոյեմբերի 14-ը: Նախատեսել էի, որ առաջին կատարումը տեղի կունենա Կոմիտասի անվան երգեհոնային երաժշտության հիմնադրամի ամենամյա համերգին, Բոստոնի Methuen Memorial Music Hall դահլիճում: Այդ կապակցությամբ հրավերք ուղարկեցի Հարությունին և իր տիկնոջը՝ ներկա գտնվելու ստեղծագործության առաջին կատարմանը, սակայն Հայաստանի իշխանությունները կտրուկ մերժեցին իմ հրա-

վերքը՝ պատճառաբանելով, որ ԱՄՆ-ի կառավարությունը մերժել է Դելլապանին վիզա տալու խնդրանքը: Ես փաստաթղթերով ապացուցեցի, որ երբեք նման մերժում չի ստացվել: Հաջորդ տարվա նույն հիմնադրամի կազմակերպած համերգին նոր հրավերք ուղարկեցի, որը առանց որևէ բացատրությունների կրկին անգամ մերժվեց: Ի վերջո, Դելլապանին հաջողվեց իր այլ ստեղծագործության կատարմանը ներկա լինելու առիթով գալ Կալիֆորնիա, սակայն նա տեղ հասավ ուշացած՝ համերգը կայանալուց հետո միայն: Երբ նա Կալիֆորնիայում էր, ավելի քան մեկ ժամվա հեռախոսային խոսակցություն տեղի ունեցավ իմ ու Հարությունի միջև: Այժմ այդ հիշողությունները շատ թանկ են ինձ համար:

Հաղթական Ռեքվիեմը կատարել են ամենուր՝ սկսած Ճապոնիայից մինչև Գերմանիայի Լաուտենբերգի մայր տաճարը: Ինձ համար այն լավագույն միջոցն է եղել աշխարհին ներկայացնելու հայ ժողովրդի տառապանքը, վիշտը, հավատն ու մեծությունը: Վենետիկում կայացած Հայկական երաժշտության փառատոնի ժամանակ իրարանցում առաջացրեց այն, որ Սուրբ Մարկոսի տաճարում ապրիլի 24-ին տեղի ունենալիք համերգային ծրագրում իմ կողմից ներառվեց նաև *Հաղթական Ռեքվիեմը*: Ինչևէ, դա ինձ համար լավ առիթ էր որոշակիորեն հստակեցում մտցնել այն մարդկանց մտքերում, ովքեր խոսում են առանց խորը մտածելու: Թող ինձ ների ընթերցողը նման արտահայտությունների համար:

Այս տարի ապրիլի 20-ին Երևանի «Անի» հյուրանոցում նշվեց իմ ծննդյան օրը: Ափսոսում էի, որ ոչ մի կերպ չկարողացա կապվել Հարությունին, որպեսզի իր տիկնոջ՝ Հերմինեի հետ հրավիրեի այդ երեկոյին: Ի վերջո, Լուսինե Զաքարյանի միջոցով պարզեցի, որ Դելլապանը հիվանդանոցում է և նրան աչքի վիրահատություն է սպասվում: Ապրիլի 22-ին ինձ զանգահարեց նրա դուստրը: Նրա ծայրը շատ զվարթ էր հնչում: Նա ասաց, որ հայրը շատ է փափագում տեսնել ինձ: Տեսակցության ժամերը պարզելուց հետո խնդրեցի հաղորդել իմ սիրելի ընկերոջը, որ հաջորդ օրը կայցելեմ:

Պայմանավորվեցի ընկերներիս հետ, որ ինձ ուղեկցեն հիվանդանոց՝ ժամը 4-ին: Առավոտյան փորձից հետո վերադարձա հյուրանոց նախաճաշելու: Իմ բախտը բերեց. այդ օրը տաք ջուր կար, ուստի որոշեցի լոգանք ընդունել: «Անի» հյուրանոցում տաք ջուրը բավականին հազվագյուտ հաճույք էր, և այդ օրը իմ ուրախությանը չափ ու սահման չկար: Ճիշտ է, ուրախությունս տևեց մինչև այն պահը, երբ էլեկտրական հոսանքը անջատեցին: Ստիպված սափրվեցի մթության մեջ, առանց շատ արյուն կորցնելու: Քիչ անց իմ հետևից եկավ մեքենան: Ես արդեն պատրաստվում էի դուրս գալ, երբ հնչեց հեռախոսը: Մի պահ մտածեցի չպատասխանել զանգին, բայց հետո վերցրի լսափողը: Ռոբերտ Ամիրխանյանի քույրն էր: Երկար տատանումից հետո նա հայտնեց, որ... Հարություն Դելլապանը հեռացել է կյանքից: Հիմա էլ սարսուռն եմ, հիշելով այդ հեռախոսազանգը, որը խորապես

ցնցեց ինձ... Ամփջապես մտքովս անցան Դեղլայանի կինը՝ Չերմինեն, և երկու դստերը: Հարությունն ու Չերմինեն անչափ սիրում և նվիրված էին միմյանց: Նրանք ամեն ինչ կիսում էին միասին: Նույնիսկ ստեղծագործելիս Հարությունը նոր գրված ամեն մի նոր կտորը նվագում էր Չերմինեի համար: Իսկ Չերմինեն պատմել էր ինձ, որ *Հաղթական Ռեքվիեմը* գրելիս Հարությունը ամեն նոր էջը կատարում էր իր համար՝ արցունքն աչքերին:

Դեղլայանի կյանքում վերջին ուրախալի իրադարձությունը թոռան ծնունդն էր, չնայած դժվար է պատկերացնել նրան պապիկի դերում: Մահվան նախորդ օրը նա իր փոքրիկ տղա թոռնիկի հետ էր անցկացրել, որը նրան անչափ մեծ ուրախություն էր պատճառում:

...Հոգեհանգիստը տեղի էր ունենալու ապրիլի 24–ին, Դեղլայանների տանը: Ցավոք, չկարողացա գնալ, որովհետև խոստացել էի այդ առավոտ նվագել Սուրբ Էջմիածնում, որից հետո Եղեռմին նվիրված համերգի փորձն էր: Ապրիլի 25–ին, ժամը 15.00–ին Արվեստի դպրոցից կայանալու էր թաղման արարողությունը: Նույն օրը Ֆիլհարմոնիկ մեծ դահլիճում պետք է տեղի ունենար իմ մենահամերգը, որի ծրագրում էր նաև *Հաղթական Ռեքվիեմը*:


Նշանակված ժամին ես դպրոցում էի: Ծաղիկներով ծածկված պատվանդանի վերևում կախված էր նրա մեծ դիմանկարը: Մարդկանց ծով դահլիճում մեռյալ լռություն էր տիրում: Այնտեղ էին նաև Դեղլայանի բոլոր աշակերտները: Լսվում էր Շոպենի «Սգո քայլերգը»: Բաց դագաղի շուրջ կանգնած էին պատվո պահակները:

Այնտեղ էին ընտանիքի վշտակորույս անդամները: Լռության մեջ լսվում էին միայն հեկեկանքի ձայներ: Այս տողերը գրելիս այլևս անկարող եմ զսպել արցունքներս...

Վշտի մեջ մի պահ ուզում էի ողջ ձայնով գոռալ. «Տեր Աստված, հերի՞ք չէր այն, ինչ տեսանք վերջին երկու տարվա մեջ...»

Հունիսի 3–ին կլրանա Դեղլայանի մահվան 40–րդ օրը: Ես կոչ եմ անում, որ բոլոր հայկական եկեղեցիները հոգեհանգստյան պատարագում նշեն Հարություն Դեղլայանի անունը:

Ինձ համար առանց Հարությունի աշխարհն ինչ–որ չափով դատարկվել է: Դեղլայանի հիշատակին նախատեսվում են նրա ստեղծագործությունների համերգներ: Այսուհետ ամեն հնարավոր առիթով համերգներիս մեջ ներառելու եմ *Հաղթական Ռեքվիեմը*, որը կկատարվի նոր ընկալմամբ, և անկեղծորեն հույս ունեմ, որ ամեն մի նոր կատարում ինձ կլցնի այն հավատով, որով հագեցված՝ Դեղլայանը գրեց իր ՀԱՂԹԱԿԱՆ ՌԵՔՎԻԵՄԸ:



ԿԱՐԻՆԵ ԶԱՂԱՑՊԱՆՅԱՆ*

Կանչ, որ գերում է մարդկային հոգիները

Այս հոդվածը նվիրվում է Ասծոն կողմից օժտված երաժշտի լուսավոր հիշատակին, իր հայրենիքի նվիրյալին, որը կյանքից հեռացավ հայերի Եղեռնի պաշտոնական սարկիցը նշելու նախօրեին, իրադարձություն, որի արձագանքներն անցնում են Հարություն Դեղլալյանի ողջ ստեղծագործության միջով:

Ե

արմիր փոքրիկ ծաղիկներով չոր ճյուղը, որը զարդարում է մեր հյուրասենյակը, ամնկարագրելիորեն գեղեցիկ է: Այս ճյուղը նվիրել է Զարություն Դելլալյանը, երբ քրոջս հետ հյուրընկալվել էինք իր մոտ՝ բոլորովին չկասկածելով, որ վերջին անգամ ենք հանդիպում:

Արդեն երկար տարիներ Զարությունը մեզ հետ չէ, այնքան անսպասելի հեռացավ կյանքից, որքան և անսպասելի եկավ երաժշտության աշխարհ: Նրա երաժշտական կյանքը տևեց ոչ լրիվ 17 տարի: Բայց այդ ընթացքում մա հասցրեց նվիրել իր հայրենակիցներին և երաժշտության բոլոր սիրահարներին կոմպոզիտորական արվեստի սքանչելի կոթողներ, նպատակամիտված գրավելով երաժշտական հասարակության վստահությունը մեր երկրագնդի ամենատարբեր անկյուններում:

Դելլալյանը շտապում էր՝ ինքն էլ չգիտակցելով այդ: Շտապում էր հղկել իր խոսքը երաժշտության մեջ, հաղորդակից դարձնել երաժշտական աշխարհի իր ընկալմանը:

Եվ այդ խոսքը ստեղծագործություններում բյուրեղացվում էր ոչ ավանդական ձևերով և բովանդակությամբ, հագեցած հայ միջնադարյան և գեղջկական մոնոդիկ մեղեդիներով և ելևէջներով: Անվերջ ստեղծագործական որոնումները, փորձարկումները, հնչյունային համարձակ հայտնագործությունները, գործիքային համադրումները, ձգտումը ստերեոֆոնիկ հնչողությանը, մշտապես ենթարկվելով չափի ինտուիտիվ զգացողությանը, անսովոր տպավորիչ և յուրօրինակ միահյուսվում են ժողովրդական մեղեդիների բնորոշ հնչյունների հետ: Այս ամենն իր հերթին ստեղծում է մի մոր էֆեկտ, որը կարելի է անվանել «դելլալյանական ծեռագրի էֆեկտ»:

Իր ստեղծագործական ճանաչման գագաթնակետը հանդիսացավ կամերային նվագախմբի և մենամվագ դաշնամուրի ու գալարափողի համար գրված Topophono կոնցերտի անհավանական հաջողությունը ԱՄՆ-ում, 1986-ին:

Այս ստեղծագործության համար, որում լսվում են 1915-ի արձագանքները, հեղինակին շնորհվեց «Ոսկե փառապսակ» պարգևը և Կալիֆորնիայի կինոյի և հեռուստատեսության խորհրդի Super Star պատվավոր դիպլոմը: Կոնցերտի երաժշ-

տություներ՝ բնորոշ պայծառ պատկերայնությամբ, արտահայտիչ ծայնային համակարգերով, ամբողջական դրամատուրգիական զարգացման ուժգնությամբ, ասես թելադրում է մեկնաբանման տարբեր հնարավորություններ, ինչը և օգտագործել էր դիրիժորը՝ ներմուծելով «գործիքային թատրոնի» տարրեր, որի պայմաններից մեկը կատարողների թատերականացված շարժումներն են բեմի վրա:

Հուզմունքի և հիացմունքի շատ մեծ բաժին ընկավ նաև *Նվիրում Կոմիտասին* դաշնամուրային սոնատին: Սոնատի սեղմ, լակոնիկ լեզվով, որը լրիվ համապատասխանում է Կոմիտասի դաշնամուրային ավանդույթների ոգուն, վերստեղծվում է հայ երաժշտության մեծ դասականի կերպարը:

Սոնատի զգացողական տրամադրության մեջ կարծես կենտրոնացած, խտացված է ինքը՝ Դելլալյանը՝ իր բարձր քաղաքացիականությամբ, միևնույն ժամանակ՝ նրա հոգու ցավը՝ սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Ազգային գունդությունը և արտահայտման ժամանակակից հնարքները օրգանական միասնության մեջ են՝ միահյուսվելով և փոխադարձաբար լրացնելով միմյանց: Հնչյունային-տեմբրային ընդգծված զուգակցումները, տարբեր ծայնասահմանների հակադրությունները, տարածության մեջ տարբերակվող դարձվածքները արծազանքվում և միախառնվում են ժողովրդական խաղիկներին և երգերին: Այսօրինակ հնարքների ներմուծումը հասցնում է բարձրակետին, սուր դիսոնանսային հնչողությամբ, որն ասես հանդնկնում է Կոմիտասի և հայ ժողովրդի կյանքի վճռորոշ ողբերգական պահին:

Հարությունին բնորոշ էր ևս մի արտասովոր հատկություն՝ նրա կրքոտ ծգտումը դեպի բարին, ներդաշնակը, լուսավորը: Այս ցանկությունը, թվում է, մարմին էր առնում ամեն մի ստեղծագործության մեջ, դաշնամուրի սոնատում առանձնապես: Այսպես, վերջում արդեն, երբ դաշնամուրի լարերն ասես նմանակում են թռչի հնչողությամբ, դաշնակահարը հուզված ծայնով երգում է «Նարոյ» ժողովրդական երգը: Ունկնդրի հիպնոսացված երևակայության մեջ կարծես մոխիրներից հառնում են նոր կյանքի սաղմերը: Նրանք անցել են ոճրագործության, դավաճանության և անտարբերության ահավոր վայրիվերումների միջով, բայց և այնպես վերապրել են... Որտեղ էլ որ կատարվեր այս ստեղծագործությունը՝ Միացյալ Նահանգներում թե Կանադայում, Իտալիայում թե Ճապոնիայում, Իսպանիայում թե Պորտուգալիայում ու Խորհրդային Միությունում, մարդիկ արցունքոտ աչքերով են շնորհավորել դաշնակահարներ Հարություն Փափազյանին, Սեդրակ Երկանյանին, Գայանե Ջաղացպանյանին, Մարինե Դելլալյանին: Եվ տարբեր ազգերի մարդկանց զգացմունքների այդ միասնությամբ էլ հենց արտահայտվում է կոմպոզիտորական խոսքի անհատական ուժը և ժամանակամետ լինելը, որը այսօր ևս հնչում է զգացմունքային, կրքոտ լարվածությամբ և լավատեսությամբ:



ՊԵՏՐՈՍ ԱԼԱՐԱՅՏՈՅԵԱՆ

*Յարութիւն Դեղլալեան
եւ իւր անուան
եղեակին ելոյթը*

*Դեղլալեանի մօտ ազդեցութեան նշոյլն անգամ չկայ
շուսական կամ խորհրդային դպրոցի պաշտելի
անուններէն. չկան նաեւ միշտ լուսեւ, գունազեղ եւ
մեղրածորան Խաչատուրեանն ու իր սասնակներու
հասնող արքանեակները:*



ինգլաբքի, Փետրուար 19-ի երեկոյեան, Լոս Անճելոսի հեռաւոր մէկ սրահին մէջ, տեղատարափ անձրեւներու դոփիւններուն կշռոյթով տեղի ունեցաւ յոյժ կարեւոր նուագահանդէս: Կազմակերպուած էր Ամերիկահայ Թատերա-Երաժշտական Ընկերակցութեան կողմէ, որուն հիմնադիր-տնօրէնն է Վիքթոր Մարտիրոսեան: Անսպասելի էր երաժշտասէր ընտրանիի մը հոծ ներկայութիւնը ելոյթի մը, ուր հայկական ծանօթ անուններ չեն վխտար. ուրախ էինք The Ebell of L.A. գեղեցիկ սրահը ամբողջութեամբ լեցուն տեսնելով:

Ասկէ եօթը տարիներ առաջ, հայ երաժշտական աշխարհը կ'աղքատանար եղերականօրէն: 53 տարեկանին հոգին կ'աւանդէր մեր արդի երաժշտութեան խոշորագոյն դէմքերէն մին՝ Յարութիւն Դելլաւեանը: Ան, Ա. Խաչատուրեանի նման, ուշ նետուած է երաժշտութեան ասպարէզ, սակայն շնորհիւ իր խոր անհատականութեան, ոճային առանձնայատկութեանց եւ ստեղծագործական եզակի յղացքներուն, փառաւոր աստղ մը կը հանդիսանայ մեր երաժշտական երկնականարին վրայ: Այս երեկոյեան ելոյթ ունեցան, եռեակ կազմած, երեք երիտասարդ արուեստագէտներ, որոնցմէ երկուքը՝ դաշնակահար Մարինա եւ ջութակահար Նարինէ, վաղամեռիկ յօրինողին դուստրներն են: Անոնց կ'ընկերանար Մոսկուայի Չայքովսկիի անուան պետական երաժշտանոցին մի քանի միջազգային մրցոյթների դափնեկիր, թաւջութակահար Լեւոն Սուրադեան:

Յայտագրի առաջին մասով ունկնդրեցինք Դելլաւեանէն երեք կտորներ, իսկ երկրորդ մասով՝ դասական երկու եռեակներ: Հարկ է այժմ հանգամանօրէն անդրադառնալ յայտագրի առաջին մասը կազմող Դելլաւեանի երեք Սօնաթներուն: Դելլաւեանի գործին հետ իմ առաջին ծանօթութիւնս տեղի ունեցած է 1986-ի Նոյեմբերին, երբ Արամ Դարաբէկեանի ճպոտին ներքեւ Լոս Անճելոսի մէջ տրուեցաւ իր Toporhono-ն, լարային նուագախմբի եւ դաշնակի համար: Toporhono-ին առեղծուածային եւ պայթուցիկ կառուցուածքը ուժեղ տպաւորութիւն գործած է վրաս եւ երեւան հանած բացառիկ խառնուածքով երաժշտահան մը: Ի դէպ, «առեղ-

ծուածային» մակդիրը կրնայ ծառայել իբրեւ ընդհանուր բնորոշում այդ երեկոյեան մեր ունկնդրած երեք երկերուն ալ, որոնք կը կոչուին՝ *Սօնաթ ջութակի եւ դաշնակի*, *Սօնաթ Թաւջութակի եւ դաշնակի*, *Կոմիտասին նուիրուած Սօնաթ* միայնակ դաշնակի համար: Երկու ծայրայեղ դրույթներ կրնան բնութագրել այս երեք Սօնաթներն ալ միանգամայն. մէկ կողմէ յամրաքայլ ընթացող, երկիւղազդու եւ խորհրդաւոր լռութիւնը՝ արտայայտուած հազիւ լսելի նուազագոյն նոթերով (կը մտածեմ երաժշտութեան մէջ մնջութեան ռաիդիոյայ Անթոն Վէբեռնի մասին), միւս կողմէ զսպուած ու խեղդուած ճիչերու անսպասելի յայտնութիւնները, որոնք միանալով առաջիններուն կը ստեղծեն հոգեխռով մթնոլորտ: Դելլալեանի մօտ ազդեցութեան նշոյլն անգամ չկայ ռուսական կամ խորհրդային դպրոցի պաշտելի անուններուն. չկան նաեւ միշտ լաւատես, գունագեղ եւ մեղրածորան խաչատուրեանն ու իր տասնեակներու հասնող արքանեակները: Դելլալեան առանձնացեալ մըն է, երբեմն հեղծուցիչ մղձաւանջներու անձնատուր, որոնցմէ յանկարծ կը ձերբազատուի՝ ճշալ ու աղաղակել փորձելով: Առաջին Սօնաթին մէջ մուտք կը գործենք գրեթէ «խարխափելով»: Նախ թաւջութակի երկար մենախօսութիւնն է՝ բամբ ու ծանր գնացքով: Մութ է ամէն կողմ կամ ամէն ինչ. լարերը չեն թրթռար. ծայրանիշերը աղօտ արահետներ կը գծագրեն մեր իմացականութեան առջեւ: Փոքրիկ լռութիւնները անհատականացած նոթաներուն կու տան անելի ճնշիչ երանգաւորում: Հայկական եւ ռուսական մոթիւներ չկան հոս, այլ ուղիղ գծով հեղինակին մտքերն են: Շրջուն սուերներ կը դեգերեն «աննպատակ», յետոյ, տակաւ ծայրաստիճանը կը բարձրանայ, ծայրային հոսքը կը փրփրի, լարերը իրարու կը պլլուին եւ ճմռուած թառաչանքէն կ'արծակուի առաջին ճիչը – «Կամ»: Յետոյ, կարծես սարսափած իր իսկ ճիչէն, կը կծկուի իր վրայ: Հոս կը լսուի դաշնակի առաջին շշուռը, ըսես նոր շաւիղ մը ստեղծուած անելին դիմաց: Թաւջութակը կը սլանայ վեր, կը յաջողի բռնել դաշնակին ձեռքէն: Հոս ծայր կու տայ իրական երկխօսութիւն, որ զուգերգ չէ: Հարցման նշաններ են, կամ կախման կէտեր: Ի վերջոյ, թաւջութակը ժամանակաւորապէս կը լռէ, դաշնակն է որ կը փնտռէ ելքը... Այս Սօնաթին երկրորդ հատուածը համեմատաբար լուսաւոր է, բայց երկար չի տևեր. երկու գահավէժ ընդհատումներ մեզ կրկին կ'առաջնորդեն թաւջութակի մենախօսութեան, որուն կ'արծագանքեն, թաւ ծայնով, դաշնակի «խոկումները»: Երկու նուազարանները իրարու կը «հարցափորձեն». գրկախառնում չկայ, հասկացողութիւն չկայ: Հանկարծ իրարու կռնակ դարձնելով կը բաժնուին (թաւջութակին մթին pizzicato–ներով վերջ կը գտնէ կտորը): Այս կարգի երաժշտական վերացականութեան թեքող յղացքներու շատ չենք հանդիպիր հայկական արդի երաժշտութեան մէջ իսկ: Վերը նշուած բոլոր հանգրուանները «ընթեռնելի» էին մեզի, շնորհիւ թաւջութակ–դաշնակ «խօսերգութեան»: Արուեստագէտները թափանցած են մթնոլորտին, իսկ Մուրադեան կրցաւ ստեղծել հեղինակին ներաշխարհը յատկանշող առեղծուածը՝ խօսեցնել տալով դժուարահաճ թաւջութակը:



Ահա բեմ կուգայ վայելչագեղ ջութակահար Նարինե Դելլալեանը եւ երկու քոյր մեզ կ'առաջնորդեն երկրորդ Սոնաթեն ներս:

Այս անգամ «լուսինը» բացողը դաշնակն է Մարինայի կենդրոնածիզ խորասուզումով: Մթնոլորտը լուսնային է, գրեթե խաղաղ, լուսնի ցուլքեր կը խաղան եւ կ'ընդելուզուին իրարու: Ջութակին վերին լարերու թափահարումներուն կը հակադրուի դաշնակի հանդարտ ու խրոխտ վայրէջքը դեպի թաւ նոթեր: Ջութակը ունի մենակատարային բաժին մը, թեքնիքօրէն բաւական խրթին: Այս Սոնաթին «լուսիններ»-ը յաճախ շանթահարուած են արտայայտապաշտ սլացքներով, բայց յանկարծ մեր լսողութեան գիրկը կը հասնին Կոմիտասեան երգը յիշեցնող պատառիկներ, կարծես պլպլացող ճրագներ ըլլան կամ փրցուած էջեր, երբեմն կոտորուած տաղեր, մեր երգային գանձարանէն, որոնք կ'այցելին Դելլալեանին մենաստանը կամ ներաշխարհը. ահա պարային անցք մը, որ աւելի մղձաւանջային կը դարձնէ անոր յաջորդող «լուսնային խաւարումը» հորիզոնէն անդին՝ գոլորշիներու

1987 թ. Դելլալեանը Կալիֆորնիայի կինոյի և հեռուստատեսության խորհրդի կողմից պարգևատրվում է Super Star և Ոսկե փառապսակ պարգևով:


In 1987 H. Dellalian was awarded with the Golden Wreath and Super Star of the Southern California Motion Picture Council

քղանցքներէն ընդնշարուած: Այս հետզհետէ յամեցող հայկական մոթիւային ծուէններուն (ջութակ) վրայ դաշնակը կը յայտնուի դաշունահարողի դերով՝ խոյանալով եւ յօշոտելով զանոնք: Յանկարծ լռութիւն է դարձեալ. ջութակը աւելի «համարձակօրէն» կ'առաջարկէ Կոմիտասեան երանգ մը, որուն դիմաց դաշնակը կ'ըմբոստանայ: Կտորը վերջ կը գտնէ գրեթէ անաւարտ, ինչպէս մեր պայքարն է հայկականին դէմ ծառացող բիրտ ուժերուն դէմ:

Յայտագրին հիմնական կտորն անկասկած երրորդ Սօմաթն էր՝ միայնակ դաշնամուրի համար եւ ձօնուած Կոմիտասին: Այս Սօմաթը թերեւս կը հանդիսանայ Toporhono-ին հետ, Յարութին Դելլալեանի կեանքին ողիսական-պատգամը: Հոն օգտագործուած են մոթագրութային հնարամիտ կերպեր, իսկ հայկական մոթիւներու արծարծումները բազմաթիւ են եւ այլազան: Հոս է, որ լռութիւններու որակը պայթուցիկ մակարդակի կը հասնի, եւ հոն կ'ընդգրկուին Անտունի-ներու, Գարուն ա-ներու, Հով արեք-ներու ներայայտ պրկուած մորմոքն ու ոգին: Այս 12 վայրկեաններուն ընթացքին, մենք կ'ըմպենք լռութեամբ պարուրուած ցասումներու բաժակը, լռութիւն եւ բազմաբարբառ պոռթկումներ՝ Կոմիտասի «բառամթերքով» ստեղծուած, լռութիւնը իր աղաղակող ծանրութեամբ՝ «So լաճ տմաւեր»-ի արեան կաթիլներով կենդանացած: Եւ այսպէս լռութեան գրկէն կ'արարուի աշխարհը (Մարինան կը հնչեցնէ դաշնակին ներսի լարերը՝ օգտագործելով պեղալը), աշխարհին բովէն կը ծնին տառապանքը, զայրոյթը եւ ցասումը, որոնք կը գերեզմանուին կրկին լռութեան ծոցին մէջ: Հոն կը լսենք լուսաւոր պահեր, նաեւ «խենթ» սահանքներ (ստեղնաշարին երկայնքին՝ դէպի վեր եւ վար): Կոմիտասն է այդ, որ Վիլժիւֆի հոգեբուժարանին մէջ կ'ունենայ լուսաւոր վայրկեաններ եւ յետոյ կը կորսուի անկապ խօսքերու մէջ: Մենք չունինք հեղինակին կողմէ հայթայթուած որեւէ լուսաբանութիւն, բայց կը ջանանք «կարդալ» մեր լսածը, չմոռանալով որ լման այս կտորը Կոմիտասով յագեցած է: Երկու անգամ կը լսուին մահերգային ակորդներ, որոնց կ'ընկերակցի խեղդուած յուզումներու թափօրը:

Մարինա Դելլալեանը իրապէս կը բնակի Յարութին Դելլալեանի, իր հօր հոգիին մէջ: Յատուկ բեւեռացումով ան կը յաջողի մեր առջեւ բանալ մթին, մղձաւանջային եւ եղերական հոգին, որ իր բացարձակ դրսեւորումները գտած է այս քանի մը սեղմ, բայց անխուզարկելի եւ անջրպետային կտորներուն մէջ:

Այդ գիշեր, հայ եւ օտար երաժշտասէր հասարակութիւնը ապրեցաւ մեծ հայու մը հոգիին ողջ պատմութիւնը՝ եղերական եւ կիսաւարտ:



ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ*

*Հայաստանի ժամանակակից
երաժշտիկներ՝ Գեղարեանի
Topophono-ի օրինակով*

*Topophono-ն արժեքավոր, անհամարժեք
երկունքով ծնունդ առնող է, որը պատկեր
ն'է միայն հեղինակին, այլև կատարողին,
եւ իհարկէ՝ հեղինակին ծնող ժողովրդին:*



իշտ երեք ամիս առաջ, այս օրերին, Լոս Անջելեսը «եռում էր» կարծես հայ երաժշտութեամբ:

Հայրենի կոմպոզիտորներ Էդուարդ Միրզոյեանն ու Յարութիւն Դելլալեանը որոշակի թարմութիւն բերեցին մեր գաղութին: Նրանց երաժշտութեան կատարումը մեր երեւակայութիւնը թարմացրեց այն գիտակցութեամբ, որ մայր հայրենիքի երաժշտական կեանքը բաւական աշխուժացել է ու զգալի վերելք է ապրում:

Անկասկած, այդ վերելքին տոն տուող բազում ստեղծագործութիւնների մէջ մեզ միայն բախտ վիճակուեց լսել տաղանդաւոր կոմպոզիտոր Յարութիւն Դելլալեանի Topophono ստեղծագործութիւնը, այն էլ՝ Լոս Անջելեսի Ամերիկահայ երաժշտա-Թատերական ընկերութեան շնորհիւ:

Մեր օրերի երաժշտութեան մէջ փայլատակող աստղ է կարծեք Դելլալեանի Topophono ստեղծագործութիւնը:

Topophono-ի օրինակով կարելի է յստակ գաղափար կազմել Հայաստանի կոմպոզիտորների մտածումների, ստեղծագործական երեւակայութեան, ժամանակակից, համաշխարհային երաժշտութեանը մօտիկ լինելու ձգտման մասին:

20-րդ դարի երաժշտութիւնն էք ուզում, զուտ ազգային, տեխնիկական հնարանքներ, ատօնա՞լ, բազմատօնային, — բարի եղէք ուրեմն լսել Յարութիւն Դելլալեանի Topophono ստեղծագործութիւնը:

Արժէքաւոր, ստեղծագործական երկունքով ծնուած մի գործ, որը պատիւ է բերում ո՛չ միայն հեղինակին, այլեւ կատարողներին, եւ իհարկէ՝ հեղինակին ծնող ժողովրդին:

Topophono-ն վերին աստիճանի ցայտուն, իրական երկունքի արդիւնք է, ազատ մտածողութեան ու ստեղծագործական մտքի, թռիչքի ազատ դրսեւորում:

Հեղինակը ասելիք ունի: Լուրջ, ազգային ցաւ, ներքին բողոք, խռովուած հոգին պատրաստ է պոռթկալու...

Դելլաւեանի այս գործը մեզ յիշեցնում է չեխ կոմպոզիտոր, հիմնականում ֆրանսիական մշակոյթով թրծուած Մարտինուի գործերը, մանաւանդ՝ դաշնամուրի օգտագործման նման եղանակով: Կան նաեւ Շեօմբերգեան երանգներ՝ ստեղծագործութեան նոտագրման, պարտիտուրի իմաստով:

Topophono-ն պոն է, էպոս, յիշողութիւն, ժողովրդի պատմութիւն, մեր ժողովրդի 20-րդ դարի մեծագոյն մղծաւանջը, կեանքը, մաքառումները, հաւատն ու լաւատեսութիւնը ներբողոք բարձրաթէք մի ստեղծագործութիւն, որը՝ որքան էլ ողբերգական, իր հիմքում ունի պայծառ լաւատեսութիւն, թափանցիկ լուսաւորութիւն:

Եւ այնքա՛ն պատկերաւոր է այս ամէնը դրսեւորուած, որ, թւում է, թէ մայում ես Մինաս Աւետիսեանի երեւանեան օպերային թատրոնի լայնակտաւ ձեւաւորումները. հայկական լեռներում ծուարած մի ժողովուրդ ու՝ մի հովիւ, որ Լոռուայ հորովելով կալմէ է հաւաքելու գիւղի մարդկանց՝ քոչարիով շուրջպար բռնելու..., այն կողմից էլ կարծես Կոմիտասն է իր հնչել ծայնով կանչում՝ «Արի՛, արի՛, եզօջան...»:

Տեսանելիութեան աստիճանի գունաւոր պատկերներ է գծել Դելլաւեանը այս ստեղծագործութեան մէջ... քիչ յետոյ՝ ժողովրդի քոչարին հասնելու է բարձրակէտին, կարծես լեռներն էլ են պար բռնել, սակայն, ո՛վ Աստուած, խաթարուելու է այս ամէնը, խաթարուելու՝ օտար, քիրտ ուժերի անտեղի միջամտութեամբ:

...Ահա՛ եկան նրանք, թուրք ենիչերիները... հնծեցին մէկտեղուած, ցորենի դաշտ յիշեցնող ժողովրդին, ու նրանից որպէս յուշ մնաց սգոյ քայլերգը (Շոպեն – դաշնամուրի սի–բեմով մինոր սոնատ, 2-րդ մաս):

Սա, կարծում են, նորամուծութիւն է հայ ժամանակակից երաժշտութեան մէջ: Որտեղի՞ց յայտնուեց լեհ կոմպոզիտոր Շոպենը: Չէ՞ որ Դելլաւեանը կարող էր օգտագործել ազգային որեւէ սգոյ մեղեդի, ասենք՝ հոգեհանգստեան որեւէ շարական, բայց ո՛չ, Դելլաւեանը միտումնաւոր վերցրել է Շոպենին, որպէսզի ցոյց տայ մեր ցաւի խորութիւնն ու մեծութիւնը, ցաւի համազգային լինելը, ու, նաեւ, որ ամենակարեւորն է՝ այդ ցաւի համաշխարհային տարողութիւնը:

— Սակայն կայ, ապրում է ժողովուրդը, թէկուզե՛ն սարերում ծուարած հովիւով, որ միջնադարեան տաղին խառնելով իր հորովելը, հաւատով լի հայեացքը ուղղել է ապագային,— այսպիսին է Topophono-ի բովանդակութիւնը, այդպէս ընկալեցինք մենք:

Բոստոնի «Սինֆոնովա» սենեկային նուագախմբի ելոյթը արժանի է ամէն գնահատանքի, մանաւանդ՝ ծրագրի հայկական մասով: Համերգային ծրագրի բարձրակէտն էր Topophobia-ի կատարումը: Անկասկած, գործի յաջողութեանը նպաստեց տաղանդաւոր դաշնակահար Աւօ Գոլյումճեանի մասնակցութիւնը:

Դելլաւեանի այս տաղանդաւոր ստեղծագործութիւնը բոլոր նախադրեալներն ունի միջազգային բեմ ելնելու:

Եւ մենք, սփիւռքահայ երաժիշտներս, ուրախ ենք, որ մեր հայրենի կոմպոզիտորներն ու երգահանները քայլում են ժամանակի հետ, «բռնել են» ժամանակի ոգին ու ընթացք տալով իրենց ստեղծագործական երեւակայութեանն ու ազնիւ պոռթկումներին, կարողանում են ազգային երաժշտութեան սահմաններում մնալով հանդերձ՝ գործեր ստեղծել նորարարութեամբ, ժամանակակից մտածողութեամբ ու միջազգային չափանիշի արժէքաւոր ստեղծագործութիւններ:

Հաւատով ենք, որ դեռ շատ Topophobia-ներ կստեղծեն մեր հայրենի տաղանդաւոր կոմպոզիտորներն ու երգահանները:

*Քաղուածքներ «Այդ ես եմ» գրքից, հատոր 2,
Լոս Անջելէս, Կալիֆորնիա, 1992, «Անի» հրատարակչութիւն*

Տեսադարձ հայագի

Կարծիքներ... սպախորություններ

Էդուարդ Միրզոյան

Կոմպոզիտոր

ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ

Հարություն Դելլալյանն անսովոր, հրաշք երևույթ է մեր արվեստի իրականության մեջ: Նա շատ ինքնատիպ, շատ խորը մտածող և ստեղծագործող անհատականություն էր: Հարությունի ստեղծագործական կյանքը կարծես մի արագացված ընթացք լիներ, ասուպի պես արագ ու փայլատակող: Ներքին մեծ պոտենցիալի տեր էր Հարությունը, իսկ իր ապրած կյանքը, անցած ուղին՝ ֆենոմենալ, չափազանց յուրօրինակ:

Մարդիկ կան, որոնք ինչ-որ մի տարիքում չեն սովորել այբուբենը և այդպես էլ երբևէ չեն սովորում: Հարությունը ոչ միայն սովորեց այբուբենը, այլև դարձավ դրա տերն ու տիրակալը: Նա ոչ միայն ուներ երազանք, ծգտում, այլև այդ երազանքի հանդեպ հավատք ու այն իրականացնելու համար երբևէ իր նախատիպը չունեցող մեծագույն կամք ու կորով:

Կուզենայի զուգահեռ անցկացնել Արամ Խաչատրյանի հետ: Հարությունի հոգու զարթոնքի, բռնկման և զարգացման ընթացքում է՛լ ավելի զարմանալի բան կա, որովհետև Արամ Խաչատրյանը մինչև 19 տարեկանն առնչվել է երաժշտության հետ, սովորել և նվագել է թավջութակ: Հարությունը չի ունեցել որևէ երաժշտական կրթություն, չհաշված իր մորից լսած կոմիտասյան երգերը: Նա իր առաջին քայլերն արեց ժողովրդական կոմսերվատորիայում, և ես գտնում եմ, որ եթե ժողովրդական կոմսերվատորիան տվեց միայն Հարություն Դելլալյան անունը, ապա արդեն արդարացված էր նրա գոյությունը: Սկզբում նա քիչ գիտելիքներ ուներ, բայց ուներ անսպառ երևակայություն, հակասական, բուռն, անբացատրելի, հեղեղի և փոթորկի նման, բնության տարերային ուժերի պես ահռելի մի ուժ, որը ոչ մի կերպ չէր կառելի կանգնեցնել:

Թե որքան կարճ ժամանակահատվածում նա ծանոթացավ իր իսկական կոչման ասպարեզին ու նրա գաղտնիքներին, թե ինչպիսի հաջողությունների հասավ, արդյունքներն ակնառու են...

Շատ հարուստ հոգեկան աշխարհ ուներ Հարությունը: Շատ խորը, նրբա-

նկատ, անհանգիստ բնավորության տեր մարդ էր: Նրա երաժշտությունը, որ մի կողմից ավանդական է, մյուս կողմից՝ չափազանց նորարարական, միշտ լի է որոնումներով, ձգտումներով՝ չվախենալով և չխուսափելով ոչնչից: Մի առիթով Ստրավինսկին ասել է. «Ես արմատական եմ»: Հարությունը նույնպես արմատական էր և դեռ շատ նորարարություններ, հայտնագործություններ պիտի աներ... Հարկավոր է, որ այն ամենը, ինչ նա ստեղծել է, անպայման հրատարակվի մի ամբողջական ժողովածուով:

Կարծում եմ, Հարությունը գիտակցում էր իր արժեքը, իր եզակիությունը, գիտակցում էր իր ուժը, իր կոչումը: Նա մի ազնվական էր՝ ի վերուստ տրված, ազնվական իր համեստությամբ, իր հավատամքով:

Այսպես եմ ես այսօր ընկալում Հարություն Դելլալյան Երևույթը:

Արամ Ղարաբեկյան

Չայաստանի պետ. կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր

Հարություն Դելլալյանը, միանշանակ, եզակի ստեղծագործական ոգի է եղել մեր իրականության մեջ, որը չի գալիս ինչ—որ ավանդույթից և չի էլ շարունակվում: Նա մի Ֆենոմեն է, ինքնին՝ առանձնահատուկ:

Թե՛ որպես անձնավորություն, թե՛ որպես ստեղծագործ ոգի, նա երաժշտական լեզվով արտահայտում էր իր ողջ ներաշխարհը և այդպիսով, ասես, ուղղակի մի շրջանակի մեջ մնաց՝ որպես Հարություն Դելլալյան:

Նա եզակի էր ոչ միայն որպես արվեստագետ, այլ նաև անհատ, որի ապրած կյանքը և անցած ուղին հատուկ օրինակ է մեզ համար:

Հարությունը պրոֆեսիոնալ երաժշտությանը մոտեցավ շատ ուշ՝ ներքին ծայրի մղումով, որովհետև արտահայտվելու անհրաժեշտությունը, ասելիքն այնքան ուժեղ էր, որ անհաղթահարելի ոչինչ չկար այդ ճանապարհին: Օրինակելի է այն իմաստով, որ իր այդ կիրքը և հավատքը Հարությունը հասցրեց բարձրագույն արդյունքի, քանի որ իրոք ասելիք ուներ:

Նա հեղինակ է մի շարք ստեղծագործությունների, բայց, ցավոք, վաղահաս մահն ընդհատեց այն երկար ճանապարհը, որ դեռ ուներ անցնելու: Ապացույցը՝ մտքի այն անսահման թռիչքներն են, որ տեսնում ենք նրա ստեղծագործություններում:

Զեմ կարող չամերադամալ 1984 թվականի իմ առաջին տպավորությանը: Դաշնակահար Հարություն Փափազյանի դեբյուտային համերգն էր Carnegie Hall—ում և ես Բոստոնից մեկնել էի Նյու Յորք՝ ներկա գտնվելու համերգին: Ծրագրում՝ Շոպենի, Դեբյուսիի ստեղծագործությունների կողքին կատարվեց Դելլալյան

ազգանունով կոմպոզիտորի մի ստեղծագործություն, որը կոչվում էր *Նվիրում Կոմիտասին*: Այդ ստեղծագործությունն ինձ գերեց այնչափ, որ իմ մեջ միտք հղացավ՝ դիմել կոմպոզիտորին, որ նա մի գործ գրի իմ ղեկավարած «Սինֆոնովա» նվագախմբի համար: Մինչև հիմա երջանկության մեծ զգացում եմ ապրում, որ այսկերպ պատճառ դարձա այն հրաշալի ստեղծագործության հղացմանը, որ գրեց Չարություն Դելլալյանը, և մենք կատարեցինք:

Ինձ համար անմոռանալի է նաև հանդիպումը Չարությունի հետ Լոս-Անջելեսում 1986 թվականին, որը, ցավոք, եղավ միակը, շատ կարճ, ընդամենը մեկ շաբաթ, սակայն չափազանց բովանդակալից ու լեցուն: Մենք հատուկ օրակարգ չունեինք որևէ բանի մասին խոսելու. սկսում էինք առօրյա խնդիրներից, հասնում գլուխալ փիլիսոփայական շերտերի, մարդկային փոխհարաբերությունների, որոնց զուգահեռները գտնում էինք երաժշտական ստեղծագործության մեջ, ընդ որում ոչ միայն իր՝ Դելլալյանի, այլև ուրիշ կոմպոզիտորների, և ոչ միայն ժամանակակից, այլև դասականների, ասենք՝ Բեթհովենի... Խոսում էինք գրականության, բնության, սիրո, ցավի, երջանկության ապրումների մասին... Դա ապշեցուցիչ էր, քանի որ երբ առաջին անգամ հանդիպում ես մեկին, որոշ ժամանակ է անհրաժեշտ լինում նրա հետ մտերմանալու, բայց Չարությունի հետ այս ամենը շատ անմիջական էր, կար հարազատ ներքին կապ, ու կարծես մենք իրար գիտեինք արդեն մի հազար տարի...

Մինչև այսօր ականջներումս է նրա ձայնը, երբ ասում էր. «Արա՛մ, դու պիտի գաս Չայաստան (ես այն ժամանակ դեռ Չայաստան չէի այցելել), ու մենք պետք է գնանք լեռները և միասին գոռանք...»:

Հիմա, երբ մենք դուրս ենք գալիս շրջաններ և գնում լեռները, միշտ Չարությունին եմ հիշում, զգում նրա ներկայության և այդ գոռոցի հոգևոր, ներքին կարիքը:

Այդ գոռոցը միշտ լսում եմ նրա ստեղծագործությունների մեջ:

Շատ հետաքրքիր է, երբ հեղինակի հետ անձամբ ծանոթանում ես իր ստեղծագործությունը ճանաչելուց հետո միայն... Միշտ չէ, որ այս երկու աշխարհներն իսկապես կարողանում ես մեկտեղել... Միշտ չէ, բայց Չարություն Դելլալյանը շատ նման էր իր ստեղծագործությանը, նա հենց ինքն էր, իր անձի մարմնավորումը... նրբազգաց, փափկանկատ, բայց միևնույն ժամանակ վիթխարի ուժի ու համառության տեր, որ ինչ-ինչ սկզբունքների համար կարող էր սարեր շարժել:

Այս խոսքերի ուղղակի ապացույցն է նրա ապրած կյանքը, այն դժվարին կյանքը որ նա ունեցավ, այն բոլոր տառապանքները, որ նա կրեց իր կյանքում և ստեղծագործեց այդ պայմաններում: Սա շատ բան է ասում մարդու մասին:

Մեծ պատիվ եմ համարում, որ ես Չարություն Դելլալյանի երկու մեծ ստեղծագործությունների՝ *Ecloga* և *Topophonos*, առաջին կատարման դիրիժորն եմ եղել: Այս

ստեղծագործությունները հնչեցրել ենք Ամերիկայի, Եվրոպայի, Հայաստանի տարբեր բեմերում, տարբեր համադաստեսների համար:

Ունկնդրի կողմից ընկալվումն ապշեցուցիչ է լինում, անկախ ազգությունից, անկախ ավանդույթներից, մասնագիտական պատրաստվածությունից և նախապաշարումներից: Երբ ավարտին է հասնում Դելլապյանի ստեղծագործությունը, դահլիճն, ասես ամբողջովին կլանված նրա ներաշխարհով, քարանում է մի յուրահատուկ լռությամբ: Սա խոսում է վիթխարի ստեղծագործական հզորության մասին, որը կարողանում է ունկնդրին ներքաշել իր մեջ: Այդ բովանդակությունը և այդ որակը առօրյա կյանքում շոշափելի չէ, դա մի հզոր աշխարհ է, որ քեզ տանում է իր հետևից: Այս ուժը, միանշանակ, առկա է Դելլապյանի ստեղծագործությունների մեջ:

Այսպես, բոլորովին վերջերս, Գերմանիայում հրաշալիորեն ընդունվեց Ecloga—ն (Mitteldeutsche Zeitung, November 11, 2003, Eckehard Pistrick), և այդ առիթով մի հայտնի երաժշտաքննադատ նշեց, որ միայն այդ գործը բավական էր, որ համերգը հաջողված համարվեր:

Նույնը եղել է Topophon—ի հետ: Նման ընդունելության առաջին ունկնդրումից հետո երբևէ չեմ հանդիպել: Երբ ավարտվեց ստեղծագործությունը, երկար լռություն տիրեց, հետո, հանկարծ, ունկնդիրը ոտքի կանգնեց եւ ծիչերով, ծայնով ու ծափահարություններով, հուզված ողջունում էր այդ ստեղծագործությունը:

Այս գործը տարբեր կերպ կարելի է ընկալել. այն կարելի է դիտարկել որպես կոլաժ, մանր հյուսված դրամատուրգիա, որի մեջ կա հորովելը, քոչարին, հարսանեկան ծեսը, թաղումը, այսինքն՝ հակասություններ, որոնք հասցնում են մարդկային էքստազին, այնուհետև բերում դրա լուծմանը:

Դելլապյանի ստեղծագործական միջոցը շատ պարզ է, հասանելի, նրա մեծությունն այն է, որ կարողանում է այդ պարզ միջոցներով հասնել վիթխարի հզորության: Միջոցներն արդիական են, սակայն արտահայտչական իմաստով ինքնապատակ չեն կիրառվում, ինչպես շատ ուրիշ ստեղծագործողների մոտ, որոնք իրենց իսկ հնարած միջոցների, էֆեկտների ուղղակի գերին են դառնում: Դելլապյանի արտահայտչամիջոցները միանշանակ ծառայում են բուն ասելիքին, ներքին բովանդակությունն արտահայտելու նպատակին, մի բան, որ քչերին է հաջողվում: Դելլապյանի երաժշտությունն անժխտելիորեն հայկական է, բայց ոչ թե արտաքին, մակերեսային իմաստով: Իր ոգին, իր ներքին պոեզիան, ներքին ծայնն է հայկական: Ոչ թե հայկական եղանակներ օգտագործելով, այլ հայկական ոգին արտահայտելու կարողությամբ...

Մի հետադարձ հայացք նետելով, հասկանում եմ, որ որքան էլ այսօր իր բացակայությունը մեծ կորուստ է մեզ համար, բայց նա թողել է մի լուրջ, ամուր սյուն հայ երաժշտության հետագա զարգացման համար:

Պետք է ընդունել նաև այն փաստը, որ Հարություն Դելլապյանն այսօր դեռ չու-

նի այն ճանաչումը, որին ինքն իսկապես արժանի է: Բայց համոզված եմ, որ նրա ժամանակը անպատճառ գալու է... Դեկլայանն ունի իր ժամանակը, որից ինքը շատ առաջ էր... Այդ ժամանակը պարտադրել չի կարելի, այն ինքնընտրության կգա, երբ Դեկլայան ֆենոմենը շատ ավելի հասանելի, հասկանալի և ընդունելի դառնա:

Էմիլիո Պոմարիկո

Դիրիժոր, Իտալիա, Միլանի միջազգային երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր

Ընդամենը վերջերս ինձ բախտ վիճակվեց ծանոթանալ Զարուքյուն Դեկլայանի արտասովոր երաժշտությանը և նույնքան արտասովոր, սակայն կարճատև կյանքին:

Կարողանալ լսել նրա երաժշտությունը նշանակում է հավաստիանալ նրանում, որ արվեստի և այլ բնագավառներում տեղի ունեցած շրջադարձերով նշանավորված 20-րդ դարում երաժշտության աշխարհը տեսել է նորարարություններ, որոնք միայն շատ քչերին կարող են վերագրվել:

Այս վառ անհատականությունը ապրեց իր կյանքը՝ լի մտավոր ու հոգևոր զարգացման հասնելու վճռականությամբ, սովորելով չվախենալ պատմության ծայնի դեմ առճակատումից, մշակութային և ազգային առումով իրեն հավատարիմ մնալուց:

Նրա երաժշտությունը շատ բովանդակային է և հղկված, հագեցված արտասովոր եթերայնությամբ առաջացնող հնչյուններով, ուր իշխում է թեթևության և խորության կատարյալ սինթեզը:

Մեծ տպավորություն են թողնում բեմի վրա կատարողների շարժը, վստահաբար կատարված նորարարությունը և գործիքային կատարման նոր հնարքների ճշգրիտ կիրառումը: Դեկլայանի ձեռքերում նրանց, ասես կախարդական ուժի շնորհիվ, ներվում է ավանդականի հետ կամայական այն խզումը, որը տեղի է ունենում քնարական ամբողջական պատկերի արտահայտման նպատակով. պատկեր, որը հղկված է այնպիսի ջերմությամբ, հաստատականությամբ և մտահղացման հանդեպ կուռ համոզմամբ, որ միայն հանճարի տեր երաժիշտը կարող էր ունենալ:

Եական ու համոզիչ է այն խորը հավատը, որ առկա է Դեկլայանի երաժշտության մեջ հնչող վոկալ կատարման զգացմունքայնությունում, որի անհրաժեշտության, հնարավորության մեջ խորապես համոզված է հեղինակը: Երգը հնչում է կարոտից բխող պոետիկ հուզականության այնպիսի ուժով, որ դժվարանում են պատկերացնել նրա հնարավորությունը:

Ինչպե՞ս չտխրել, որ ճակատագրի բերումով այս պարզ, ուժեղ և անկեղծ երաժշտի կյանքն այդքան կարճ տևեց:

Բերդ Բաբայան

Բանաստեղծ

Այսօր մենք այստեղ ենք, որպեսզի մեծարենք մի սքանչելի ստեղծագործողի, մեծարենք մի կայացած հրաշալի ստեղծագործական կյանք: Այսօր հուշի երեկո չէ, այլ հպարտության, հաղթանակի, ստեղծագործական երեկո:

Յուրաքանչյուր սրտացավ մտավորական մի հոգսով է համակվում իր կյանքի ընթացքում. այն է՝ բռնել իր սեփական ազգի ձեռքից և տանել էլի մի քայլ առաջ դեպի քաղաքակրթություն: Եթե նա իր այդ առաքելությունը չի կարողանում կատարել, ուրեմն նա երբևիցե մտավորական չի էլ եղել: Առավել ևս հայ մտավորական, որ ավելի կարիք ունի դեռևս իր ծխական, գավառական կացութաձևով ապրող ազգին մի փոքր առաջ տանելու, լուսավորելու: Տերյանն այդ մտավախությունը հայտնեց դեռևս դարի սկզբում՝ ասելով. մի՞թե մենք մեր գավառական մտածելակերպով պետք է ներկայանանք Եվրոպային: Եվ Հարություն Դելլալյանը լավ էր հասկացել այս ամենը: Նա չգնաց բոլորի, ընդհանուր ու հեշտ ճանապարհով: Նա բռնեց ամենաթվարին ճանապարհը: Ավելին կասեմ, նա բռնեց մոր ճանապարհ բացելու ուղին:

Ես հաճախ լսել եմ ծեծված, ծամված մի պատմություն, որ ահա մեր հասարակարգում հնարավոր եղավ, որ մարդը բանվորից աճեց, գնաց, հասավ ու դարձավ կոմպոզիտոր: Այս տաղտուկ մեկնաբանությունը անհարիր է Հարություն Դելլալյանի ողջ իմաստին, մարդ արարած էությանը: Նա երբեք բանվոր չի եղել, նա ծնվել է կոմպոզիտոր: Նույնիսկ լսեցի, որ նրա երաժշտության մեջ լսվում են գործարանային աղմուկն ու տանջանքները: Տեր Աստված... պետք չէ՝ այսպես մեղանչել Հարությունի դեմ, ավելի լավ է այդպես մտածողները մի փոքր ջանքս իրենց հոգին մաքրել:

Նա հայ երաժշտության մեջ առաջին կոմպոզիտորն էր, որ ձեռք մեկնեց անհասանելիին այն իմաստով, որ փորձեց բանալ մի առեղծված. ի՞նչ է թաքնված լռության մեջ: Այն առեղծվածային ու խորհրդավոր լռության մեջ, որ շատ անգամ ավելի բան ունի ասելու, քան աղմուկը, տեսանելին ու շոշափելին: Հարությունը լռակյաց էր. փորձում էր իր լռությամբ հաղորդակցվել ուրիշի լռությանը, մութ անկյուններում ծվարած լռություններին: Եվ նա հասկացավ, գտավ բանալին, կարողացավ խոսեցնել այդ լռությունը իր երաժշտությամբ, և այն, ինչ նա արեց իր ստեղծածով, դուրս եկավ համաշխարհային ասպարեզ:

Ես այսօր համարձակվում եմ կազմել մի ոսկե եռանկյունի վաղամեռիկ անհատների: Մի տեղը կարծես թափուր էր, և Հարությունը գնաց լրացնելու այդ տեղը: Ահա նրանք. Պարույր Սևակ, Մինաս Ավետիսյան, Հարություն Դելլալյան: Ահա այն ոսկե եռանկյունին, որ վերջին տասնամյակների ընթացքում հայ ժողովուրդը մեծ զոհողությունների, կորստյան գնով ձեռք բերեց և մեծամեծ տառերով բարձրացրեց մինչև երկինք:

Ես հպարտ եմ, որ եղել եմ Հարությունի ընկերը, որովհետև միայն լսել իր

երաժշտությունը, ինձ համար քիչ կլիներ, իսկ ահա ներթափանցել նրա հոգու խորքը, հաղորդակցվել նրա հետ որպես մի աստվածություն, դա քչերին է հաջողվել:*

Ռ. Հատտեճեան

Գրող, Մարմարա օրաթերթի խմբագիր, Թուրքիա

Կեանքի անհաւատալի հրաշքներէն ո՞ր մէկն էր, որ օր մը այս անունը հանեց իմ դիմաց ու ձայներու եւ մտածումներու մոր աշխարհ մը ստեղծեց ապրումներուս մէջ:

Հրաշքներէն ո՞ր մէկն էր որ ինձի օգնեց, որպէսզի Յարութիւն Դէլլալեանի ցնցող, աղիողորմ ու երկինքները պատառ պատառ ընող երաժշտութեան մէջէն տեսնեմ իրաւ ու մարդասէր, խաղաղարար այն հայ մարդը որ էր ան: Երբ ես լսեցի իր անունը, ան վաղուց բաժնուած էր այս աշխարհէն: Բայց իր ձայնը մոր հասնիլ սկսած էր ինձի, ճիշտ այնպէս, ինչպէս կը պատահի աշխարհի բոլոր տաղանդաւոր մարդոց ձայնին պարագային: Ամոր ձայնը մոր կը հասնէր ինձի, եւ այդ ձայնին մէջ ես կը տեսնէի ազնիւ այն մարդը, որ իր ամբողջ սիրտը անկարելիօրէն լայն բացած էր նախ իր հարազատ ժողովուրդին, յետոյ իր ընտանիքին եւ իր բարեկամներուն:

Իրաւ մարդը աշխարհ կուգայ որպէսզի բազմապատկուի ու Սուրբ Պատարագի ընթացքին բաշխուած մասին նման մարդոց միջեւ բաժնուի: Դէլլալեան այդ իրաւ մարդոցմէ մէկն էր: Իր մորթին վրայ ապրեցաւ իր ժողովուրդին պատմական տառապանքը եւ այդ տառապանքէն դուրս բերաւ սիրոյ ու բողոքի ճիւղ մը: Այդ ճիւղը մինչեւ երկինք բարձրացաւ եւ հոնկէ բաշխուեցաւ բոլոր անոնց, որոնք կրցան պատահմամբ հոն ըլլալ ու բաժին ստանալ: Իսկ անոնք, որոնք հոն չէին, ես գիտեմ, որ օր մը անպայման պիտի ստանան իրենց ուշացած բաժինը:

Դաժան ժամանակներու մէջ ան Աստուծոյ կողմէ կանչուած հաւատաւոր ու հաւատացեալ որդի մըն էր: Հաւատք ունէր, կը հաւատար Աստուծոյ, կը հաւատար իր բարեկամներուն, կը հաւատար իր կողակցին ու իր հարազատներուն, կը հաւատար երաժշտութեան, բայց ամէն բանէ առաջ՝ կը հաւատար իր ժողովուրդին: Եւ ինչպէս կը պատահի միշտ, որքան հաւատք, այնքան ցաւ ու տառապանք, այնքան զգայնութիւն եւ յուսախաբութիւն, այնքան կամք եւ յամառութիւն: Եւ որքան հաւատք, այնքան ալ բախտի եւ կեանքի անիրաւութիւն:

Բայց ան հաւատք ունէր նաեւ ապագային նկատմամբ: Գիտէր, թերեւս, թէ բախտն իրեն պիտի չարտօնէր, որ տեսնէր իր երազներուն իրականացումը, բայց կը հաւատար, որ այդ երազներն անպայման պիտի իրականանային իրմէ վերջ: Իր ընտանիքին անդամներուն կ'ըսէր. դուք պիտի տեսնէք այն, ինչ որ ես պիտի չկարենամ տեսնել: Ապագայի նկատմամբ այդ ուժեղ հաւատքն էր, որ անոր մէջ կերտեց երաժշտական յեղափոխական մը, որ, յեղափոխելով հանդերձ, հաւատարիմ մնաց իր ժողովուրդին մայր ավանդութիւններուն:

Երաժշտասէրի մը համար այսօր կարելի՞ է լսել Յարութիւն Դէլլալեանի

Topophono—ն ու չցնցուիլ, ապշահար չմնալ այս արտակարգ ստեղծագործութեան դիմաց: Եթե երաժշտասեր մը առաջին անգամ լսէ այդ գործը, կարելի՞ է որ չքարանայ իր զարմանքէն ու հիացումէն եւ հարց չտայ թէ ո՞վ է այդ գործին հեղինակը, ո՞վ է Յարութիւն Դէլլալեանը:

Յարութիւն Դէլլալեանը երաժշտական աշխարհէն ներս մտաւ այնպիսի ուշցած տարիքի մը, որ անտաղանդներու համար երաժշտական աշխարհէ հեռանալու տարիքն է: Անոր մատները հաստոցի գործարանի մը մէջ տարուած երկարամեայ աշխատանքի հետեւանքով արդէն կոշկոռ կապած էին, երբ առաջին անգամ նստաւ դաշնակին առջեւ, բայց այդ մատներով մեր ժողովուրդին նուիրեց երաժշտութիւն մը, որ կուգար այդ ժողովուրդին սրտի խորերէն: Միայն Topophono—ն պիտի բաւէր մեզի համար, որպէսզի հիանայինք երգահանին վրայ: Բայց ան թողուց ուրիշ գործեր ալ, որոնք վկայութիւնը պիտի բերէին այն տեսիլքին, զոր ան օր մը ունեցած էր՝ նայելով դէպի իր ժողովուրդին անցեալը: Չէ՞ որ Topophono—ն հայ ժողովուրդի ողբերգական պատմութիւնն է, ծայնի, երաժշտութեան, ողբի ու կշռոյթի վերածուած պատմութիւն: Երբ կը լսես այս գործը, մորթիդ վրայ կը զգաս այն տխրութիւնը, որ եղաւ հայ ժողովուրդին տխրութիւնը եւ որ այստեղ մեզի կը տրուի այն տարօրինակ ու հարուածող կշռոյթով, որ երբեմն մահերգի մը չափ աղիողորմ, երբեմն քայլերգի մը չափ առնիքնող է, կշռոյթ մը, որուն վրայ պիտի գայ աւելնալ ապրելու ու վերածնունդու աւետիս մը՝ հայկական շատ սիրուն պարերգի մը թմաներուն ընդմէջէն: Դէլլալեանի Topophono—ն մէկն է երաժշտական աշխարհի այն հազվադէպ ստեղծագործութիւններէն, որոնք երգահաններուն ստորագրութիւնը մէկ անգամէն կը յաւերժացնեն պատմութեան մէջ: Ընդամենը 25 վայրկեան տեւողութեամբ գործ մը, ահա, որուն իւրաքանչիւր վայրկեանը արուեստի սուր սարսուռ կը պատճառէ հայ մարդուն ու զայն կը հրաւիրէ մտածելու ու զգալու: Ինծի համար այս գործը, բացի երաժշտական վայելք մը ըլլալէ, դարձած է իմաստասիրութեան ու պատմութեան գիրք մը:

Դէլլալեանի բոլոր միւս գործերուն մէջ կը գտնենք նոյն մթնոլորտը, երբեմն տխուր, երբեմն ապագայի նկատմամբ ուժեղ հաւատքով լեցուն: *Նուիրում Կոմիտասին* գործը դուրս կը պոռթկայ դաշնակի ստեղնաշարի սեղմ սահմաններէն ու կը փնտռէ նուագելու ու արտայայտուելու այնպիսի նոր թեքնիք մը, որ թարգման պիտի հանդիսանար հայ ժողովուրդին տառապալից անցեալին: Հոս ալ տարօրինակ կշռոյթ մը մեզ կ'առնէ կը տանի դէպի մեւամաղծոտ մտածումներ: Նոյն ուժեղ պատգամներն ու արծագանգները կը գտնենք Թաւջութեանի ու դաշնակի սոնատին մէջ: Իսկ երգեհոնի համար գրուած *Յաղթական Ռէքուէմը* ուղղակի շշմեցուցիչ է եւ նոր էջ մը կը բանայ երգեհոնի երաժշտութեան գրականութեան մէջ:

Ապագայ երաժշտագէտը ըսելու շատ բան պիտի ունենայ Յարութիւն Դէլլալեանի երաժշտութեան մասին: Ի՞նչ մեղք որ այս մեծ երգահանը շատ ուշ մուտք գործեց հայ երաժշտութեան աշխարհէն եւ շատ ալ կանուխ մեկնեցաւ հոնկէ, առանց լրիւ իրականացնելու իր ծրագիրներն ու երազները: Բայց իրաւ երաժշտասերին համար այժմ շատ ալ դժուար չէ երկնքի աստղերուն մէջ տեսնել անոր այդ չիրականացած ծրագիրներն ու երազները:

Լադիսլավ Կուպկովիչ

Կոմպոզիտոր, Գերմանիա

Յ. Դելլալյանը Հայաստանի առաջատար կոմպոզիտորներից է: Նրա ստեղծագործության մեջ մեծ վարպետությամբ զուգորդվում են հայկական երաժշտության ազգային տարրերը և ժամանակակից արևմտաեվրոպական երաժշտության ձևերը: Այսպիսով նրան հաջողվում է պրոֆեսիոնալ ամենաբարձր մակարդակով մեր՝ եվրոպացիներին լսողությանը հասցնել երաժշտական ինքնատիպ արևելյան աշխարհը, ինչը մեզ համար չափազանց հետաքրքիր ու գրավիչ է: Դրա ամենավառ օրինակներից է կոմպոզիտորի *Նվիրում Կոմիտասին* սոնատը:

Հակոբ Հակոբյան

Հայաստանի ժողովրդական նկարիչ

Մեր ժողովրդի համար անփոխարինելի կորուստ եղաւ Յ. Դելլալեանի վաղաժամ մահը: Այնքան իղծեր չիրականացան եւ մենք զրկուեցանք արուեստի հրաշալիքներէն... Բախտ ունեցայ մեծ յուզումով լսելու իր սքանչելի գործերէն... Այդ պահէն Յարութինը ինծի համար դարձաւ կեանքիս ամենաանմոռանալի հայերէն մէկը: Այդ օրը հոգիս լեցուց հայկական հպարտութեամբ: Չեմ գիտեր, կա՞յ աւելի մեծ արժանիք, քան այն, երբ մարդ օժտուած է ուրիշին յուսադրելու, ինկած տեղէն բարձրացնելու կարողութեամբ: Յարութինը իր գործով եւ կեանքով ամենավառ օրինակն էր խիզախ, պայքարող իսկական հայ մարդու: Յ. Դելլալեանը ինծի համար, հայ ժողովրդի ամենագտարիւն ներկայացուցիչներէն մէկն է, մահուան կողմէ՝ անպարտելի...*

Արևշատ Ավագյան

Բանաստեղծ, նկարիչ

Հարություն Դելլալյանը ստեղծագործական դժվարին կյանքով ապրած արվեստագետի մարմնացում էր: Իր էության մեջ կրում էր բազմադարյան հայ մշակութային առողջ ու կենսունակ մղումը, ազգային ոգու ինքնատիպ դրսևորումները, նրա մշակութային հոգեկերտվածքը:

Երբ մենք 1984 թվականին ծանոթացանք, նա արդեն որոշակիորեն ճանաչված ու զմահատված արվեստագետ էր, մեկն այն քչերից, որ նպատակասլաց ու համառորեն հաղթահարում էր կյանքի դժվարությունները և անմնացորդ նվիրված էր

երաժշտական արվեստին, իր ասելիքը համահունչ դարձնելով ազգային ու համամարդկային արվեստի չափանիշներին:

Հարություն Դելլալյանը երաժշտական ավանդների լավագույն ձեռքբերումների պահպանման ջատագովներից էր, մեծերի փորձը ուսումնասիրողներից, գնահատողներից և ստեղծագործաբար յուրացնողներից մեկը: Ուներ հայեցի մտածողությունը երաժշտական հնչերանգային արտահայտչաձևերով մարդկանց հասու դարձնելու մտահոգությունը:

Հարությունը նորարար էր:

Ազգային ավանդներից չկտրվելով, նա իր ստեղծագործական որոնումների շրջանակի մեջ էր ներառնում ժամանակակից երաժշտության գաղափարակերպարային մտածողության առաջադրած նորամուծությունները: Եվ կարողանում էր իր մտքերը, հույզերն ու զգացմունքները արտահայտել ինքնատիպ լեզվով: 1986 թվականին Հայաստանի կոմպոզիտորների տանը հնչեց *Նվիրում Կոմիտասին* սոնատը հեղինակի կատարմամբ:

Տպավորությունը ցնցող էր: Ազգային ոգուն համահունչ, կոմիտասյան մտածողության մաքուր ու զգացմունքային արտահայտչականությամբ շնչող սոնատը հեղինակային մեկնաբանմամբ ավելի սիրելի դարձրեց Հարությունի կերպարը:

Համերգից հետո ես նրան հրավիրեցի արվեստանոց: Ասաց, որ մենակ չէ: Օրը դարձավ ավելի հիշարժան, քանի որ իր կնոջ՝ Հերմինեի և դուստրերի հետ հնարավորություն ունեցանք արվեստանոցում ավելի մանրամասնորեն խոսելու Հարությունի արվեստի, նրա մարդկային արժանիքների մասին:

Հարությունը հետաքրքիր զրուցակից էր և արվեստանոցային մթնոլորտը հնարավորություն էր տալիս ավելի ճիշտ ու ավելի լավ ընկալելու ստեղծագործական վերելքի մեջ գտնվող կոմպոզիտորին՝ խոսքի, գույն ու զծի, երաժշտության, ընկերության և հարատևության միջավայրում: Այդ հանդիպումից հետո սկսվեց մեր ստեղծագործական համագործակցությունը: Ես նրան հրավիրեցի հանդես գալու հեռուստատեսությամբ: Ազգային հեռուստատեսության գրական-գեղարվեստական հաղորդումների գլխավոր խմբագիրն էի և «Նավասարդ» մշակութային, հեղինակային ծրագրով նրան սիրով ներկայացրի հեռուստադիտողներին:

Յուրաքանչյուր հաջողություն ոգևորում էր նրան, յուրաքանչյուր ձեռքբերում ուրախացնում էր նրա հարազատներին, ընկերներին, նրա արվեստի երկրպագուներին: Բայց կյանքն, իհարկե, ուրախությունների հետ բերում է իր անակնկալ տխրությունները, փորձանքներն ու փորձությունները: Տխրությունները նույնպես մարդիկ կիսում են իրար հետ:

1987 թվականին ես կորցրի անդրամիկ որդուս՝ Արմանին: Հարությունը խորապես վշտացած էր: Երբ լույս տեսավ իմ «Երգերի պսակ որդուս՝ Արմանին» բանաստեղծական շարքը, նա նրբորեն ցանկություն հայտնեց որդուս հիշատակին

նվիրված մի ստեղծագործություն գրելու մասին: Այսպես ծնվեց *Ջրասույզ Արև* դրամատիկ կանտատը: «Երգերի պսակից» Հարությունը ծաղքաքաղ էր արել՝ ընտրելով երաժշտական իր ասելիքին համահունչ տեքստը: Մասնակցեցինք երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի փորձերին: Ասմունքի համար հրավիրվեց Վլադիմիր Աբաջյանը, մոր դերերգով հանդես եկավ անզուգական Հասմիկ Պապյանը, դիրիժորն էր Գևորգ Մուրադյանը:

Դրամատիկ կանտատը ծայնագրվեց և տեսագրվեց, հաղորդվեց ազգային ռադիոյով և հեռուստատեսությամբ: Այն խորհրդանշում ու իմաստավորում էր մարդկային կյանքի մեծ սերն ու ողբերգությունը, ապրումի խորությունը, զգացումի գեղարվեստական հուզաշերտերը:

Հարությունը Ավետիք Իսահակյանի *Լիլիթի* մոտիվներով ուզում էր բալետ գրել: Որոշեցինք, որ լիբրետտոն ես գրեմ: Մենք մի քանի անգամ հանդիպեցինք, բանավոր, ստեղծագործաբար քննարկեցինք բալետի համար անհրաժեշտ սցենարի տարբերակները: Ես մի քանի գրառումներ ներկայացրի նրան: Հարությունը ստեղծագործական վերելք էր ապրում, բայց առողջության հետ կապված խնդիրներ ուներ, ուներ օրախնդիր հարցեր և գալիքի հետ կապված մտահոգություններ:

1988 թվականին Հարությունը առաջին անգամ եղավ իր ծննդավայրում՝ Հունաստանում և Կիպրոսում: Այնտեղ էր, երբ տեղի ունեցավ Սպիտակի սոսկալի երկրաշարժը: Ուղևորությունից վերադարձավ կոտրված սրտով: Իր հարազատների հետ ես նրան դիմավորեցի Ջվարթնոց օդանավակայանում: Առողջությունը վատթարացել էր: Սեփական ցավը, ազգային վիշտը, անհասկանալի, չկանխատեսված իրադարձությունները բզկտում էին հրա հոգին, ալեկոծում ներաշխարհը: Բայց Հարությունը չէր վիատվում: Նա լի էր ստեղծագործական եռանդով, կենսասիրությամբ, հավատով...

1989 թվականի գարնանը իմ մեքենայով Աշտարակ գնացինք: Հարությունը բնության սիրահարներից էր, գեղեցիկ բնապատկերներով ոգեշնչվող ու ներշնչվող արվեստագետներից: Իմ ծննդավայր Աշտարակը առավել էր սիրում իր պատմական հուշարձանների համար: Սակայն տեղ հասնելուն պես ցանկություն հայտնեց Երևան վերադառնալու: «Հարություն, ի՞նչ պատահեց,— շփոթված հարցրի նրան:

«Վատ եմ զգում,— ասաց,— առողջական վիճակս թույլ չի տալիս մնալ, որ մնամ, քո օրը կփչացնեմ»: Ոչ մի կերպ չհամաձայնեց, որ ես իրեն Երևան տանեմ: «Ես ավտոբուսով կգնամ,— ասաց,— դու հանգիստ քո գործերով զբաղվիր»: Հարությունը գնաց՝ մեծ ցավ պատճառելով ինձ:

Շուտով նա կյանքից հեռացավ՝ անհուն կորստի զգացում թողնելով բոլոր նրանց սրտերում, ովքեր ճանաչում էին նրան: Շատ ծրագրեր կիսատ մնացին... Բայց բարեբախտաբար իր կարճատև կյանքում հասցրել էր բռնել հավերժության

ուղին, իր արվեստով, ստեղծագործական սխրանքով, մարդկային կամքի դրսևորումով, հայ մշակույթին տված բարձրարժեք ժառանգությամբ:

Հարություն Դելլալյանը կարճ ապրեց, բայց կարողացավ բռնել բոլոր արվեստագետներին ցանկալի անմահության ճանապարհը, մի բան, որ չի հաջողվում նույնիսկ խոր ծերության հասնող շատ ստեղծագործողների:

Հարությունը երաժշտական ծիրքի բնածին մեծ ժառանգություն էր ստացել իր նախնիներից և կարողացավ այն ստեղծագործաբար հարստացնելով՝ թողնել իր ժողովրդին:

Զուլթան Պեշկո

Դիրիժոր, Հունգարիա

Հարություն Դելլալյանի ստեղծագործությունների հիմնական առանցքը դեռևս իր ծննդից 22 տարի առաջ տեղի ունեցած հայերի ցեղասպանությունն է, որ կատարվել է 1915 թվականին Օսմանյան կայսրությունում: Այս աներևակայելի ողբերգությունը և իր ազգի համընդհանուր ցավը որոշիչ դեր է ունեցել Դելլալյանի արվեստում:

Երբ առաջին անգամ լսեցի նրա ստեղծագործությունները, տպավորությունը շատ մեծ էր, զգացի, որ ականջներիս մեջ միշտ հնչում է այդ երաժշտությունը: Իսկ երբ ծանոթացա մաս իր կյանքի պատմությանը, հասկացա, որ անցած ուղին բոլորովին հեշտ չի եղել, իր կարճ կյանքի ընթացքը լի է եղել պայքարով, մեծ կամքի ուժով և մարդկային բարձր հատկանիշներով՝ իր սեփական ու անձնական աշխարհի երաժշտության համար: Այդ աշխարհում իր վերջնական նպատակը կառուցողական կամ բարդ մոտանքների փորձարկումը չէր, այլ հակառակը, ուսումնասիրում և կիրառում էր ակուստիկ նոր և հիմնալի արտահայտությունների հնարավորությունները, որոնք իր ստեղծագործություններում գտնում են բարոյական խոր դիրքորոշում:

Տիգրան Մանսուրյան

Կոմպոզիտոր,

ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

Սիրով եմ հիշում Հարություն Դելլալյանին, սիրով եմ ուզում խոսել նրա մասին, որովհետև Հարությունը երաժշտական վառ անհատականություն էր, արտակարգ հմայիչ, գեղեցիկ ներաշխարհով անձնավորություն, լավ ընկեր: Ես հիշում եմ նրա՝ Կոմսերվատորիայում սովորելու տարիները. շատ լուրջ, կենտրոնացած, նպատակա-

յին, ծրագրերով ապրող, աշխատող երաժիշտ էր, այն ժամանակ ուսանող-երաժիշտ, մշտապես լուրջ հոգսերի, լուրջ ստեղծագործական խնդիրների հետ կապված:

Նա ինձ քանիցս ցույց էր տալիս իր նոր գրած ստեղծագործությունները, որոնց հետ ծանոթանալով, ես մշտապես ուրախանում էի, որովհետև դրանք այլևս ուսանողական գործեր չէին, պատահական ու անցողիկ հափշտակությունների արտահայտություն չէին, այլ խորապես հասունացած, ներքին մեծ խմորումների ճանապարհով, կյանքի բովով անցած մեծ կենսափորձով մարդու երաժշտական դրսևորումների հիմնավորումն էին:

Այս չափանիշները նրան բնորոշ մնացին իր ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում և երբեք իր համար այսպես կոչված «կոմպոզիտորական տեխնոլոգիայի» խնդիրները չառանձնացան ներքին ապրումներից, համոզումներից: Դրանք առանձին տեխնիկական խնդիրներ չէին, որոնք փորձում էին իրենցով իրականություն ստեղծել, ճիշտ հակառակը՝ իրականության զգացողությունը, իր ապրած կյանքը բերեցին այդ հորինվածքների ստեղծմանը:

Դրանք շատ նոր էին հայ երաժշտության համար այդ տարիներին, շատ անսպասելի՝ իրենց լուծումներով: Նրան գրավում էին թե՛ հնչյունի կյանքն ընդհանրապես, թե՛ հնչյունի կյանքը տարածություն մեջ, կոմպոզիցիաներ, որոնք ուղղված էին ոչ միայն երաժշտահոգեբանական հարցեր շոշափելուն, այլև իրենց էությամբ, կարծես, ձգտում էին ներխուժել առասպելաբանության շրջանակները՝ անհատի միջով դեպի համընդհանուր մի վիճակ, որը դեռևս արևելյան փիլիսոփայության հիմքերի վրա կարող էր գոյանալ: Կասկած չունեմ, որ նա այդ ուսմունքներին լավատեղյակ էր և դրանց հիման վրա էր կառուցում իր գործերը կամ որոշ ստեղծագործություններ: Դեկլայանի երաժշտական մտածողությունը շատ ազգային է, հարուստ այն ելևէջներով, նրբերանգներով, որոնք զալիս են հայկական պարային ռիթմներից, լեզվական առանձնահատկություններից:

Ես օրինաչափ եմ համարում այն, որ նրա երաժշտությունը միանգամից գրավեց արտասահմանյան երաժշտական կազմակերպությունների և առհասարակ երաժշտասերների կամ ունկնդիրների ուշադրությունը: Ուրախ եմ, որ նա իր կարճ ստեղծագործական կյանքի օրոք ապրեց այդ բերկրանքը՝ գնահատվելու բարձր չափանիշներով, ընկալելի լինելու թե՛ իբրև հայ երաժիշտ, թե՛ իբրև արդիական հայ երաժշտության սահմաններն ընդլայնող երաժիշտ:

Երբ մտածում եմ այս ամենի մասին, չեմ կարող խորապես ցավ չապրել այն պատճառով, որ նա շատ շուտ հեռացավ կյանքից: Ինձ համար նրա հեռանալն այնքան առեղծվածային է, որքան և նրա մուտքը երաժշտական աշխարհ: Թվում էր, թե դեռ երկար տարիներ այդպես պիտի աշխատեր՝ իր համեստ վարքագծով: Սակայն իր գործն ամենևին էլ համեստ չեղավ: Դա ստեղծագործական պոռթկում էր, որ հազվադեպ է հանդիպում...

Կարծում եմ, որ իր ստեղծագործական աշխարհը, որն այսօր էլ ապրում է, կունենա իր բեղմնավոր շարունակությունը հատկապես այն երաժիշտների համար, որոնք նույն հետաքրքրություններով են ապրում, ինչով և հետաքրքրված էր կոմպոզիտոր Զարություն Դելլալյանը:

Արմինե Կալենց

Հայաստանի վաստակավոր նկարչուհի

Երբ առաջին անգամ լսեցի Յարութին Դելլալեանի ստեղծագործությունները՝ ցնցուեցայ: Իր տաղանդին մեջ հայու գերբնական ոյժ մը զգացի, աննկուն ոգի... Ինծի շատ հարազատ էր: Աշխատելուս պահերուն պահանջ ունեցայ լսելու անոր երաժշտությունը: Իմ «Քարեր» շարքի նկարներն մեկը ստեղծած եմ Յարութինի երաժշտութեան ներքոյ: Այդ հնչիւններն անորսալի ոգի մը ներդաշնակուծ է նկարներու...*

Արմեն Բուդաղյան

Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր

Վերջերս, անցած–զնացած տասնամյակների մամուլը թերթելիս, աչքովս ընկավ նախկին ԽՍՀՄ կենտրոնական «Սովետսկայա Մուզիկա» երաժշտական հանդեսի նյութը՝ նվիրված Զարություն Դելլալյանի Topophonon կամերային կոնցերտին: Դիպուկ էր նրան տրված բնութագիրը. «Դա լեռնային օդով հագեցած անծայր տարածությունների երաժշտություն է, ուր առավել բնականորեն են միաձուլված ժամանակակից սոնորիստական և ազգային ինտոնացիոն դարձվածքները՝ գործիքային թատրոնի և կոլաժի տարրերի ընդգրկմամբ»:

...Զարությունը ուշ մուտք գործեց երաժշտարվեստ: Կոմպոզիտորների միության անդամ դարձավ միայն 42 տարեկանում, իսկ 53 տարեկանում հեռացավ կյանքից: Նրա գործերը արագորեն ճանաչում ստացան և սկսեցին հնչել համերգներում, ռադիոյով, հեռուստատեսությամբ: Բավական է հիշատակել նրա դաշնամուրի սոնատը՝ *Նվիրում Կոմիտասին*, որը հաջողությամբ ընդունվեց աշխարհի տարբեր բեմահարթակներում, կամ Requiem Trionfale, Ecloga կոնցերտը ֆլեյտայի և կամերային նվագախմբի համար, *Երեք մեկնաբանություններ* կվարտետը փայտյա փողային գործիքների համար, *Ջութակի սոնատը*, *Ֆագոտի սոնատը*... Այդ եր"բ հասցրեց այդքանը գրել...

Եվս մի շնորհ ուներ Զարությունը՝ ընկեր լինելու հազվագյուտ շնորհ: Անկախ մեր հանդիպումների հաճախականությունից, դրանք միշտ բերկրալի էին մեզ հա-

մար: Հարությունի հետ կարելի էր խոսել ամեն ինչի մասին, և նրա արձագանքը լինում էր միշտ շիտակ, ջերմ ու անկեղծ: Նա անցել էր աշխատանքային լուրջ դպրոց և հմտացած էր կյանքի հարցերում: Սակայն հեռու էր կյանքի «նյութեղեն» ընկալումից և ապրում էր հոգևոր չափանիշներով: Շատ գեղեցիկ էր և պահվածքով պարկեշտ: Հաճախ մտածում էի, որ նա առանց դիմահարդարանքի կարող էր դառնալ ցանկացած ֆիլմի հերոս:

Վերջին անգամ նրան հանդիպեցի Դիլիջան տանող լեռնային ավտոճանապարհին: Վերադառնում էի Դիլիջանի կոմպոզիտորների տնից, իսկ Հարությունը շտապում էր այնտեղ՝ աշխատելու: Սակայն նրա ավտոբուսը հիմնավորապես փչացել էր, և վարորդը ապարդյուն ջանքեր էր թափում այն վերականգնելու: Շուրջը խռնվել էին ջղայնացած ուղևորները, իսկ Հարությունը մեղմիկ ժպտում էր. «Բնություն, թարմ օդ, կակաչներ... Մարդուս էլ ի՞նչ է պետք...» այդ տարի կակաչներն իրոք անհամար էին:

Կանգնեցինք, զրուցեցինք, բաժանվեցինք...

Այդպես տպավորվեց հիշողությանս մեջ իմ սիրելի, անդավաճան ընկերը՝ ժպտերես, Դիլիջանի չքնաղ բնության գրկում, ալ-կարմիր կակաչների ֆոնի վրա...

Իգոր Ժուկով

Դիրիժոր, Ռուսաստանի ժողովրդական արտիստ

Մեծ խանդավառությամբ ու հիացմունքով ղեկավարեցի Հարություն Դելլալյանի Կամերային նվագախմբի համար գրված Topographo կոնցերտը, որը տեղի ունեցավ այս տարվա համերգաշրջանի բացման արարողության ժամանակ Մոսկվայի կոմպոզիտորների տան դահլիճում: Հիրավի, այս ստեղծագործությունը հայկական երաժշտության նվաճումներից է: Դելլալյանի երաժշտությունը մեկ անգամ ևս ապացուցեց, որ հայերի երաժշտական միտքը ներքին հսկայական կարողություններ ունի:

Արամ Սաթյան

Կոմպոզիտոր, դոցենտ

Հարությունին համարում եմ բախտավոր մարդ: Հաճախ եմ ասում՝ բանվոր էր: Բայց կյանքի այդ փորձը, որը պակասում է պրոֆեսիոնալ կյանք մտնող շատերին, իրեն օգնեց ճիշտ կողմնորոշվել իրավիճակում: Հարությունը երաժշտության մեջ ունեցավ շատ կարճ կյանք, այսինքն՝ այն բոլոր տարիները, ինչ ուրիշները նվիրում են ուսումնառությանը, որ մոտավորապես կազմում է 15 տարի, նա և՛ ուսանեց, և՛

ստեղծագործեց, և՛ հասավ միջազգային մակարդակի ճանաչման ու աներևակայելի հաջողությունների: Ընդհանրապես ստեղծագործողը պետք է զգա իր ժամանակը: Հարությունը շատ իմաստուն էր, նա իր կյանքի փորձով զգաց ժամանակը: Նա զգաց տարածական երաժշտությունը: «Տարածական երաժշտություն» հասկացողությունը դեռ մինչև հիմա էլ այդքան ընդունված չէ Հայաստանում, քչերն են փորձեր արել այդ բնագավառում: Մի ստեղծագործության մեջ, ընդամենը մեկ գործիքով Հարությունը կարողանում է մանրանկարչությունից հասնել դեպի մեծակտավ, լայնածավալ մի կոթողի, որն այնքան՝ ներդաշնակ, այնքան՝ տիեզերական, այնքան՝ վերացական է և միևնույն ժամանակ այդքան՝ մարդկային:

Սաուլյուն Սոնդեցկիս

Դիրիժոր, կոմպոզիտոր, Լիտվա

Topophono—ն իր խոհականությամբ և դրամատիզմով առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն Դելլալյանի ստեղծագործությունների, այլև ընդհանրապես նվագախմբային երկացանկում: Այս ստեղծագործությունը մեղիտացիա է՝ իրար հակասող և, միևնույն ժամանակ, իրար լրացնող երաժշտական և փիլիսոփայական շերտերի:

Աբգար Մուրադյան

Կլարնետահար, ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր

Հարություն Դելլալյանի հետ ծանոթացել են դեռևս այն տարիներին, երբ երկուսս էլ դասավանդում էինք Արվեստի թիվ 1 դպրոցում: Հաճախ էինք զրուցում ամենատարբեր թեմաներով: Մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում նվագախմբի բոլոր գործիքների հանդեպ, այդ թվում՝ նաև կլարնետի: Ժամեր շարունակ անցկացնում էր իմ դասարանում, մանրամասն հարցուփորձ անում գործիքի ծայնարտաբերման, տեխնիկական հնարքների կիրառման, գունային հնարավորությունների մասին... Հետաքրքրությունը իրոք անսահման էր... Վերջիվերջո հասունացավ կլարնետի համար մի գործ գրելու գաղափարը: Մինչ այդ արդեն ծանոթ էի Դելլալյանի որոշ ստեղծագործություններին: Սկզբում առաջարկեցի նրան գրել սոնատ կլարնետի համար, բայց աստիճանաբար ստեղծագործությունը ստացավ իր վերջնական տեսքը՝ *Meditations* կլարնետի համար (1981):

Ստեղծագործությունը շատ գործիքային է: Այդ գույները, տեքստը իդեալական կերպով համապատասխանում են կլարնետի ռեգիստրային, տոնայնական հնարավորություններին: Շատ հաջողված էին նորարարական էֆեկտները: Այստեղ Հարություն Դելլալյանը առաջին անգամ Հայաստանում կիրառեց կլարնետով ակորդա-

յին հնչողությունների տեխնիկական հնարքը: Ինքը վստահ էր, որ հենց այդպես պիտի հնչի, թեև կլարնետին ընդհանրապես բնորոշ չէ ակորդային տեխնիկան: Առաջին կատարումն իսկ մեծ իրարանցում առաջացրեց կատարող-մասնագետների շրջանում, որոնք առաջին անգամ լսեցին ակորդներ կլարնետով... *Meditations-ը* ծայնագրվեց և իր արժանի տեղը գտավ Հայաստանի ռադիոյի Ռս-կե ֆոնդում: Հետագայում այդ ծայնագրությունը միշտ արժանանում էր հատուկ ուշադրության մասնագետների կողմից: Ուզում եմ հատկապես նշել իսպանական Real Musical հրատարակչության մեծ հետաքրքրությունը, որը հետագայում տպագրեց այն: Հիշում եմ, շատ ոգևորված պատմում էր, որ այն բարձր գնահատանքի է արժանացել և մասնագետները հատուկ նշել են կատարման բարձր պրոֆեսիոնալիզմը: *Meditations-ի* երաժշտությունը շատ հայկական է, միևնույն ժամանակ անչափ ինքնատիպ՝ «դելլալանական»: Հարությունը իսկապես յուրօրինակ մեղեդային մտածողություն ուներ, որ բոլորից տարբերվում էր:

Նա շատ ուշ սկսեց, բայց կարողացավ թողնել մի հարուստ և ինքնատիպ ստեղծագործական ժառանգություն:

Վոլքեր Թեսսմանն

Ֆագոտահար, Գերմանիա

Հարություն Դելլալյանի «Մեդիում» սոնատը ինքնատիպ նորամուծություն է փողային երաժշտության համաշխարհային զանազանում: Այն ֆենոմենալ է իր հնարամտությամբ և կոմպոզիտորի բարձրագույն ներշնչանքի արգասիքն է: Փողային երաժշտության բնագավառում Դելլալյանի մտածելակերպի նորարար միտումները, վստահ եմ, լայն հորիզոններ կբացեն այդ ասպարեզում ստեղծող կոմպոզիտորների, ինչպես և կատարողների համար:

Ավետ Տերտերյան

ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

Հարություն Դելլալյանը տաղանդավոր, յուրահատուկ մտածողության, միշտ նորը փնտրող, իր սեփական լեզուն ունեցող և որ ամենակարևորն է՝ ասելիքի ոչ շինծու անկեղծությամբ օժտված երաժիշտ է:

Նրա ստեղծագործությունը բաժանվում է երկու նշանակալի շրջանների: Առաջին շրջանը ավանդական դասական գրելառճի յուրացումն է, և երկրորդը՝ վերջին տարիներին ստեղծածը, որտեղ նորի որոնումները որոշակիորեն ձեռք են բերել յուրահատկության գծեր: Հատկապես այս ստեղծագործություններն էլ հեղինակին բերել են ստեղծագործական հաջողություններ:

Վերջերս կայացած երիտասարդ կոմպոզիտորների պլենումում կատարված նրա թավջութակի և դաշնամուրի սոնատը, որը իր հիմքում շատ անկեղծ ստեղծագործություն է, օժտված է խորը փիլիսոփայական և ազգային բնութագրով: Այն ունեցավ շատ մեծ հաջողություն՝ արժանանալով ունկնդիրների և երաժշտական քննադատների բարձր գնահատմանը:

Վրեժ—Արմեն Արթինեան

«Յորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, Կանադա

Յարութիւն Դելլաւեան լուսապսակ անունին ուշ ծանօթացած եմ դժբախտաբար. 1980—ական թուականներու վերջերուն էր, երբ Գրական թերթի էջերէն տեղեկացայ իր մասին: Սակայն, ափսո՛ս, շատ չանցած՝ կարդացի նաեւ իր մահուան գոյժը, եւ այդպէս ան, գոնէ ինծի համար, մեր մշակոյթի երկինքէն ասուպի նման պահ մը փայլած, ապա անհետացած դէմքերուն կարգին անցաւ...

Այնուհետեւ տարբեր հեղինակներու կողմէն գրութիւններու շնորհիւ վերարժածվեցա՞վ Դելլաւեանի անունը: Յերմինէ Դելլաւեանի յուշերը իր ամուսնոյն մասին, Յորիզոնի գրական յաւելուածին մէջ՝ նոր հետաքրքրութիւն ստեղծեցին Յարութիւն Դելլաւեանի անունին շուրջ, իսկ այսօր իր երկերու վերայայտնութիւնը տարբեր երաժիշտներու կողմէն այս մեծ արուեստագէտի ժառանգութեան իր արժանի տեղը շնորհեցին մեր երաժշտութեան անդաստանին մէջ:

Ցանկութիւնս է, որ հետզհետէ ան աւելի ու աւելի ծանօթացուի, եւ գնահատուի ոչ միայն հայութեան, այլեւ միջազգային երաժշտասէր հասարակութեան կողմէ:

Արտաշես Շելենյան

Երաժշտական հրատարակիչ, ԱՄՆ

Անցյալ կիրակի ներկա եղա երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի մենահամերգին, որը տեղի ունեցավ Methuen Memorial Music Hall-ում: Նա Միացյալ Նահանգների ամենավարպետ կատարողներից մեկն է, և ամեն անգամ նրան ունկնդրելը, հիրավի, հազվադեպ հայտնություն է ինձ համար: Համերգում առաջին անգամ հնչեց մի նոր և շատ գեղեցիկ ժամանակակից լեզվով գրված ստեղծագործություն, որը նվիրված է Պերճին: Հաղթական Ռեքվիեմը գրված է Եղեռնի 70- ամյակի առիթով: Հպարտանում եմ ամեն անգամ, երբ տեսնում եմ տաղանդավոր հայ մարդու, կոմպոզիտորի, որի ստեղծագործությունները կարելի է համեմատել աշխարհի ցանկացած առաջատար կոմպոզիտորի երկերի հետ: Այդպիսի հայտնություն էին ինձ համար Յարութիւն Դելլաւեանը և իր Հաղթական Ռեքվիեմը: Միայն ափսոսում եմ, որ նման ստեղծագործու-

թյուններ միջազգային երկացանկերում հազվադեպ են հնչում և դրանք լսելու շատ քիչ հնարավորություններ կան: Որոշ գործեր շատ արժանի են դրան: Համընդհանուր ճանաչում ունի Ա. Խաչատրյանի անունը: Սակայն վստահ եմ, որ կան այլ անուններ, որոնք նույնպես արժանի են նման պատվի և վերաբերմունքի:

Պարուհի Թեփեղիկյան

Նկարչուհի

Ծանոթ լինելով դաշնակահար Հարություն Փափազյանի ընտանիքի հետ, խնդրեցի նրա ծայնագրությունները, որպեսզի վերածայնագրեն ինձ համար: Չայներիզի մյուս կողմը գրված էր՝ DELLALIAN. Dedication To Komitas. Խնդրեցի միացնել, և ի՞նչ... Աստվածային, հրաշալի մի գործ. երաժշտության ներգործած ազդեցության տակ աչքիս առջևով անցավ մեր պատմությունը, հայ ժողովրդի տառապանքները, եղեռները:

Եթե Դելլալյանը այլևս ոչինչ չգրեր, կարծում եմ, որ հայ ժողովրդի արվեստի պատմության մեջ կմնար որպես ամենամեծ արվեստագետներից մեկը, քանի որ ոչ մի նկարիչ, ոչ մի կոմպոզիտոր այսպես չի շոշափել այդ մեծ թեման: Ինձ համար այս սոնատը եղել է «Հայր մեր», որը լսում էի անվերջ եւ չէի հագնում:

Այս ուժեղ տպավորությունների մեջ ծանոթացա Մեծն Դելլալյանի հետ, որը կատարյալ համեստության մի մարմնավորում էր: Հայտնեցի իր դիմանկարը նկարելու ցանկությունն և այսպես ստեղծվեց իմ շատ սիրելի կոմպոզիտոր Հարություն Դելլալյանի դիմանկարը, որը իմ արվեստանոցի զարդն է:

Այսօր աշխատելիս էլ Հարությունի երաժշտությունը շատ հաճախ է ուղեկցում ինձ...

Ռուզան Բաբայան

Գեղագետ

...Ասում եմ, թե մարդն աշխարհում ունի իր խորհուրդն ու առաքելությունը: Իսկ եթե դա ճիշտ է, ապա մի լուսեղեն առաքելությամբ ապրեց և ստեղծագործեց հրաշալի մի հայ, երգահան և մանկավարժ, ազգային երաժշտարվեստի հավերժությունը նվիրված մեծ Մաեստրո Հարություն Դելլալյանը:

Ես նրան հանդիպել եմ Երևանի կոմպոզիտորների միության համագումարին: Ճիշտ է, գիտեի նրա երաժշտական բացառիկ կենսագրությունը, սակայն այդ օրը վերջապես տեսա նրան: Հանգիստ ու զուսպ, բայց և բնությունից օժտված ժպիտն աչքերում՝ նստել էր նա իր երաժիշտ ընկերների մեջ: Սակայն նա իր անկրկնելի

արտաքինով, գեղեցիկ ու յուրահատուկ հագուկապով՝ արդեն անհատ էր ամբողջի մեջ: Տարիներ առաջ ես լսել էի նրա թավջութակի և դաշնամուրի սոնատը և իսկույն նկատել էի, որ Զ. Դելլապանը խիստ ինքնադրոշմ էր և իր բնատուր գեղարվեստական մտածողությամբ՝ արդեն նժարավորված: Ես հասկացել էի նաև, որ նա եզակի տաղանդի տեր Արվեստագետ է, որի արտահայտչաձևը հնչյուններն են: Իսկ եթե նա նկարե՞ր... Բայց ահա եկավ մի նոր հսկա կտավ՝ Topophonո—ն և մեկ հզոր ու հուժկու հարվածով բախեց ու բացեց բարու և արդարության ոգու դուռը: Այս ստեղծագործությունը ողջ հայության ապրիլյան Եղեռնի կսկիծն ու ցավն էր, բայց և կոտորածի ռեալ ապացույցը՝ դրված մարդկության առջև: Լսելով այն՝ զգում ես, որ սա մի հրաշք ստեղծագործություն է: Ահա այս հրաշքն էլ բազմիցս հնչեցվեց և լսվեց աշխարհի առաջատար, բայց և բժախնդիր բեմերում:

Topophonո—ում կա մի հատված, երբ մի խումբ հայեր, կարկառելով իրենց ձեռքերը, նայում են վեր՝ առ Աստված, հավատալով լույս փրկությանը կամ հրաշքին, սակայն մենք ցավով ու անսպասելի կորցրինք հենց այդ լուսերգությունը ստեղծած «հրաշքին»:

Այսօր յուրաքանչյուրս, անկախ ազգությունից, Քո ստեղծածից ապշահար, հիացմունքով մեկնում ենք մեր ձեռքերն առ Աստված ու մեծարանքով, հոգով ու անկեղծ նվիրումով թնդում:

Բռավո, բռավո Մեծն Մաեստրո:

Աշոտ Բաբայան

Կոմպոզիտոր

Հարություն Դելլապանը 80—ական թվականների ամենաինքնատիպ կոմպոզիտորներից է: Հզոր ու մեծ տաղանդը, խորը գիտելիքները, միայն իրեն հատուկ մտածողությունն են ընկած նրա յուրաքանչյուր ստեղծագործության հիմքում՝ լինի սիմֆոնիկ թե կամերային:

Արդիական միջոցներով, խորը ազգային հենքով նրա երկերը հասկանալի և հոգեհարազատ են թե՛ հայ, թե՛ այլազգի ունկնդրին:

Մարալ Բեդյան

Երաժշտական քննադատ, Նյու Յորք

Հարություն Դելլապանը *Նվիրում Կոմիտասին* սոնատով ստեղծել է Մեծ Կոմիտասի և հայոց պատմության ողբերգական էջերի երաժշտական հուշարձան:

Այսօրը եւ մաիք ջրգանի երկու կեպերն են,
որոնք անընդհատ պարպում են:


Վախենա՞լ...

Հէ որ դա բնության օրենքն է,

եւ մաիքը չի վախենում,

վախենում եմ

մենախնայունից...



Տեղիւսկ՝
Տարություն Գելլալյան

Տուշեր, հոգիւծութիւն

Տաս օր Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Մ

րեւան—Մոսկվա—Գանդեր, Նյու—Յորք, ապա՝ Լոս Անջելես ճանապարհը հավասար է երկրագնդի շուրջ կես շրջանին: Արեւմտյան կիսագունդը խոր քնի մեջ էր, երբ մեր ինքնաթիռը վայրէջք կատարեց Լոս Անջելեսի օդանավակայանում, ուր հրավիրված էինք՝ ՍՄՄ Ժողովրդական արտիստ Էդուարդ Միրզոյանն ու ես, նրա՝ «Սինֆոնիայի» և իմ Topophonos կոնցերտի կատարման առթիվ: Չնայած այն բանին, որ մենք ուշացումով տեղ հասանք, քանի որ Բոստոնում և Լոս Անջելեսում համերգներն արդեն կատարվել, վերջացել էին, սակայն այն մեծ խանդավառությունը, որ մեզ շրջապատում էին ամենուր՝ վկայում էր համերգների հաջողության մասին, երբ նոյեմբերի 16-ին Լոս Անջելեսի երեք հազար տեղամոց դահլիճը հոտնկայս էր ընդունել հատկապես մեր հայկական ստեղծագործությունները: Համերգներն անցել էին Ամերիկյան երաժշտական փառատոների ծրագրում, Բոստոնի «Սինֆոնովա» նվագախմբի տաղանդավոր դիրիժոր Արամ Ղարաբեկյանի ղեկավարությամբ:


Գիշերվա այս ուշ ժամին հոգնած ու ջարդված, խախտված քնով, վերարկուներն ու պայուսակներն ուսած, ինքնաթիռից՝ անցուղով քայլում ենք դեպի սպասասրահ: Ինչպե՞ս պետք է հյուրանոց գնալ, ու՞մ զանգահարել, որ օգնեն մեզ տեղավորվելու: Քայլում ենք օրորվելով, չկանոնյալ, մի քանի բառ փոխանակում... Եւ ահա մոլորյալ այդ ժամին օդանավակայանի սպասասրահը թնդում է. «Եկա՛ն» բացականչություններից: Եկան. փաթաթվում են կարոտով, համբուրում, գրկախառնվում...

Հյուրընկալ Հայ—Ամերիկյան թատերա—երաժշտական ընկերության անդամներն իրենց ժրաջան նախագահ ու մեծ արվեստասեր Վիկտոր Մարտիրոսյանի գլխավորությամբ ջերմորեն դիմավորում են մեզ:

Բարի գալստյան ծաղկեփնջեր, ողջագուրումներ: Եկել էին հեռուստատեսության ու հայալեզու մամուլի ներկայացուցիչները: Ուրախության արցունքները գունդ են դարձել կոկորդոմա ու խեղդում են ինձ:

Այսօր Երևանի իմ աշխատասենյակում կրկին հիշում եմ նրանց խանդավառ դեմքերն ու տխուր, կարոտով լի հայկական աչքերը, որոնք երբևէ չեն շփոթի ուրիշ ազգի աչքերի հետ, քանի որ միայն հայն է ունեցել այսպիսի ողբերգական ճակատագիր: Աշխարհի որ ծայրում էլ լինի հայը, երբ հանդիպում է մեկ ուրիշ հայի, այդ հանդիպման մեջ կա մի բույր, մի զգացմունք, որը չկա թերևս երկրագնդի և ոչ մի ուրիշ ազգի մոտ: Մեր արևն ուրիշ է, մեր արյունն ուրիշ է: Մեր արևը մեր արյանը տվել է մի այլ բաղադրություն: Արդյո՞ք մի ֆրանսիացի, մի անգլիացի կամ ամերիկացի, իրար հանդիպելուց վերապրում են նման զգացմունքներ, ինչ որ հայը... Անպայման կարոտ կա՝ մեր արյան կարոտը: Անպայման թախիծ կա, մեր դարերի կանչը կա և սրտերի հեքը: Ուզում ես փաթաթվել, համբուրել: Սեղմելով կրծքիդ, արյանդ կարոտը առնել: Ումի՞ց: Բոլորովին անծանոթ մարդուց, որը հայ է սակայն...

Ինչպե՞ս չհիշել Նյու Յորքի օդանավակայանում մեզ արժանավայել շուքով դիմավորող հայկական մշակութային միությունների անդամներին ու ղեկավարներին, որոնք մտերմիկ երեկույթներով նշեցին մեր գալուստը:



Լուս Անջելես, 1986 թ., Hollywood սրահում ելույթի ժամանակ
During the concert at Hollywood Hall, Los Angeles, 1986

Նրանցից ուզում եմ հատկապես նշել տաղանդավոր նկարիչ Մարկոս Գրիգորյանին, որն ապրելով ու ստեղծագործելով մայր հայրենիքից այդքան հեռու, չի կորցրել իր կապն ազգային ավանդույթների հետ: Նրա արվեստանոց-ցուցահանդեսում աչքի են զարնում իտալական շրջանի նկարներն ու քանդակները, իսկ այժմյան շրջանը նրա արվեստում նոր, ուժեղ փուլ է: Հողի ու ծղոտի շաղախից կոմպոզիցիաները մեծ հետաքրքրություն են առաջացրել հատկապես ճարտարապետների մոտ: Այդ ճաքված շաղախը իմ վրա թողեց խոր ցավի ու կարոտի զգացում: Այդ պահին հիշում էի Կոմիտասին.

*Հո՛վ արեք, սարեր ջան, հո՛վ արեք,
Իմ դարդին դարման արեք:*

Նա ծանոթացնում է մեզ «Հինգերորդ ավենյուի», «Ավենյու պարկի», Ռոբվելլե-րի հրապարակի, հանրահայտ 117 հարկանի երկնաքերերի հետ: Նյու Յորքը պատրաստվում է Ծննդյան և Նոր Տարվա տոնակատարություններին: Ամեն ինչ շլացուցիչ է, աչքեր կուրացնող լուսավորություն: Խանութի պատին կոթնած, քնած է մի տղամարդ:

— Էստի համեցե՛ք,— անգլերենով կանչում է ուղղակի գետնին փռած թերթի վրա ժամացույցներ եւ կրակվառիչներ վաճառողը...

20-րդ դարի եվրոպական կերպարվեստի ավանդույթների և ձեռքբերումների հիման վրա ստեղծվեց ամերիկյան նկարչական արվեստը: Հայազգի Ոստանիկ Ադոյանը, նույն ինքը Արշիլ Գորկին, վերապրելով եղեռնի սարսափները, մեծ ազդեցություն է թողնում իր իսկ կողմից ստեղծվող ամերիկյան սյուրռեալիզմի և արստրալկո էքսպրեսիոնիզմի վրա: Ուզում եմ առանձնացնել հատկապես «Ազոնիա»՝ «Հոգևարք» նկարը, որը մեր կոտորածի, վանի մասին է.....

Մեր ելույթները Լոս Անջելեսում ամենուրեք ընդունվում են մեծ ուշադրությամբ:

— Սիրելի՛ հայրենակիցներ,— խոսում է Էդ. Միրզոյանը,— մեր ազգը միշտ եղել է բարի, աշխատասեր, հայը երբեք չի հարձակվել իր հարևան ժողովուրդների վրա: Նա ոտքի է կանգնել միայն իր պատիվն ու հողը, իր կրոնն ու դավանանքը պաշտպանելու, այն էլ հաճախ հենց թշնամուց խլված զենքով: Այսօր մեր զենքը մեր արվեստն է, մեր առաքելությունը՝ խաղաղությունն ու եղբայրությունը:

Հայապահպանման մեծ գործ են կատարում և՛ Նյու Յորքի, և՛ Լոս Անջելեսի հայկական համայնքների կազմակերպությունները, հայկական դպրոցների գոյատևման, հայերեն խոսելու, նաև հայկական սովորույթները պահպանելու համար: Վերջերս Նյու Յորքում մեծ ուրախությամբ նշվեց նորաստեղծ հայկական քսան ընտանիքների կազմվելը:



Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության հեռակա բաժնի երկրորդ կուրսի հունվարյան քննություններն էին անցկացվում: Հանձնաժողովը սպասում էր իմ նվագին: Դաշնամուրի իմ դասատու Փարաջանյանի հետ պետք է նվագեի Յ. Հայդնի դաշնամուրի Ռե մաժոր կոնցերտը: Նա սկսում է նվագել նախաբանը: Ես հիմա պետք է սկսեմ կոշտուկներով բթացած իմ մատներով նվագել մենանվագը... Բացվում է դուռը... երա՞զ է, ի՞նչ է... ներս են մտնում ֆրեզերային գործարանի իմ դիրեկտորը, կուսակցական կազմակերպության քարտուղարը և մեխանիկական արտադրամասի պետը...

Հանձնաժողովի նախագահը ցուցամատը դնում է բերանին, ձեռքով հասկացնում, որ դուրս գան՝ քննություն է: Ես դադարեցնում եմ նվագս:

— Ընկերներ, գործարանի հավաքման արտադրամասը կանգնած է, թողեք նրան:

— Բայց քննություն է....

— Սիրելիներս, մի մեծ արտադրամաս կանգ է առել....

Որոշ բանակցություններից հետո որոշում են, որ ավարտեն ընդհատված կոնցերտը, հետո գնան:

Իմ երկարատև թախանձանքներից հետո նրանք դուրս են գալիս միջանցք՝ դուռը կիսաբաց թողնելով: Ես նվագում եմ միայն կոնցերտի կեսը և Կոմիտասի «Փարուն ա»-ն: Կես ժամ հետո մեծ շաղափող հաստոցի առջև արդեն պատրաստում էի անհրաժեշտ մասերը, որ մյուս կողմից հասցվում էին հավաքման արտադրամաս...

Այսօր 1986թ. դեկտեմբերի 7-ն է:

Կրկին քննություն է ինձ համար: «Հոլիվուդ» հյուրամոցի համերգային սրահում հրավիրում են միկրոֆոնի մոտ: Խոսում եմ հուզմունքով, հաճախ հախուռն զգացմունքներից խառնում եմ բառերս: Շնորհակալություն եմ հայտնում կազմակերպության անդամներին, մեզ համար շատ սիրելի դարձած Վ. Մարտիրոսյանին, նրա տեղակալ Ջավեն Խաչատրյանին, Հյուլեին, Բաբկենին և մյուսներին, ապա՝ մոտենում դաշնամուրին: Նվագելու եմ իմ *Նվիրում Կոմիտասին* դաշնամուրի սոնատը: Բարձրացնում եմ ձեռքերս՝ դահլիճը լռում է: Այս գործի սկզբում կանգնած եմ նվագում, քանի որ սկսվում է glissando-ներով դաշնամուրի բաց լարերի վրա, որը հիշեցնում է առավոտյան մեղմ զեփյուռ, պղնձացած ժայռերից բարձրացող գոլորշի, որը, սակայն, շուտով կվերածվի փոթորկի: Դա Կոմիտասի խռովահույզ ոգին է... կրկին կոկորդուսն խեղդում է գունդ դարձած կարոտի զգացումը:

Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան...

...Պանդուխտ տղան է հիշում հանդում քաղիան անող իր սիրածին: Նարո՞յ, Նարո՞յ ջան, հայը տուն չունի, տո՛ւ լաճ տնավեր...

Վանքի բակում պար է բռնել մի ժողովուրդ, ուսած մեկը մյուսին թափ է առնում, ծնկում գետնին, նորից թափ առնում...

Թնդում է դահլիճը ծափերից... տարբեր կողմերից գալիս են փաթաթվում ու համբուրում: Այո, հիմա հայը տուն ունի, հայրենիք ունի, տեր է իր աշխարհասփյուռ զավակներին: Ցնծում է ժողովուրդը...

Եկել էր հրաժեշտի օրը: Չնայած կարճ էր ուղևորությունը, սակայն շատ հագեցված հանդիպումներով, հանդիպումներ, որոնք տվեցին մեծ ստեղծագործական լիցք՝ մեր հետագա գործունեության համար:


Կրկին հայերով լեցուն էր Լոս Անջելեսի օդանավակայանի սպասասրահը, կրկին ծաղիկներ, ողջագուրումներ...

— Հայտնեցե՛ք մեր սերը մայր հայրենիքին, զավակը երբեք չի մոռանա իր ծնողքը, տարե՛ք մեր ջերմ բարևները մեր եղբայրներին, մեր քույրերին, մամիկներին ու պապերին, մեր ողջույնները՝ Երևանին, Արարատին:

— Այո՛, սիրելի մեր հայրենակիցներ, ծնողքն էլ երբեք չեն մոռանա իր զավակներին, որքան էլ նրանք հեռու լինեն նրանից, մայր Հայրենիքը միշտ ձեզ հետ է, մայր Հայրենիքը ձեր թիկունքում է:

Գիշեր է կրկին: Մեր ինքնաթիռը պատրաստվում է իր թռիչքի մյուս կեսը կատարելու...

Ողջո՛ւյն Արարատ, ողջո՛ւյն իմ միակ ու չքմաղ, իմ երազ ու հեքիաթ Երևան:



Լոս Անջելես, 1986 թ.,
Hollywood սրահում
Ելույթի ժամանակ

During the concert at
Hollywood Hall,
Los Angeles, 1986

ՆՇԽԱՐՆԵՐ

Տայաստանը մարդկության էպիկենտրոն...

*Իմ երջանկության գագաթնակետը՝ ծննդավայրս տեսնել 41 տարի հետո,
համընկավ հայրենիքիս ողբերգության հետ (երկրաշարժ՝ Սպիտակ,
Լենինական, Կիրովական, Ստեփանավան քաղաքներում):*

Ո՞ր ես դու, Աստված...

Մ

յօր դեկտեմբերի մեկն է, 1988 թվական:

Երկու տարի առաջ, այս նույն օրը Էդուարդ Միրզոյանի հետ Նյու Յորքում էի և պատրաստվում էինք թռչել Լոս Անջելես, Հայ-Ամերիկյան երաժշտական ընկերության հրավերով, ուր մնացինք 10 օր:

Երկու օր առաջ էր, որ մենք՝ Կարախ Սուրենյանը, Սիմոն Գրքաշարյանը, Հրաչ Բարսիկյանը և ես զորքերով, զրահամեքենաներով, տանկերով պաշարված Երևանից եկանք Մոսկվա՝ Աթենք և Կիպրոս մեկնելու համար: Պետք է դասախոսություններ կարդանք, ես՝ Կոմիտասի դերը հայ երաժշտության մեջ, ժամանակակից հայ երաժշտության թեմաներով, պետք է նվագեն մաև իմ ստեղծագործություններից:

Մոսկվա թռչելու նախօրեին չքնեցի ամբողջ գիշեր, այն անհամապատասխան, որ մեծ աղջկաս՝ Մարինեի տան լուսամուտի ուղիղ դիմաց կանգնած էին պարետա-

յին ժամը հսկող զրահապատ մեքենաներն ու զորքերը, որոնք ստուգում էին ուշացած անցորդներին ու մեքենաներին:

Մոսկվայում տեղավորվելուց հետո գնացինք դիրիժոր Իգոր ժուկովի տուն, լսեցինք նրա նվագախմբի կատարմամբ իմ Topophobia կոմպոզիցիոնը: Ունկնդրումից հետո մեծ ոգևորությամբ զրուցեցինք շատ երկար: Այսօր ազատ օր է և ես գրում եմ օրագիրս: Հիմա պետք է պատրաստեմ դասախոսությունս Կոմիտասի մասին:

Ժամը 16.00–ն է, սակայն սկսել է մթնել. սա իրոք հյուսիս է...

Հյուրանոցի մեր համարում զրուցում ենք Կարպիսի հետ: Զրույցի տոնայնությունը հուսահատ է, մեկամաղձոտ: Սա անշուշտ գալիս է արդեն որերորդ ցեղասպանությունից. 1915 թվականին հիմա էլ ավելացավ Սումգայիթի եղեմագործությունը, Շուշին, Խոջալուն, Կիրովաբադը, Մասիսը...

Սա քաղաքական խաղ չէ՞ արդյոք մեր գլխին, ե՞րբ պետք է պատժվի թրքական արյունարբու քաղաքականությունը, պանթուրքիզմը գլուխ է բարձրացրել այն էլ Սովետական Միությունում, ուր քարոզվում է եղբայրություն, ազգերի ինքնորոշման իրավունք:

Բարձրացվում է Հոմենիի նկարը, որպես իրենց եղբայր ազգ, կարմիր լուսնի մահիկով, թրքական դրոշմ՝ մահ հայերին, մահ ռուսներին լոգումզներով...

Տաքսու վարորդը, որը մեկ ժամ առաջ ստուգել էր մեր պատվերը, ասաց, որ ժամանակին կլինի մեր մոտ, սակայն ուշանում է: Ես անհանգստացած իջնում եմ ներքև, պարզվում է, որ նա բանտարկվել է վերելակում՝ 2–րդ և 3–րդ հարկերի միջև: Վերջապես վարորդն ազատված է և ուղղություն ենք վերցնում դեպի Շերեմետևո օդանավակայան, ուր երկար սպասում էինք հայտարարությանը: Սակայն հետո, երբ սկսեցինք անհանգստանալ, հաղորդեցին որ վերջանում է դեպի Աթենք մեկնող ուղևորների մուտքը ինքնաթիռ: Խենթի պես վազեցինք Մ21 բաժինը, ուր որոշ պարտադիր գործողություններից հետո բարձրացանք օդանավ:

Օդանավում հանդիպեցինք դոկումենտալիստներ Արա Վահունուն և Պարզևին, որոնք իրենց ֆիլմերն էին տանում Աթենքում ցուցադրելու: Կար նաև վրացական կինոյի ներկայացուցիչների մի մեծ խումբ, որը նույնպես մեկնում էր Աթենք: Աթենքն այսօր դարձել է միջազգային մշակույթի, սպորտի, գիտական մտքի աշխույժ հավաքատեղի:

...Երբ մեր ինքնաթիռը վայրէջք կատարեց Աթենքում՝ ես հողը համբուրեցի... դա ինքնաբուխ պոռթկում էր, վերապրումն էր միայն 41 տարի հետո տեսնելու ու ոտքս դնելու իմ ծննդավայր հողի վրա...

Ես շատ երջանիկ եմ, քանի որ հարյուր հազարավոր հայրենադարձների դեռ մինչև հիմա վիճակված չէ իր ծննդավայրը կրկին տեսնելու բախտավորությունը: Մայրս, հայրս, քույրս, որոնք հեռացել են կյանքից, ծանր վերապրեցին կարոտը, միշտ պատմելով ու վերապրելով այդ կարոտախտը, հատկապես մայրս, որը սովորել էր Հոմոմի մայրապետական դպրոցում: Գիշերները լամպի լույսի տակ, կիսամու-

թի մեջ հայրս պատմում էր իր կյանքից դրվագներ՝ կապված Աթենքի հայ համայնքի հետ: Տարիներ անց քույրս իր ընտանիքով մեկնեց Լոս Անջելես, ծննդավայրի կարոտը սրտում, ուր և մահացավ՝ արցունքոտ մամակներ գրելով ու հիշելով մանկությունը... Մեկ ամիս առաջ եղբայրս իր ընտանիքով մույնպես մեկնեց... սա ահավոր ախտ է, մնացել են ես մենակ ամբողջ մեր գերդաստանից: Սա է երևի պատճառը, որ այսօր նախաճաշից հետո խոր ցավով, կարոտով ու կսկիծով, իմ անցյալի հիշողություններով, իմ հարազատներին վերհիշելով, ինձ ծնող Աթենքի շենքերին, խանութներին, փողոցներին նայելով, մարդկանց ու նրանց խոսակցությունները լսելով, լաց էի լինում...

Երեկ երեկոյան մեզ դիմավորեցին օդակայանում, ծաղիկներ նվիրեցին, որոնք գեղեցկացնում են Պրիամնոս հյուրանոցի իմ սենյակը՝ 7-րդ հարկում:

Ամեն քաղաք իր ուրույն հնչողությունն ունի: Էստոնական այն քաղաքը, ուր հանգստանում էի տարիներ առաջ, հնչողությունը բաղերի ու սագերի կռնչոցն էր հիմնականում: Իսկ Երևանում Արաբկիր թաղամասում ուշ գիշերվա և առավոտյան կանուխ տրամվայի զանգի ծայնն էր: Աթենքում այդ գիշեր քնելուց հետո առավոտյան կանուխ վեռ թռա տեղից: Քառասունմեկ տարի անց իմ ուղեղում պահված հնչյունները արթնացրին ինձ: Դա մանկությանս օրերին լսված ձկնավաճառների կանչն էր, որոնք գովերգում էին իրենց թարմ որսը:

Տերեկը պրն. Ջավեն Գրիգորյանը մեզ տարավ քաղաք, տեսանք հարուստ շուկան, իրենց ապրանքը գովող հույներին՝ աշխատավոր, մաքուր ու արդար մարդկանց:



Հարությունը փոքրիկ Երանիկ ծանոթացնում է նոտաների աշխարհին, Աթենք, 1986 թ.

Athens, 1988. Harutjun introduces the world of notes to little Yeran

Այցեկեցիմք հայկական կաթողիկե եկեղեցին, ուր ես սովորել եմ ծիւ, բողբոջ, կոկոն, ծաղիկ և առաջին դասարաններում... Ահա եկավ Գերապայծառ Յովհաննես Վ. Գոյունյանը, որը մի ժամանակ իմ ուսուցիչն է եղել՝ ճերմակ մազ ու մորուքով, փոքրացած... Հնայած այն ժամանակ էլ փոքրամարմին էր, բայց վառվռուն աչքունքով բարի մարդ էր: Համբուրեցի աջը, հետո ողջագուրվեցի իրեն՝ կարոտս առնելով...

Գնացիմք Պիրեա: Գիշտ է, չմոտեցանք ծովին, բայց նավերը տեսանք, շնչեցիմք ծովի բույրը՝ օդում կախված... Իսկ հայկական դպրոցում մաքրության օր էր, լվանում էին աստիճանները, մաքրում սենյակները, կարոտ... կարոտ... կարոտ...

Այսօր դեկտեմբերի 4–ն է: Գնացիմք Սունիո, ուր գտնվում է Պոսեյդոնի անտիկ ժամանակներից մնացած տաճարը: Կիսաքանդ սյուներից մեկի վրա Ջորջ Գորդոն Բայրոնի մակագրությունն է: Նա, որ իր կյանքը նվիրեց հույն ժողովրդի ազատության պայքարին: Տաճարը գտնվում է բարձունքի վրա, և երբ խմբով բարձրանում էինք, այն ինձ հիշեցրեց Հայաստանը՝ խոր Վիրապ բարձրացող ճանապարհը... Ներքևում ծովն էր իր փրփուրները խփում ժայռոտ ափերին...

Երբ հասանք Աթենք, ժամը 19.00–ն էր: Գնացիմք հունահայկական դպրոց, ուր պրն. Ջավեն Գրիգորյանը հայկական բաժնի տնօրենն է: Նա միաժամանակ «Նոր աշխարհ» շաբաթաթերթի խմբագիրն է: Շատ բարի, ազնիվ և հայրենասեր անձնավորություն: Մասնակցեցիմք Վազգեն Առաջինի կողմից չորս հոգու Սահակ և Մեսրոպ Մաշտոցի մեդալների հանձնման արարողությանը:

Որոտընդոստ ծափերի ներքո ներկայացրին մեզ՝ որպես հայրենի կռուներ:

Այսօր դեկտեմբերի 5–ն է: Պետք է գնանք Գալփական դպրոց, հանդիպում է նշանակված հայ դպրոցականների հետ: Այս հանդիպումը շատ սրտառու էր, մեր գալու ժամանակ ընդմիջում էր, երեխաները վազվզում էին դպրոցի բակում: Ընդմիջման վերջը ազդարարող զանգի ախորժալուր դողանքը իր մեջ կրկին խլրտացրեց տարիների հուշը, երբ մեր դպրոցի բակում այդպես վազում, թռչկոտում էինք... Սրահի մեջ հավաքված երեխաների մեջ ինձ տեսա, հագիվ 7–8 տարեկան... մոտեցա, շոյեցի նրան: Սա նախակրթարանն է, հարցրի երեխաներին՝ գիտե՞ն արդյոք ուր է իրենց հայրենիքը՝ Հայաստանը... ո՞նց գլուխները շարժեցին բացասաբար, մեկն էլ ասաց. այն, որ Ռուսիայի մո՞տ է...

Երեխաները երգեցին, արտասանեցին: Այնուհետև ելույթ ունեցանք մենք: Բոլորիս ելույթի մեջ առկա էր շնորհակալության խոսքը Հունաստանի կառավարությանն ու հույն ազգին, Մեծ Եղեռնից մազապուրծ եղած հայերի պահպանմանն ու գոյատևմանը սատարելու համար, որոնք հանգրվան էին գտել հունական հողում: Այսօր մենք հզոր ենք մեր հայրենիքով, սակայն դեռ շատ հայեր ապրում են հայրենիքից դուրս, և նրանց պահպանումն ու գոյատևումը մեր բոլորի հոգսն է:

Նվագեցի «Քելե, քելե» և «Չինար ես» կոմիտասյան երգերը: Սրահի պատերին

փակցված էին Պարույր Սևակի և Ավետիք Իսահակյանի գծանկարները: Վերջում հույն դաստիարակչուհուն նվիրեցի Հայաստանի հանրապետության նկարազարդ ավբոնը:

Երեկոյան հրավիրված էինք ճաշկերույթի: Հավաքույթի ընթացքում փոխանակում ենք կարծիքներ, ես ասում եմ, որ պետք է քաջալերել միմյանց, որ մենք մեկ ազգ ենք և պետք է այս դժվարին օրերին իրար պահենք, չմտածելով բացի մայր հայրենիքից ոչ մի ուրիշ մանր անձնական հաշիվների մասին: Եթե փուշ է խրված մարմնի մեջ, պետք է հանել շուտափույթ, բայց երբ այն խրված է սրտի մեջ՝ այստեղ մտածելը կործանարար է: Շատ են ծափահարում...

Դեկտեմբերի 6-ն է: Առավոտյան մեկնում ենք զբոսանքի Կորնթոսի կողմերը: Այս մասուն հնագույն շատ հուշարձաններ կան: Հակառակ այս բոլորի, տրամադրությունս վատ է: Նախընտրեցի առանձնանալ, մենակ մնալ կոթողների հետ, շոշափելու, զգալու ցանկությամբ:

Շարժվում ենք առաջ: Եկանք Միկենես քաղաքի ավերակները, որոնք պատկանում են Հոմերոսի ժամանակներին, որը բավական հզոր քաղաք է եղել: Մի փոքր այն կողմ Ագամեմնոնի դամբարանն է դրոմոսով (ճամապարի): Հսկայական այս քարերը՝ մոտ 5մ երկարությամբ և 1մ լայնությամբ, ինչպե՞ս են բերել և հատկապես դրոմոսի մասուն շարել, ի՞նչ տեխնիկա է եղել, որ կարողացել են կառուցել: Ձարմանալ կարելի է, այս զգացումն են ունեցել միշտ, դիտելով նաև մեր հայկական կոթողները:

Ահա եկանք ծովափ, նավահանգիստ է...

Մոտեցա ափին. կարոտով ջրերին ձեռք տվեցի: Ինչպե՞ս կուզեի փարվել այդ ջրերին, որոնք ինձ հիշեցնում էին մանկությանս օրերը, երբ հույն ընկերոջս՝ Ստեփոյի հետ, Աթենքի մեր Դուրդուքի թաղամասից գնում էինք Ֆալեիրո ծովափը՝ մեր ինքնաշեն նավակները բաց թողնելու ջրերի մեջ, որոնց թելերը ձգելով տանում էինք դեպի հեռու ապագան... Այս ջուրը կապույտ հեքիաթ էր իմ կյանքում: Այսօր ահավոր է իր խորությամբ, անժայրածիրությամբ, հզորությամբ... Այն ժամանակ դեռ 8-9 տարեկան, մեզ քշում էին ափից բարի ձկնորսները, իսկ հիմա եթե ընկնեմ ջուրը՝ փրկում չկա, կգտնվեմ ջրերի խորքերում... հիմա ես ծերանում եմ... ուժերս թույլ են... վախ է մեջս... Ավտոբուսում իմ ետևում նստած աղջիկը հիշեցնում էր ընկերոջս՝ Ստեփոյի քրոջը՝ Աթինուլային, որին երևի թե մանկությանս տարիներին համակրում էի և որը 41 տարի անց կրկին հիշեցնում է երջանիկ, թեկուզ մի քիչ խեղճ մանկությունս...

Մանկության օրեր, երազի նման

Անցաք, գնացիք, էլ չեք դառնալու...

Եկանք Էպիդավրոսի բացօթյա թանգարանը: 112 աստիճաններ, 55 մետրեր շարք, 1800 հոգի է տեղավորվում:

Կենտրոնում մի խումբ ռուսներ երգում են «Օչի չորնիե» երգը: Այս ի՞նչ հնչողություն է, ասում են աշխարհում մնալը չկա: Ես բարձրանում եմ ամենավերևի շարքը, որից հետո սկսվում է նոճու անտառը: Ինչ—որ մեկը մետաղյա դրամը գցում է կենտրոնի մարմարե քարին, որի ծայնը հասնում է ինձ՝ հեռու վերևում: Ամեն տարի հունիսի 15—ից մինչև սեպտեմբերի 15—ը, ուրբաթ և շաբաթ օրերին Աթենքից 165 կմ մեքենաներով գալիս են լսելու և տեսնելու Սոֆոկլեսի, Արիստոտելի, Էսքիլեսի ողբերգությունները:

Այսօր դեկտեմբերի 7—ն է: Ճիշդ այս օրը 1986 թվականին Լոս Անջելեսի Յոլիվուդ սրահում համերգ—հանդիպում էր:

Ազատ էի ամբողջ օրը, վատ էի զգում: Ցերեկը, մինչև ժամը 3—ը հյուրանոցում էի, հետո կարճ ժամանակով փողոց դուրս եկա և ո՛վ հրաշք... Մեկ, երկու փողոց անցնելուց հետո, ինձ գտա Ջապիոնում, որի պուրակում հաճախ էի լինում մորս հետ... Մի կողմում մարմարյա օլիմպիական ստադիոնն էր, մյուս կողմում՝ Ակրոպոլիսը: ... Այս ի՞նչ հեքիաթի մեջ ընկա... Աչքերիցս գլորվող դառը արտասունքի վերհուշերիս մեջ պաշտելի մայրս էր, անմեղ ու անհոգ մանկությունս, և այս պահը... Ես՝ ինձ ծնած հողի վրա...

Վերադարձա հյուրանոց: Եկան մեր ետևից: Ելույթներ եղան ընդհանուր առմամբ Հայաստանի վերածննդյան 68—րդ ամյակի առթիվ և Ղարաբաղյան իրադարձությունների շուրջը: Լսեցինք, որ Հայաստանում Լեւոնակաճի կողմերը 7 բալանոց երկրաշարժ է եղել: Աստված մի՛ արասցե, որ այն հասնի Հոկտեմբերյանի կողմերը, ուր ատոմային էլեկտրակայանն է...

Ես էլ ելույթ ունեցա, հետո նվագեցի, բայց դաշնամուր է բերված, որի համար շատ ափսոսացի, քանի որ իմ սոնատի համար անհրաժեշտ է հորիզոնական դաշնամուր: Նման սիրողական մոտեցմանը շատ դեմ եմ: Նվագեցի մի կերպ, սակայն չէ՞ որ սա արվեստ է և այսպիսի մոտեցումը սահմանափակում է երաժշտության ազդեցության իրական չափերը: Իմ նվագելը ես սուրբ գործ եմ համարում:

Դեկտեմբերի 8—ն է: Ազատ էինք ամբողջ օրը: Գնացի Ակրոպոլիսի կողմերը, երբ վերադարձա՝ ասացին որ Հայաստանում զոհեր կան մոտ՝ 30.000 մարդ... Սա արդեն Ղարաբաղից հետո մեծ փորձանք ու կոտորած է մեր ազգի գլխին: Հունական հեռուստատեսության լուրերում հայտնել էին, որ Գորբաչևը դադարեցրել է ճամփորդությունը Կուբա և Անգլիա և ԱՄՆ—ից ետ է վերադառնում Հայաստանում կատարվածի պատճառով: Պրեզիդենտ Պապանդրեուն ցավակցություն է հայտնել մեր կառավարությանը:

Երեկոյան հրավիրված էինք պրն. Ստեփան Յաղուբյանի տունը: Այստեղ իմացանք, որ զոհերի թիվը հասնում է 100.000—ի: Տազնապը մեծանում է բոլորիս մեջ:

խնդրում են մի բան նվազել, ասում են՝ այս պահին երկի վայել չէ ընդհանրապես այդ մասին խոսել:

Դեկտեմբերի 9-ն է: Երեկոյան գնում ենք Ֆալեիրո՝ ժողովի: Հավաքվել էին թվով 21 հոգի՝ մեզ հետ միասին, պրն Աղասյանը, Զ. Գրիգորյանը, Ս. Յաղուբյանը, Խաչիկը, Հովհաննեսը, Ղազարը, եկել էին նաև «Արաքս» և «Սևան» միությունների ներկայացուցիչները: Եկավ նաև թեմի առաջնորդ սրբազան Գալփակյանը:

Օրակարգը մեկն էր՝ ինչպե՞ս օգնել Հայաստանի երկրաշարժից տուժածներին: Որոշում են դրան հանգամակել, ուղարկել Ս. Էջմիածին, որ կաթողիկոսը տա տուժածներին: Սկսվում է բանավեճ, որ դրամը եկեղեցականները չեն տալու, այլ ժողովուրդը: Բոլոր նրանք, ովքեր կցանկանան մեկնել Հայաստան օգնության նպատակով՝ ճանապարհը բաց է: Կազմում են համձնախումբ, որի մեջ մտնում են 5 հոգի տարբեր կազմակերպություններից, սրանցից ամեն մեկը պիտի ունենա իր ենթախմբերը: Նրանք պետք է գնան տները և հավաքեն օգնությունը, ով որքան կարող է: Ուզում են հաշիվ բացել բանկում: Որոշ մարդիկ ցանկանում են օգնել, բայց թերթի միջոցով իրենց տված գումարի չափը գրվի, նաև ազգանունը, բայց այս դեպքում քիչ դրամ տվողը, չի ուզեմա, որ գրվի իր անունը, ինչպե՞ս անել... մենք դուրս ենք գալիս, չենք ուզում իրենց գործերի մեջ խառնվել:



Կիպրոսի Հանրապետության նախագահ Վասիլիոսը արյուն տալու պահին, Նիկոսիա, 1988 թ.
Vasilios, President of the Republic of Cyprus is giving blood, Nicosia, 1988

Մի ակնթարթ մղձավանջի մեջ եմ ընկնում, կարծես թումանյանական ժամանակները լինեն... սովյալներին պահածոներով ապահովել, անօթեաններին՝ տաք շորեր... եկողը ծնեմ է, այն էլ Լենինականում, իսկ Սպիտակի, Կիրովականի ավերակների տակից դեռ կենդանի մնացած մարդկանց ծայրեր է լսվում...

... Աստված, չե՞ս տեսնում այս բոլորը... եթե կաս, ո՞ր ես...

Հայաստանում ամսի 10-ին և 11-ին սուգ է հայտարարված ... Ձոհերի թիվը անընդհատ փոխվում է: Աշխարհի ամեն կողմից մարդիկ շտապում են օգնության: Հունաստանի Կարմիր խաչը 10 միլիոն դրախմա է տրամադրել: Բնակիչները զանգահարում են ընկերություններին, խնդրում են հայտնել, կարելի է ուղարկել տաք ծածկոցներ, տարբեր դեղորայք... Առաջինը արյուն է տվել Սալոնիկի քաղաքապետը, կոչ անելով մյուսներին: Ալեք Մանուկյանը մեծ օգնություն է ուղարկում:

Հունաստանի հեռուստատեսությունն ամբողջ հաղորդման ընթացքում, հատկապես լուրերի ժամանակ, ցույց է տալիս Հայաստանը, որպես բիբլիական ողբերգության կենտրոն: Թերթերը լուսանկարներ և հաղորդագրություններ են տպագրում առաջին էջերին...

— Մի՞թե չես տեսնում, ո՞վ Աստուած...

— Ո՞վ կարող է մխիթարել այս ողբացող կնոջը...

— Այս ի՞նչ ցավ է այս խեղճ ազգի գլխին...

— Այս մեծ ցավը, իր ահավորությամբ դեռ հետո պիտի զգացվի...

Հույները ողջ սրտով ողբում են հայերի մեծ ցավը, արտասվում են այս մասին խոսելիս: Բոլորն ուզում են օգնել հայերին... աշխարհում մարդկայնություն կա, բոլոր ազգերը չեն, որ ընդունակ են օրորոցում մանուկ խեղդել...

Այսօր դեկտեմբերի 11-ն է, Պերիստերիի հայկական եկեղեցում հոգեհանգիստ է... մոմեր վառեցի... միշտ մոմ վառելիս, Աստծուց խնդրել եմ օգնություն՝ ընտանիքիս բարօրության, առողջության համար, նաև հեռու-մոտիկների համար: Այսօր մոմերը վառելուց բավական հետո միայն ինձ բռնեցի այն բանում, որ ընտանիքիս համար ոչինչ չեմ խնդրել, այլ օգնություն աղերսեցի ազգիս համար...

Պատարագից հետո, քարոզով հանդես եկավ սրբազան Գալփականյանը: Նախորդ օրը հանձնախմբերը կարողացել էին ի մի գալ հանուն ընդհանուր գործի, կարծես ռամկավար, հնչակյան, դաշնակցական կողմերը հասկանում են վերջապես, որ ազգի ցավը միասնության կարիք ունի, պետք է դեն նետել բոլոր մանր զգացումները, վիրավորվածությունը ... Միայն թե այս միաբանությունը հարատևի:

Հետո բոլորս միասին գնացինք Գալփական դպրոց, ուր կազմակերպված էր հանգանակություն՝ ըստ ցանկության:

Դեկտեմբերի 12-ին գերապայծառ Գոյունյանը խնդրեց շնորհ անել իր մոտ: Դեկտեմբերի 13-ին գնացինք հրաժեշտի երեկոյին Արարատ միության մեջ:

Խոր լռության մեջ, բոլորը հոտնկայս, մեկ րոպե լռությամբ հարգում են զոհ-

վածների հիշատակը, այնուհետև ունենում ելույթներ: Չորսս էլ խոսեցինք, շնորհակալություն հայտնեցինք. իմ խոսքի մեջ այն էր շեշտված, որ ծննդավայրս տեսնելու ուրախությանս արցունքները խառնվեցին հայրենիքիս ողբերգության հետ... մենք դեռ չենք զգում եղած ողբերգության մեծությունը, երբ գնամք տուն, մոր պիտի զգամք ու տեսնենք... Մաղթում եմ բոլորին համբերություն, ուժեղ կամք և համախմբություն: Նվագում եմ *Նվիրում Կոմիտասին* սոնատը... մոտենում եմ մարդիկ արցունքոտ աչքերով, շոյում ձեռքերս՝ ասելով իրենց հոգու շնորհակալ խոսքը, որ երաժշտության կախարդիչ, ոչ սովորական հնչյունների միջից իրենք էլ տեսան Կոմիտասին, Սևակին, կրկին անգամ վերապրեցին Մեծ եղեռնի արհավիրքը...

Ընթրիքից հետո հրաժեշտ ենք տալիս, գրկախառնվում այս պարզ ու համակրելի մարդկանց, որոնք ինձ ասում են՝ չենք մոռանա երբեք այս երաժշտությունը...

Դեկտեմբերի 14-ն է: Մեզ բերում են օդանավակայան, որտեղից գալիս ենք Լառնակա՝ Կիպրոս:

Գալուստ Էքմեքյանի տանը հեռուստատեսությամբ լսում ենք վերջին լուրերը, կրկին վերապրելով ավերակների տակից հանված մարդկանց ողբն ու ուրախությունը: Մի մարդ, ավերակների տակից հանելով, փրկել է 20 մարդու կյանք, սակայն վերջում ինքն է մնացել տակը... Առավոտյան գալիս ենք Մելքոնյան կրթական հաստատություն, ծանոթանում ուսուցիչների հետ, որոնց մեջ է նաեւ Շաքե Վարսյանի քույրը՝ Սոսին:

Ժամը 12-ն է: Հիմա գալու ենք Կարմիր խաչի արյան շտեմարանը, ուր ծեր ու երիտասարդ գալիս են արյուն տալու: Սպասում ենք Կիպրոսի Հանրապետության նախագահ Վասիլիոսին, որը նույն առաքելությամբ գալու է այստեղ: Փողոցները չեն փակված նրա գալու առիթով, ոչ մի արտակարգ երևույթ, սակայն մեր կողքին կազմած են քաղաքացիական զգեստներով տղաներ, ձեռքերին ընդունիչ-ընկալուչներ:

Սպասում ենք...

Մեզ է մոտենում հաստատության տնօրենը: Նա եղել է Կիպրոսի առողջապահության նախկին նախարարը: Մոտենում է նաև երեսփոխան Գալանճյանը: Այսօր պետք է երեք օդանավ, որպեսզի դեղերով ու ծանրոցներով 60-70 տոննա ապրանքը տեղափոխեն Հայաստան: Ռադիոն հայտարարել է արյան օգնության մասին: Շատ հուզիչ է սա...

BBC-ն հայտնել է, որ Խորհրդային Միությունը բոլոր երկրներից արյուն է վերցնում, բացի Թուրքիայից, ասել է. «Առայժմ պետք չէ»:

Ահա եկավ հանրապետության նախագահը, ձեռնվեց մեզ հետ: Բոլորիս ներս հրավիրեցին: Նա պառկում է թախտին, նկարում են, շատ ժողովուրդ է հավաքվել այս արարողությանը: Գլխավերևում Հիսուսի նկարն է... Արյուն են տալիս...

Նա աչքն էլ չի թարթում... հանգիստ պառկած սպասում է... Արյունը վերցնում է Կիպրոսի առողջապահության նախարարը:

Առողջապահության նախարարը 30–35 տարեկան՝ շատ բարեհամբույր մարդ է: Արարողության ավարտից հետո ինքն էլ է պառկում նախագահի՝ Վասիլիոսի կողքին և արյուն հանձնում...

Իրենցից հետո շատերն են նույնը կրկնում: Ես անգոր են զսպել արցունքներս... հույն թղթակիցը հարցնում է, ի՞նչ է եղել, հետո իմանալով, որ Չայաստանից ենք, ցավով գլուխն է օրորում, կարեկցանքով սեղմում մեր ձեռքերը, հուզվում մեր հետ...

Հավաքվել են թերթերի, ռադիոյի, հեռուստատեսության ներկայացուցիչներ, նկարում են, հարցազրույց վերցնում: Ազդագիր է կախված վերևում, պատին.

«Արյուն տվեք, կյանքեր փրկեք»:

Թղթակիցը մոտենում է նախագահ Վասիլիոսին և հարցնում.

— Ձեր արյունը պետք է խառնվի հայի արյան հետ, չէ՞ որ ձեր արյունը թագավորական տոհմից է սերում:

— Ինձ համար հային արյուն տալը մեծագույն պատիվ է...

Շնորհակալություն ենք հայտնում և՛ նախագահ Վասիլիոսին, և՛ առողջապահության նախարարին, բոլորին: Մենք դուրս ենք գալիս, կանգնում մոտքի մոտ, կողք–կողքի: Դուրս է գալիս նախագահն՝ իր շքախմբով, ծափահարում ենք: Դրսում հայերի հոծ բազմություն է: Բոլորի աչքերում՝ անասելի ցավ ու կարոտ...

Եկանք Մելքոնյան վարժարան, այնտեղից՝ Չայաստանի օգնության կենտրոն: Ինչքա՛ն ապրանք են բերում հույները պայուսակներով, փաթեթներով, որոնք լցնում են արկղների մեջ, բարձում մեքենաները: Ինչքա՛ն մելքոնյանցիներ են եկել, օգնում այս ընդհանուր գործին:

Տղամերը, որոնք ընդունում են օգնությունը, ոչ մի գրանցում, թե ո՞վ բերեց, ինչքան բերեց և ի՞նչ բերեց... Ահա աչ կողմում մոտ 10 տղա արկղները փաթեթավորում են, կպցնում երիզներով, նշումներ անում արկղների վրա: Մի կին, որը նույնպես տաք շորեր է բերել, ասաց. «Երեկ Լեմինականում էլի 60 հոգի են հանել փլատակների տակից»: Չեն կարողանում հավատալ եղածին: Երեկ Աթենքում իմացանք, մի հույն գործարանատեր 3000 տաք ծածկոց է ուղարկել, հիմա սպասում են այստեղ Նիկոսիայում մի ֆաբրիկատերի 5000 մանկական շորի ուղարկմանը:

Ժամը 16.00–ն է: Գտնվում ենք Կիպրոսի Հանրապետության գերագույն խորհրդի նիստերի դահլիճում, շուտով կսկսվի նիստը, նվիրված Չայաստանին օգնելու հարցին:

Չորս կուսակցություն է այստեղ, երեսփոխանները աստիճանաբար գալիս են, իրենց հիմնական տեղերը գրավում: Ժամը 16.15 է, նախագահը ոտքի է կանգնում, նրա հետ՝ բոլորը, սկսվում է նիստը: 36 երեսփոխան է, որոնք ներկայացուցիչներն

են երեք տարբեր ազգերի: 55 հազար մահ կա, 500 հազար անօթևան... եղբայրական հայ ժողովրդին օգնել է պետք դեղերով, հագուստով...

Խոսքը տրվում է երեսփոխան Արամ Գալաճյանին: Նա խոսում է 1915 թվականի Մեծ Եղեռնից հետո այսպիսի մեծ աղետի մասին, հայտնում մահ հավաքված օգնության մասին:

Նախագահողը հրավիրում է մեկ րոպե լռությամբ հարգել բազմահազար զոհերի հիշատակը: Բոլորը ոտքի են կանգնում...

Այսօր դեկտեմբերի 16—ն է: Նախաճաշեցինք հյուրանոցում:

Եկանք Մելքոնյան վարժարան, կարդում ենք թերթերը՝ անգլերեն, հունարեն, մեջբերումներով «Պրավդա» թերթից: Հայերը մերժել են ազերիների օգնությունը, գրում է «Պրավդան»: Էլի ավերակների տակից մարդիկ են հանել, 30, 20, 60 ...

Կարդում ենք մահ, որ ազերիները մի կողմից օգնության առաջարկ, մյուս կողմից խնջույքներ են անում, ուրախանում մեր դժբախտությամբ: 20.000 վրաններ, որ ուղարկել են աղետյալներին՝ կորել են...

Դիմացս հունարեն թերթ է, կարդում են վերնագիրը.

«...Մարդկության ողբերգությունը իր ողջ «մեծությամբ»...

Առավոտյան մեր ետևից եկավ տաքսին, տարավ Լիմասոլ՝ Գալուստ Էքմեքճյանի մոտ:

Եկանք Կուրիոն պատմական վայրը: Հիմնվել է Քրիստոսից 2—3 դար առաջ: Խճանկար է հատակը, նման Գառնիի հեթանոսական տաճարին:

Ամեն տարի ամռանը, այս տարածքում, որը գտնվում էր անգլիական տիրապետության տակ, Շեքսպիրյան փառատուն է անցկացվում: Ծովը հանգիստ է լինում, ո՛չ այնպես, ինչպես հիմա է: Պրն. Էքմեքճյանի մեքենան չի կարողանում դիմադրել քանու հզորությանը, կարծես դժվարությամբ է առաջ գնում: Հասանք Պաֆոս. սա Աֆրոդիտեի փրփուրներից ծնված տեղն է, սա մի հրաշք հեքիաթ է... իրոք հավասարազոր Աֆրոդիտեի գեղեցկությանը, մարդկության երազանքներին...

Եկանք բլրի վրա գտնվող ռեստորանը, մարդ չկա, մենք ենք միայն: Այստեղից փրփուրները ավելի հեռվից են երևում՝ նրանց գոյամալը, նրանցից Աֆրոդիտեի ծնունդը...

Ահավոր փչում է քամին. ալիքների ծայրը կարծես գեհեներից է գալիս... Մենք նստած ենք ուղիղ դեպի ծովը նայող ապակե պատի առաջ: Ահա մա փրփրել է ավելի: Ալիքները ուժեղ շառաչով խփվում են այս ապակե պատերին, որոնք մոտ 5 մետր արդեն առջևում ծածկված են, բայց ամբողջ ապակու վրայով հոսում է ջուրը...

Իսկապես մենք գտնվում ենք հեքիաթի մեջ...

Հիմա քիչ հանդարտվեց ծովը, մի քանի տեղեր լույսի ցուլքեր են երևում ջրերի վրա, նոր պատկեր բացելով ծովի վրա՝ լույսի շերտեր...

Արևն ելավ, ամեն ինչ փոխվեց, հիմա փրփուրներն ավելի ճերմակ են, քիչ առաջ մոխրագույն էին, մութ, աղտոտ... Այ՛ թե կնկարեր Այվազովսկին...

Պրն. Գալուստ էքմեջճյանը հայտնեց, որ այսօր երեկոյան ժամը 7.00–ին, պետք է նվագեն Մելքոնյան կրթական հաստատությունում: Եկանք Լիմասոլի եկեղեցի դպրոցը, որը միաժամանակ օգնության կենտրոնն է:

Արկղներ են շարված. 16 հոգի են. դասավորում, տեղավորում են օգնության փաթեթները: Մի կին գրում է արկղների վրա. «Թող Աստված օգնի հայ ժողովրդին... Դույն կին է՝ ոչ անույն, ոչ ազգանուն: Այս պահին էր, ես փղծկալու աստիճան հուզված, լսեցի այն, որ աղջիկներից մեկը ցույց տվեց մի գրություն, որը դրված էր նվիրած հագուստեղենի մեջ: Պրն. էքմեջճյանը կարդաց և ասաց. «Այս գրությունը շատ հետաքրքիր է ու գրված է մեծ հոգով...»: Պետք է թարգմանեն հետո, տան մեզ:

Երեկոյան հանդիպում էր, ուր ելույթ ունեցա, պատմեցի Հայաստանի մշակույթի, հայ երաժշտության, կերպարվեստի ներկայացուցիչների մասին... Քաջալերեցի մելքոնյանցիներին, իրենց հայրենասիրության համար...

Նվագեցի ... կատարումից առաջ խնդրեցի, որ ծափեր չլինեն...

Մի քանիսը հարցրին՝ արդյո՞ք սոնատը ծայնագրված է: Ես ասացի, որ Լուիզ Սիմոնը Նյու Յորքում մեծ ալբոմ է պատրաստել:

Այսօր դեկտեմբերի 18–ն է, կիրակի:

Նախաճաշից հետո եկել են ու պառկել: Եղածը ցնցել է բոլորիս: Ինձ շատ վատ են զգում... զանգահարում են: Ո՞վ է արդյոք... Նորից զանգ, նորից ու նորից... վեր են կենում, պրն Գալուստն է, եկել է հյուրանոց և հարցնում է.

— Կարելի՞ է վերև բարձրանալ, դեղ է բերել...

Պրն Գալուստը շատ բարի մարդ է, ինչքան էլ ասում են, որ նեղություն չքաշի, ասում է. «Մեր պարտքն է հայրենիքից եկած յուրաքանչյուր եղբորը շրջապատենք հոգատարությամբ»: Ես շնորհակալություն են հայտնում:

Հաջորդ օրը տեղ չգնացի:

Այսօր դեկտեմբերի 20–ն է, առավոտյան արթնացա ժամը 6.00–ին: Այսօր ավարտվում է իմ կյանքի ևս մեկ ճանապարհորդություն, որին սպասել էի ամենաերկարը և որը եղավ ամենացնցողը: Շտապում են, ուզում են հնարավորին չափ շուտ հասնել Հայաստան, իմ վիրավոր ու ողբացող Հայրենիքս:

20.12.1988 թ., Երևան

Երկրաշարժից հետո...

Ողբամ մեռելոց, կոչեմ ապրողաց

Մ

յսօր, ավելի քան երբևէ, մեծ է մեր վիշտը: Դեռ 1915 թվականի Եղեռնի վերքերը չբուժած, դեռ Տեր Զորի ճանապարհին, անապատներում, Եփրատի արյունոտ ջրերի խորքում զոհված մեր պապերի և մամիկների անթաղ ոսկորները հողին չհանձնած, մոր, անասելի չափերի հասնող զոհեր տվեց մեր ժողովուրդը: Եվ այսօր, երբ դեռ խնկարկում ենք նրանց հիշատակը, գումարվեցին Սումգայիթյան Եղեռնի, Խոջալուի ու Աղդամի Եղեռնի զոհերը: Ի լրացումն այս բոլորի, ավելացան բնության աղետի տասնյակ հազար զոհերը Լեռնահայկանում ու Սպիտակում: Դարասկիզբը Արևմտյան Հայաստանի համար դարձավ թրջական գեհեն, մղձավանջներով ու հուսալքությամբ թաթախված: Չմայած իր օրհասական վիճակին՝ չհուսալքվեց հայ ժողովուրդը: Նա գոյատևեց իր կենսասիրությամբ, հավատի ու ապրելու կոչով համակված:

Այսօր չկա գեղածիծաղ Լեռնային մեր քաղաքների ու գյուղերի չքնաղ գարունը, գեղաթույր ու գեղաբույր ծաղիկները չկան, չկան թռչունները գեղեցիկ: Այսօր Լեռնահայկանում ու Սպիտակը ձիու սմբակների տակ տրորված ու քանդված մրջնանոց են հիշեցնում, որը վերածվում է շինարարական մեծ հրապարակի:

Իմ բազմաշարժար, բզկտված հայոց աշխարհին ու աշխարհասփյուռ ժողովրդին համբերություն են մաղթում՝ տոկալու այս արհավիրքը ևս, արհավիրք ու ցավ, որ վերջապես ցնցեց խլացած աշխարհը: Անցած տառապանքների հուշը չենք բորբոքում, այն մխում է լոկ մեր սրտերի խորքում՝ իմաստչացած մահերով, ստեղծագործ ոգով, նպատակային կյանքով:

Հայ ժողովուրդը նպատակ չունի աշխարհի ականջին արցունքի երաժշտություն երգելու: Մենք տառապում ենք մեր զոհերով, ողբում նրանց հիշատակը, սակայն մեկ նպատակ ունենք, այն է՝ քանդված քաղաքներն ու գյուղերը վերանորոգել, շենացնել նորից երկիրը: Պետք է կարողանանք սթափվել, երբեք չկորցնելով ապրելու և վերստեղծելու մեր դարավոր ոգին:

Մենք կանք, ապրում ենք մեր կենսասիրությամբ, շինարարի ու արարողի, վար ու ցանք անողի, երազողի տենչով: Ուրեմն գլուխներս բարձր պահենք, խենթի պես խնդալ է պետք, քանզի մենք Հիսուսն ենք աշխարհի, որն իր ուսերին տանում է խաչը Գողգոթայի...*

ԵՏ քերենսփ կորցրած ունկնդրին

Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր պորբլեմները, որոնց լուծումներն այդ պահին ապրողի խնդիրն է։ Արվեստագետը, որը համաքայլ չի ընթանում իր ժամանակաշրջանի հետ, չի ապրում տվյալ ժամանակաշրջանի տեղաշարժերով, ժամանակակից համարվել չի կարող։

Չարիք չ'է արդյոք, երբ երեխան մեծանում է անսիրտ, անհոգի, երբ քարկոծում է անցնող գնացքը, ջրախեղդ անում կատվի ձագերին, այրում ուրիշի փոստարկղի պարունակությունը։ Երևի թե սրանք փոքր բաներ են, բայց չէ՞ որ այդ երեխան ապագայի չափահաս մարդն է։ Չարիք չէ՞՝ հինգ-տասը ռուբլի խոթելով վերահսկիչի գրպանը, վարորդը անպատիժ երթնելուն է նորմայից ավելի վնասակար նյութեր արտանետող մեքենայով, ապականելով մեր լեռնային չքմաղ քաղաքի օդը, պատուհաս դարձնելով այն շատերի համար... Չարիք չէ՞, հեռախոսային խուլիգանն օրերով, ամիսներով անպատիժ սղոցում է շատերի նյարդերը։ Սրանք, երևի, փոքր խնդիրներ են, սակայն ծնահյուսի պես մեծանալով՝ կարող են դառնալ աղետալի։

Այս պորբլեմներն իրենց դրդապատճառներն ունեն։ Դրանցից մեկն էլ առաջին հայացքից շատ անմեղ թվացող, երեխաների ու մեծերի քիչ առնչվելն է լուրջ երաժշտության հետ, որը մաքրում է մարդու հոգին, դարձնում նրան բարի, մարդասեր, նպատակամղում լուրջ խնդիրներ լուծելու։

Հաճախ եմ մտաբերում այն փաստը, որ Յոհան Սեբաստիան Բախը քառասունհինգ կիլոմետր ոտքով գնում էր՝ Համբուրգի եկեղեցական երգեհոնահար Ռեյնքենի կատարումները լսելու համար։

Ժամանակներն ուրիշ էին, կասեք դուք։ Ճիշտ է, այժմ կարիք չկա ոտքով այդ-

պիսի հսկայական տարածություն կտրելու, քանի որ երգեհոնն ու համերգային դահլիճները իրենք են մոտեցել մեզ, սակայն...

Ռադիոն, հեռուստատեսությունը, ծայնապնակները, տեսամագնիտոֆոնները մեր կյանքն ու կենցաղն են մտել թափով ու շռինդով, լեռներից գահավիժող ջրվեժի նման սրբել-տանելով իրենց ճանապարհին շատ բան, իրենց հետ բերելով նաև ժամանակակից մարդուն այնքան բնորոշ մեղկ հարմարավետության ձգտում, կենցաղասիրություն, ալարկոտություն: Այս հանգամանքը հաճախ մեզ կտրում է կենդանի երաժշտության հետ շփվելուց, չնայած ոչ մի՝ նույնիսկ ամենակատարյալ մագնիտոֆոնային ծայնագրությունը կամ տեսագրությունը չի կարող պարզել այն հոգեպարար պահը, որն ըմբռնում ենք համերգային դահլիճ կամ օպերային թատրոն հաճախելով: Հաճախ, առավոտից մինչև ուշ գիշեր, միացնում ենք և մեր ուղեղները «լվանում» քոք երաժշտության ամենակուլ ծայնագրություններով, առանց մտածելու, որ դրանով աղքատացնում ենք մեր ներքինը: Չէ՞ որ այս երաժշտությունն առավել վայել է բարձր տրամադրությանը, իսկ մենք լինում ենք նաև տխուր, երազկոտ, և մեր հոգեվիճակը պահանջում է երաժշտության այնպիսի երկնային հնչողություններ, որպիսիք ունի դասական և ժամանակակից երաժշտությունը: Դարեր շարունակ օպերային, սիմֆոնիկ, կամերային երաժշտության լավագույն գործերը մաքրագործել են մարդու հոգին, նաև հոգեկան անդորր պարզել: Սակայն ի՞նչն է պատճառը, որ այսօր այդպիսի հոյակապ օպերային թատրոն, համերգային դահլիճ ունեցող երևանցին չի հաճախում կամ քիչ է հաճախում դասական, ժամանակակից երաժշտություն լսելու՝ կիսատ կամ դատարկ թողնելով դահլիճը: Բարձրացել է մեր կուլտուրական մակարդակը, իսկ կուլտուրայի օջախներ հաճախողների քանակը համեմատաբար նվազել: Սա չի՞ բացատրվում արդյոք այժմյան կատարումների մակարդակով, որն ահագին բաց է ստեղծել ունկնդրողի և կատարողի միջև: Մարդիկ գերադասում են ծայնապնակներ լսել կամ ծայնագրություններ: Պետական օպերային թատրոնը պետք է յուրաքանչյուր տարի բեմադրի գոնե մի քանի օպերային և բալետային ներկայացում, սակայն լինում է թատերաշրջան, երբ նույնիսկ մեկ նոր ստեղծագործություն չի բեմադրվում: Եթե որևէ օպերա կամ բալետ բեմ է հանվում նոր բեմադրության, դեռ չի նշանակում, թե նոր գործ է բեմադրվել. ինչ խոսք, այստեղ առկա է բեմադրիչների աշխատանք կատարելու ձգտումը: Այդ են հաստատում է. Միրզոյանի սիմֆոնիայի երաժշտությամբ Ա. Ասատրյանի բեմադրած «Լույսի սիմֆոնիա» բալետը, Ա. Տերտերյանի երրորդ սիմֆոնիայի երաժշտությամբ Ռ. Խառատյանի «Արտավազդ և Կլեոպատրա» բալետը բեմադրելու փորձերը, Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադի» բեմադրությունը, որոնք կյանք չեն ունենում, քանի որ բալետն իր առանձնահատկություններն ունի: Սրա փոխարեն կարելի է գրել բալետ կամ օպերա հենց մեր օպերային թատրոնի համար: Ինչո՞ւ պետք է Ա. Տերտերյանը իր ստեղծագործությունների հա-

ջողությունը փնտրել օտար ափերում՝ գրել «Երկրաշարժ» օպերան ԳԴՀ-ի համար, Յուրի Ղազարյանը «Է. Յեմինգուեյ» օպերան Կուբայի համար: Սա չի հիշեցնում արտագնա աշխատանքի մեկնելը, երբ մենք ունենք մեր ներքին շինարարության մեծ խնդիրները: Պետք է բեմադրել ու բեմադրել, պետք է փնտրել նոր ճանապարհներ, օգտագործել գոյություն ունեցող հնարավորությունները: Եթե մենք այդ ուղղությամբ սկսենք մեր աշխատանքները, արդյունքը կտեսնենք միայն տարիներ հետո, ուրեմն չի կարելի ոչ մի վայրկյան կորցնել:

Մեր օպերային թատրոնը շատ հուսալի հեմարան ունի հանձինս հոյակապ ծայների՝ Գ. Գրիգորյանի, Ս. Մարտիրոսյանի, Բ. Թումանյանի, Ա. Մանուկյանի, Ա. Ղափթյանի, Յ. Պապյանի և այլոց: Պետք է օպերա գրել հատկապես այս ծայների համար: Ինչպիսի՞ ցնծությամբ ժողովուրդը կգնա այս գեղեցիկ փունջին ունկնդրելու: Ինչո՞ւ հյուրախաղերի ժամանակ Նովոսիբիրսկի օպերային թատրոնի 22 օրվա ծրագրում ոչ մի ներկայացում չկրկնվեց, իսկ մեր օպերային թատրոնի ներկայացումները մատների վրա կարելի է հաշվել: Քսաներկու օր՝ քսաներկու ներկայացում:

Հայ կոմպոզիտորները վաղուց մոռացել են այնքան երազած օպերային բեմի մասին, չնայած գործեր կան, որոնք վաղուց ի վեր պետք է կատարված լինեին, ժամանակի ընտրությամբ հաստատեին իրենց կամ դուրս գալիս օպերային թատրոնի ծրագրից: Երկու դեպքն էլ խթան կլինեին ժանրի զարգացման համար: Սակայն այսօր շատ գործեր մնում են կոմպոզիտորների աշխատասեղաններին: Ի՞նչ կլինեին, եթե ժամանակին այդ ձևով վերաբերվեին Մոցարտի, Վերդիի, Վագների, Չայկովսկու և այլոց ստեղծագործությունների հետ: Ինչո՞ւ է պատճառը, որ այսօր մեր օպերային թատրոնն օրեցօր կորցնում է իր հանդիսատեսը: Երաժշտասերներն, անշուշտ, օպերա կհաճախեն, եթե լինեն լավ կատարումներ, հետաքրքիր և թարմ լուծումներ, նոր ներկայացումներ:

Բալետում ընդունված կարգ է՝ քառասուն տարեկանից հետո պատվով ու հարգանքով արտիստին ուղարկել վաստակած հանգստի: Սակայն նույնիսկ վաթսուն տարին բոլորած, ծայրը սպառած երգիչն ու երգչուհին մնում են իրենց տեղերում, չնայած հաճախ ամսվա ընթացքում մեկ անգամ երգելու հնարավորություն էլ չունեն: Այստեղ նույնպես, երևի, պետք է գեղեցիկ ձևով հանգստի ուղարկել, իսկ առավել ակնառուները շարունակեն իրենց գործունեությունը ծայնամշակման դասարաններում նոր սերունդներ դաստիարակելու շնորհակալ և պատվաբեր աշխատանքում:

Ըստ իս, պակաս դեր չի խաղում նաև այն հանգամանքը, որ իրենց ծաղկուն շրջանում գտնվող երիտասարդ կամ միջին տարիքի կատարողներն ավելի քիչ են վարձատրվում, քան ծայրը կորցրած անվանիները: Մինչդեռ ունկնդիրները փնտրում են նոր, հետաքրքիր, թարմ ծայներ:

Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Մինսկում սիմֆոնիկ նվագախմբերի վարձատրությունը հասնում է հինգ հարյուր ռուբլու, մինչդեռ մեր հանրապետությունում՝ հարյուր քսանից երկու հարյուր քառասուն ռուբլու: Շատ արտիստներ լրացուցիչ աշխատանք են փնտրում երաժշտական դպրոցներում, ուսումնարաններում, մուլմիսկ սզո արարողություններում են նվագում: Հարկավոր է բարձրացնել շահագրգռվածությունը արտիստի հիմնական աշխատանքի նկատմամբ:

Մեկ հարց ևս. ուսումնարաններում, կոնսերվատորիայում կատարողների ուսուցումը հիմնված է հատկապես արևմտաեվրոպական, ռուս, մասամբ նաև հայ դասական կոմպոզիտորների ստեղծագործությունների վրա: Նրանք կյանք են մտնում, առանց ծանոթ լինելու ժամանակակից կոմպոզիտորական արվեստին, երաժշտական մոր արտահայտչամիջոցներին: Արդյունքը՝ շատ գործերի չինչելը կամ լավագույն դեպքում վատ կատարումն է: Կուզենայի ապագայի կատարողին տեսնել զինված գիտելիքներով, իր գործիքին կատարելապես տիրապետելիս, որպեսզի կարողանա վերարտադրել կոմպոզիտորի մտահղացումը: Շատ կատարող-



Հ. Դելլալյանը և երգչուհի Ն. Քարիմյանը ելույթից հետո
Dellalian and singer N. Karimian after the performance

ներ բավարարվում են իրենց ձեռք բերածով: Ցանկալի է, որ նրանք վերջապես արթնանան տաք թմբիրից և նայեն համաշխարհային ասպարեզում իրենց գործընկերներին: Շատ դափնեկիրների համար առաջին հաջողությունը վերջինն է դառնում և նրանց այլևս չենք լսում, հատկապես գործիքային երաժշտության ասպարեզում:

Սիմֆոնիկ երաժշտության յուրաքանչյուր համերգի հաջողության մեջ էական դեր ունի ճիշտ ծրագրի ընտրությունը: Հաճախ հաշվի չեն առնվում շարքային ունկնդրի հակումները, նաև լսողական կարողությունները, ծրագիրը հագեցած է լինում մեկից ավելի մեծ մասշտաբի ստեղծագործություններով: Ունկնդիրն անգոր լինելով ընկալել, որոշում է մյուս անգամ համերգի չգալ, ուրեմն հարկավոր է նաև թեմատիկ, բացատրական համերգներ անցկացնել:

Հարկավոր է համարձակ և սրտացավ մոտեցում հանդես բերել նաև ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների նկատմամբ: Ո՞վ պետք է առաջինը կատարի մեր սիմֆոնիկ և օպերային ստեղծագործությունները, եթե ոչ մեր նվագախմբերը, ուրեմն կատարել է պետք ու նորից կատարել, թող մաղվեն թույլ ստեղծագործությունները, թող լավ գործերը դուրս գան միջազգային բեմահարթակ, այլապես անհնար է առաջխաղացումը:

Այսօր Հայաստանի կոմպոզիտորական դպրոցը, որը համախմբում է շատ շնորհալի ստեղծագործողների, համարվում է երկրում լավագույններից մեկը: Սակայն կոմպոզիտորների միության հերթական պլենումի ժամանակ որևէ ստեղծագործության կատարումով հաճախ վերջանում է համարյա ամբողջ տարվա գործունեությունը, միակ այդ կատարումով հաճախ վերջանում է նաև այդ, թեկուզև հաջողված ստեղծագործության կյանքը: Եթե մի որևէ տեղ կատարման հնարավորություն է ստեղծվում, ամեն ձևով պետք է նպաստել: Ունկնդիրն ու ժամանակը կգնահատեն ըստ արժանվույն:

Մանուկ սերնդի հոգեկան աշխարհի ձևավորման համար կարևոր է շփումը գեղեցիկի հետ: Այս գործում դրական դեր է կատարում դպրոցականի ֆիլհարմոնիան, չնայած իր փոքր-ինչ մակերեսայնությանը:

Վաղուց հասունացել է Երևանում մանկական օպերային թատրոն բացելու խնդիրը, սակայն մինչև օրս այն դրական լուծում չի գտնում, մինչդեռ համեմատության համար նշեն, որ Ղազախստանի Ջամբուլ քաղաքում հանրապետությունում արդեն գործող տասնյակ մանկական թատրոններին ավելացավ ևս մեկը: Երևանում մանկական օպերային թատրոն բացելու համար կան բոլոր պայմանները, գրված ու բեմադրության պատրաստ են մանկական օպերաներ, բալետներ, մյուզիքլներ:

Բավարար չէ հանրապետության երաժշտական կյանքի լուսաբանումը: Ժամանակն է, եթե ոչ ամսագիր, գոնե երաժշտական շաբաթաթերթ լույս ընծայել: Հաճախ

մեկ շաբաթ տևած փառատոնի, պլենումի կամ համագումարի մասին տպագրվում է մեկ մի հոդված, որը կարող է սուբյեկտիվ կարծիք լինել, քանի որ մեկ հեղինակն ի վիճակի չէ ամբողջությամբ ճիշտ ընկալել ու մեկնաբանել այդպիսի մեծ ծրագիրը: Ուստի պետք է թերթերում լինեն տարբեր հեղինակների մեկնաբանություններ, երաժշտագետների գրելու հնարավորությունները պետք է ընդլայնվեն: Միայն մեկնագրություններով ու աշխատություններով ունկնդիրների հետաքրքրությունը չի աշխուժանա:

Երաժշտական թերթը կհանգեցնեն ստեղծագործական տարբեր միությունների անդամների մերձեցմանն ու համագործակցությանը: Այսպես արվեստասերները մույնպես հնարավորություն կունենան տեղեկանալու մշակութային տարբեր միջոցառումների անցկացման մասին: Եկեք ետ բերենք մեր կորցրած ունկնդրին, սիրով մտածենք նրա մասին, որպեսզի նրա սերն էլ փոխադարձ լինի:

Հին ու բարի ժամանակներում մեր օպերային թատրոնի հետ աշխատակցում էին Մինասը, Ա. Գուլակյանը, Վ. Աճեմյանը. Հր. Ղափլանյանը, Մ. Մարտիրոսյանը: Վերականգնենք մեր ավանդույթները: Եկեք ավելի շատ հաճախենք մեր հոյակապ օպերային թատրոնը, համերգային մեծ ու փոքր դահլիճ, կամերային երաժշտության տուն, շփվենք միմյանց հետ, լավը գնահատելու մեր կարողությամբ վայելենք ու սնենք մեր հոգիները երաժշտության պատճառած անկրկնելի հարստությամբ:

Կոմիտաս

Մ

րքա՛ն հույզ և սեր, որքա՛ն կարոտ ու հպարտություն է պարունակում այս անունը հայության համար: Այն յուրաքանչյուր հայի համար հնչում է ինչպես Արարա՛տ, ինչպես Հայաստա՛ն...

Կոմիտասի երաժշտության մեջ ցոլում է մեր ժողովրդի ոչ միայն զգայական աշխարհը, այլև ամբողջ պատմությունը, հոգեբանությունը, ոգին: Ոչ մի գիրք, ոչ մի կտավ չեն կարող արտահայտել մեր ազգային նկարագիրն այնքան հարազատորեն և այնպես ճիշտ, ինչպես անում են այն զարմանալի երգերը, որ մի բառով կոչվում են կոմիտասյան: Այդ երգերի մեջ մեր անցած ճանապարհն է՝ գողթան երգերից մինչև 5-րդ դարի սահակ-մեսրոպյան նախաստեղծ շարականները, մինչև նարեկյան կես-հեթանոս, կես-հոգևոր և ամբողջության մեջ անզուգական տաղերը, որ զորացած են Արծրունյաց պետականության հզորությամբ ու խաղաղված ժողովրդի լավատեսությամբ, մինչև միջնադարյան ալեկոծումներ ու տվայտանքներ՝ պետականության կորուստ, պատերազմներ, գաղթ ու ավեր, պանդխտություն, մինչև 20-րդ դարասկզբի ազգային-ազատագրական պայքարի հերոսական տարեգրությունը: Հազարամյակներ ապրած մեր ժողովրդի մեղեդիացած պատմությունը, նրա անցած ճանապարհի ոգիացած կենսափիլիսոփայությունն են այն անսպառ, չխամրող հարստությունն ու հմայքը, ուժն ու էությունը, որ ունի կոմիտասյան երգը:

Ամենուր իր երգն էր երգում ժողովուրդը՝ խրճիթում թե արտում, հարսանքատանը, թե վանքի բակում: Երգում էր տխրության թե ուրախության պահերին: Եվ երգը, որ սնունդ էր տվել միջնադարյան երաժշտական ու բանաստեղծական հոյակապ արվեստին, ցլացնում էր իր մեջ մի հին ժողովրդի կենսունակ ոգին, նրա դավոր իղծերն ու տենչերը:

Բայց հայը երգ չունի. զարմանալի համառությամբ պնդում էին օտարներն իրենց խոսքը...

Ունի՛: Կանգնեց նա իր ողջ վեհությամբ:

Ունի՛: Նա ծոցագրպանից հանեց շվին ու ապացուցեց Փարիզում՝ հայը երգ ունի:

Ունի՛: Նա հանդես եկավ իր ելույթներով բեռլինյան դահլիճներում, լսածից շշմած, հայ երգին անծանոթ երաժշտագետների առջև:

Ունի՛: Ղեկավարեց բազում երգչախմբեր, տպագրեց հայ երգը: Այս երգերում նա տեսավ շողշողուն գանձեր, որ չէր տեսել նրանից առաջ ոչ ոք: Տեսավ մեր ժողովրդի հերոսական պատմության էջերը և նուրբ ու զգայուն սիրտը: Տեսավ մեր ծաղկառատ դաշտերն ու պղնձացած ժայռերը ու այնպես մոտեցավ հայ երգին, ինչպես մոտենալ կարելի է հողի խորը շերտերի տակ մնացած հազարամյա նրբահյուս խաչքարին: Ոսկերչի հմտությամբ ամեն մի հնչյուն փայլեցրեց կրկին, ազատեց օտարամուտ շերտերից և երգին հաղորդեց այն նրբությունը, որ Մոմիկի ասեղնագործ խաչքարերն ու ռուսիյան մանրանկարներն ունեն: Եվ երգը մկրտվեց վերածնողի անունով՝ կոմիտասյան, ինչպես որ այբուբենն է կոչվում մեսրոպյան: Ինչպես Մաշտոցը «անճառելի ու անդրանիկ դաստիարակ» եղավ մի ողջ ժողովրդի համար, այնպես էլ նա եղավ մեր ազգային մեծագույն երգահանը, հայ երգի խորհրդանիշը:

Բայց հայը տո՛ւն չունի: Պանդուխտ որդիները, սփռված աշխարհով մեկ, սպասում են որևէ նորության հեռավոր հայրենիքից.

Կռո՛ւնկ, խաբրիկ մը չունի՞ս...

Հայրենի հողում էլ կյանքը լավ չէ.

Գարուն ա, ծուն ա արել.

Վա՛յ լե, լե, լե, վա՛յ լե, լե...

Սեգ Սիփանա սարի վրա

Կտրիճները թափով գալիս են, միանում

Լո, լո, լո,

լո, լո, լո...

Սակայն դատապարտվեց չար ճակատագրի կողմից՝ խենթացավ...

Իզուր էր խառնվել Վիլիելմ II-ը:

Իզուր էր խառնվել Փարիզը՝ նրա հանճարի վկան:

Կորուստը մեծ էր, անդամալի: Ամեն մի հայ, որի կրծքում հայի սիրտն էր բաթախում, խելագարվեց: Տուն բերեցին պանդուխտ որդուն...

... Ամեն անգամ, երբ մտնում են Կոմիտասի անունը կրող այգին, մոտենում են նրա հուշարձանին, շոյում մատները, օրհնություն խնդրում նրանից՝ ժողովրդիս ծառայելու իմ սկսած դժվարին ճանապարհն իրականացնելու համար...*

the chorale: ... Franz Liszt
"Undam" (1811 - 1886)
"Undam"

..... Franz Liszt
..... Haroutioun Della
(nkokhian)
540 Johann Sebastian

Путь познания Творчество Арутюна Деллаляна

Музыкальному дарованию Арутюна Деллаляна чужды случайные идеи и созвучия. Возможно, жизненный опыт определил отбор средств музыкальной выразительности и художественных проблем. Произведения композитора объединены общим представлением о мире, о судьбе человеческого поколения — личностно-гуманитарная.

В 1937 году, в возрасте 17 лет, Арутюн Деллалян уехал из родины. Его родители, переехавшие в США, были активными участниками движения за права иммигрантов. Арутюн, будучи еще подростком, начал заниматься музыкой. Его учителями были известные композиторы и музыковеды того времени. Арутюн Деллалян — личность, чья жизнь и творчество тесно связаны с историей армянского народа в Америке.

В последние годы в США состоялось несколько концертов, в программы которых были включены произведения армянского композитора Арутюна Деллаляна. Возрастающий интерес к его творчеству за рубежом во многом объясняется ярким национальным колоритом его сочинений.

Mirzoyan & Dellalian In Los Angeles

LOS ANGELES, CA—On Monday, December 1 at 11:40 p.m., composers Edward Mirzoyan and Haroutioun Dellalian were greeted at the Los Angeles airport by a delegation from the Armenian-American Theatrical Society headed by president Vazken Mardirossian.



...тоящее признание принесла Папазян. ...
...тору его фортепианная сона...

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀՈՂԱՆՁՆԵՐ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀՈՂԱՆՁՆԵՐ (կոմպոզիտորը թուրքական և արաբական արվեստի ուրույն վկայություններով), վկայություն հայկականի համայնությանը և արաբականի համայնությանը, որը ունի երկու կողմերի և քաղաքացու նկատմամբ հարգանքներ, որոնք ունենում են հայկական և արաբական համայնությանը հարգանքներ, որոնք ունենում են հայկական և արաբական համայնությանը հարգանքներ...

GREAT ARMENIAN MODERN COMPOSERS



«Իր ժամանակի համար նպատակադրված տեղեկության երևանքի ժամանակահատվածում, որի ժամանակահատվածում կոմպոզիտորիան երե միայն հայկական և արաբական արվեստի ուրույն վկայություններով, վկայություն հայկականի համայնությանը և արաբականի համայնությանը, որը ունի երկու կողմերի և քաղաքացու նկատմամբ հարգանքներ, որոնք ունենում են հայկական և արաբական համայնությանը հարգանքներ, որոնք ունենում են հայկական և արաբական համայնությանը հարգանքներ...»

ԴԵԼԼԱԼԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԻՈՒՆԵԼԼԱԼԵԱՆ ԿԱՄ ԵՍԿՐԻՆ ԽՐԱԾ ՄԻՆԵՐՈՍ ԱՆՀԱՅՏՈՅԻ



*Տարգազրույցներ
Տարնաթյունի հետ*

«Խոհե՛ր՝ ճանապարհին» հարցազրույցից

— Դե՛նց միայն այն տեղանունների անվանումները, որտեղ հնչել են Ձեր ստեղծագործությունները, պատկերացում են տալիս ստեղծագործական մեծ հաջողությունների մասին: Դուք գո՞հ եք այդ ամենից:

— Այո, դժգոհելու տեղ, թերևս, չկա: Հատկապես ուրախանում եմ իմ Topophonո–ի, Նվիրում Կոմիտասին, Հաղթական Ռեքվիեմ ստեղծագործությունների հաջողությունների համար, քանի որ այս ստեղծագործությունների հիմքում ընկած է հայ ժողովրդի եղերական անցյալը, և ես կարողանում եմ իմ երաժշտության միջոցով ի լուր աշխարհի պատմել այդ մասին:

— Գիտե՛ք, որ Ձեր երգեհոնի Հաղթական Ռեքվիեմը կատարվել է Բեռլինում, Բոստոնում, Ալտենբերգերում, Բոննում, Տոկիոյում, Կազանում: Երևի բոլորից ինքնատիպ արտահայտվել են գերմանացիները՝ Քյոլնի միջազգային փառատոնում Ռեքվիեմի կատարումից հետո: Նրանք գրել էին, որ այս երաժշտությունը մարդու մաշկի տակ է անցնում, որ Կոմիտասի, Եկմալյանի և այս ստեղծագործության շնորհիվ ավելի լավ ծանաչեցին հայկական երաժշտությունը:

— Այո, ուրախալի է նաև, որ այս ստեղծագործությունը կատարվել է Վենետիկի ս. Մարկոսի եկեղեցում, ապրիլին, Եղեռնի տարելիցի առթիվ: Ափսոսում եմ, որ մեր ռադիոյում «հատուկ» միկրոֆոն չունենալու պատճառով այն մինչև օրս չի ձայնագրված:

Այս բոլորի կողքին գուցե անհասկանալի լինի, որ մինչև հիմա ես իմ գրած երեք սիմֆոնիաներից և ոչ մեկը չեմ լսել: Մահը սիմֆոնիկ պոեմն ու Հուշարձան մահատակներին ռեքվիեմ–կանտատը նույնպես չեն կատարվել:

Ո՞վ պետք է կատարի մեր սիմֆոնիկ և օպերային գործերը, իհարկե, առաջին հերթին մեր նվագախմբերն ու օպերային թատրոնը, ո՞վ պետք է հայ կոմպոզիտորներին միջազգային ասպարեզ հանի, ո՞վ պիտի մեր թռիչքին թևեր տա...

— Հարություն, ինչու՞մ է Ձեր գործերի հաջողության գաղտնիքը:

— Գաղտնիք չէ, իհարկե, որ արվեստագետը պետք է համաքայլ, եթե ոչ առաջ լինի իր ժամանակից: Արվեստագետը, որին չեն հուզում տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցող տեղաշարժերը, մարդկությանը հուզող հարցերը, ժամանակակից լինել չի կարող: Բեթհովենը նրբագույն գործիքի պես արձագանքում էր իր ժամանակին տեղի ունեցող դեպքերին. «Յերոսական սիմֆոնիա», «Վաթերլո»: Իսկական հայ արվեստագետը պետք է հարազատ լինի իր պատմությանը, արձագանքի մեր ցավին, մեր առօրյային, նայի առաջ:

— Որն է Ձեր պատկերացմամբ համճարի չափանիշը:

— Համճարի իմ չափանիշը Նարեկացին է, որին հուզող հարցերը, ինչպես Աստծո մեծարման և մարդկային հոգու մեղավոր էության գաղափարը հուզում են նաև նրանից հազար տարի հետո ապրող ու գործող արվեստագետիս:

— Ո՞վ է Ձեզ համար Կոմիտասը:

— Ու՞մ հետ համեմատենք Կոմիտասին, որ կարողանամք ճշտել նրա տեղը հայ ժողովրդի բոլոր ժամանակների պատմության մեջ: Կոմիտասի և այդ մարդու միջև ընկած է շուրջ 1500 տարի:

Ինչպես լուսահոգի Պարույր Սևակն էր ասում, Կոմիտասին միմիայն մի մարդու հետ կարելի է համեմատել.

*Դու Ամենայն Հայոց երգի Վեհափառն ես,
Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց
Գիրն ու տառն ես Հայոց երգի...*

— Ի՞նչ իղծեր ունեք:

— Կուզենայի իմ *Լիլիթ* բալետը ավարտել ու տեսնել բեմում: Կուզենայի սում-գայիթյան եղեռնը և այս ահավոր երկրաշարժի աղետը չանցներ իմ ժողովրդի գլխով, ուրիշների կողմից մեր ցավը չտեսնելը, մեր հավատքի ու մշակույթի նկատմամբ բարբարոս վերաբերմունքը չլիներ: Կուզենայի մեր հավատը կրկին վերականգնվեր, մեր խոցված հոգիները խաղաղվեին և ազատ ստեղծագործելու, աշխատելու ունակությունն ու բերկրանքը վերադառնային մեզ: Կուզենայի, որ բանվորն իր հաստոցի առջև մի մաս ավելի պատրաստելու ձգտում ունենար, որ շինարարը մի քար ավելի կարողանար դնել կառուցվող շենքի պատին:

Կուզենայի հայրենադարձություն՝ ներգաղթ լիներ, արտագաղթ չլիներ, օտար ափեր չլիներին ու պանդուխտի երգ չունենայինք: Իր մահով գնացող լիներ, ու մորթված մանուկ չլիներ...

Կուզենայի Կոմիտաս վարդապետը լիների, բայց իմ ժողովրդի երջանկությունից խենթանայի:

*«Խորհրդային Հայաստան», 1989 թ. մարտի 11
Հարցազրույցը վարեց Լյուդմիլա Մանուչարյանը*

«Չրույցներ հայ ժամանակակից արվեստագետների հետ» գրքից

Հարություն Գելլալյանին առաջին անգամ հանդիպեցի 1986 թ. մայիսին Երևանում: Արդեն ծանոթ էի նրա Topophono ստեղծագործությանը: Երբ մենք հանդիպեցինք Երևանի «Արմենիա» հյուրանոցի նախասրահում, անփութորեն ուներին քափալած երկար մագերով և կայծկոտացող աշխարհում հարությունը նստած էր՝ շրջապատված այցելուների մի մեծ խմբով: Չնայած նրա դեմքի չարաձգի արտահայտությանը, աշխարհում փրություն կար: Ես նույն զգացումն եմ ապրել, երբ առաջին անգամ լսեցի Topophono-ն: Թվում է, թե երկր համակված է պայծառությամբ, սակայն նրա խորհրդում սկզբից մինչև վերջ ակնհայտ էին ցավը, քափիծը: Ինչ մոտ այն զգացումն էր, կարծես արդեն գիտեի Հարությունին: Ինչպես փկին Տերմինեն շատ դիպուկ ասաց. «Մենք նման էինք հին ընկերների, որ հենց նոր վերագտել էին իրար»: Թվում էր, թե հայ ազգի ողջ գեղեցկությունն ու ցավը, հաջողություններն ու չափողումները, կորուստն ու նվաճումները կուտակվել էին մի մարդու մեջ, որն անցնում էր իր ուղին՝ այդ քեռի ներքո երաժշտություն ստեղծելով: Ստեղծագործելը՝ որպես իր ներաշխարհն արտահայտելու միջոց, այնքան քնակալն էր Հարությունի համար, որ գրած երկերը պարզապես հոգու ասելիքն էին, որով հաղորդակից էր դարձնում աշխարհին:

Հարությունի հետ իմ հարցազրույցը տեղի ունեցավ մեր առաջին հանդիպումից երկու տարի անց՝ 1988 թվականի հունիսին՝ Երևանում: Հարցազրույցի փոխարեն նա առաջարկեց պարզապես գրուցել: Ահա գրառումներ մեր զրույցից:

— Ի՞նչ կասեիք Ձեր երաժշտական կրթության մասին: Երաժշտությամբ սկսեցիք զբաղվել Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո՞:

— Ոչ: Այդ տարիներին մենք առաջին հերթին մտածում էինք ոչ թե երաժշտական կրթություն ստանալու կամ, ընդհանրապես, սովորելու, այլ գոյատևելու մասին:

Դժվար օրեր էին: Պատերազմը նոր էր ավարտվել: Ամենուր սով էր ու աղքատություն: Դպրոցում սովորեցի մինչև յոթերորդ դասարան: Երբ յոթերորդ դասարանի աշակերտ էի, հորս հետ դժբախտ պատահար եղավ, որի պատճառով նա դարձավ անաշխատունակ: Ստիպված էի թողնել դպրոցը և աշխատել ընտանիքիս հոգսերը հոգալու համար: Ինչ ասես, որ չեմ աշխատել: Ցերեկներն աշխատում էի, իսկ երեկոյան հաճախում գիշերային դպրոց: Բանակում էր, որ սկսեցի երգել երգչախմբում: Մենք արիեստավարժ երաժիշտներ չէինք, այլ պարզապես սիրողների մի փոքր խումբ: Շուտով նկատեցին, որ լավ ծայն ունեմ: Որոշ ժամանակ անց շատ հայտնի մեներգիչ դարձա, այդ առիթով ստացել եմ վեց պատվոգիր:

— **Կարելի՞ է ասել, որ դա Ձեր երաժշտական կյանքի սկիզբն էր:**

— Այո: Դրանից հետո որոշեցի ինձ նվիրել երաժշտությանը: Այդ ժամանակ 23–24 տարեկան էի: Դիմեցի Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի վոկալ բաժին: Սակայն իմ ծայնալարերը վնասվել էին բանակի համերգներից մեկի ժամանակ, ուստի ինձ ասացին, որ չեմ կարող դառնալ երգիչ: Թողեցի ուսումնարանը և սկսեցի աշխատել գործարանում, սակայն այնտեղ ևս մի քանի արվեստասերների հետ միասին կազմակերպեցի երաժշտական խումբ: Արվեստի հետ շփումը կենսական անհրաժեշտություն էր մեզ համար: Այցելում էինք հայտնի արվեստագետներին՝ Մարտիրոս Սարյանին, Զրաչյա Ներսիսյանին, Գրիգոր Խանջյանին, որոնք սրտանց ոգեշնչում էին մեզ և ողջունում մեր սերը արվեստի հանդեպ: Խմբակը հավաքվում էր օրվա հոգնեցուցիչ աշխատանքային ժամերից հետո: Սարյանի և Վահրամ Փափազյանի խրախուսանքից ոգևորված՝ դիմեցի վերջերս բացված Ժողովրդական կոմսերվատորիա, որը հնարավորություն էր տալիս երաժշտական կրթություն չունեցողներին երաժշտություն ուսանել: Դիմեցի և ընդունվեցի... Իմ ուսուցիչն էր Էդվարդ Միրզոյանը:

— **Քանի՞ տարի սովորեցիք այնտեղ:**

— Երկուսուկես: Դրանից հետո կոմսերվատորիան փակվեց: Այն գործում էր կամավորության հիմունքով,



Լրագրող Ժ. Աբրահամյանը Զ. Դելլալյանի հետ
Journalist Jackie Abramian with H. Dellalian

դասախոսներին նույնիսկ չէր վճարվում դասավանդման դիմաց: Այսպես, Միրզոյանն ինձ առաջարկեց դիմել Ռ. Մելիքյանի անվան ուսումնարան, իսկ ավելի ուշ՝ 1972 թ. ընդունվեցի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Շատ դժվար շրջան էր: Ստիպված էի նաև աշխատել: Ամուսնացել էի 1961 թվականին և ունեի երկու դուստր: Իմ համակուրսեցիները՝ 17–18 տարեկան պատանիները, ինձնից երկու անգամ երիտասարդ էին: Տարիքիս պատճառով ինձ վատ էի զգում: Սակայն սովորելու ցանկությունը շատ մեծ էր...

— Հիշո՞ւմ եք Ձեր առաջին ստեղծագործությունը:

— Շատ դժվար է պատասխանել այդ հարցին: Ես նոտաներ չգիտեի: Ժողովրդական կոնսերվատորիայում Նորա անունով մի աղջիկ օգնեց ինձ գրի առնելու մի երգ: Ես երգում էի, իսկ նա նոտագրում էր մեղեդին: Չեմ հիշում այդ մեղեդին կամ նույնիսկ վերնագիրը, բայց ուսանողներով հավաքվելիս երգում էինք իմ այդ երգը և այն շուտով դարձավ սիրված մեղեդի: Ինչևէ, ժող. կոնսերվատորիան ավարտելիս գրեցի Ֆլեյտայի ու դաշնամուրի համար մի սոնատ: Կարծում եմ, որ այն կարող ենք համարել իմ առաջին ստեղծագործությունը:

— Դուք այդպես խորը սիրում եք Կոմիտասին: Դաշնամուրի սոնատ եք նվիրել Կոմիտասին, իսկ Ձեր տունը լի է նրա լուսանկարներով: Ինչո՞ւ:

— Կոմիտասի հանդեպ սերը ժառանգել եմ մորիցս: Նա իմ աշխարհն է: Նա մարմնավորում է հայոց պատմությունը: Նույնիսկ հիմա՝ տասնամյակներ անց, միայն Կոմիտասին է հաջողվել իր ներքին հոգեվարքով, տառապանքով լավագույնս արտահայտել մեր ցավը: Կոմիտասի միջոցով աշխարհն իմացավ, թե ինչ բան է իսկական, մաքուր հայկական երգը: Կոմիտասի շնորհիվ հայկական երաժշտությունը ճանաչվեց աշխարհում:

— Բացի Կոմիտասի նկատմամբ Ձեր ունեցած սիրուց, ի՞նչը ոգեշնչեց գրելու Նվիրում Կոմիտասին սոնատը:

— Երբ վերընթերցեցի Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը», մեջս մի բան արթնացավ: Պատկերացրի կենդանի Կոմիտասին: Զանգերի դողանքը իմ երկուն հնչում է որպես հեռվից լսվող արծազանք, որն աստիճանաբար ուժեղանում է և վերջիվերջո, այնքան է մոտենում, որ վերածվում է իսկական ժամկոչման: Երկուն հնչում եմ հատվածներ Կոմիտասի «Անտունի»-ից, որոնք ինքնըստինքյան եկան և միաձուլվեցին իմ ստեղծագործությանը:

— Այն միանգամայն ժամանակակից երաժշտություն է:

— Ինձ շատ են հետաքրքրում նոր տեխնիկական միջոցները, և մշտապես հետևում եմ նրանց զարգացմանը: Սակայն տեխնիկական հնարքներն անցկացնում եմ իմ սեփական պրիզմայով:

Երբ ասում ենք ժամանակակից երաժշտություն, պարզապես նկատի ունենք

այն ժամանակակից հնարքները, որոնց կիրառմամբ կատարվում և ներկայացվում է երաժշտությունը: Եվ նրանք ոչինչ չէին արժենա, եթե չծառայեին հոգևոր աշխարհի բացահայտմանը: Ցանկացած երաժշտություն բխում է ներքին արտահայտման անհրաժեշտությունից: Ասենք, որոշում ես, որ երկում հնչելու է զանգերի դողամնջը, բայց ինչպե՞ս է արտահայտվելու այդ զանգերի ձայնը: Դողամնջների հնչեցման համար օգտագործել եմ որոշակի հնարքներ: Հոգեկան վերապրումների և մտքերի արտահայտման համար դիմել եմ դաշնակահարի երգի օգնությանը, որն ընդամենը մի քանի նոտա է... Բայց երբ դաշնակահարը սկսում է երգել, այն բացում է իր ներաշխարհի դռները: Կրկին պատահական չէր այն, որ որոշ հատվածներ պետք է կատարվեն դաշնամուրի լարերի վրա: Դրանով ցանկացել եմ պատկերել այն մառախուղը, ժայռին ընկած անձրևի կաթիլի գոլորշանալը: Ինչպե՞ս արտահայտել այն: Գործիքի ներքին լարերի միջոցով, որոնց արձագանքումը այլ հնչողություն ունի:

— **Ինչի՞ մասին է երգը:**

— Երգը պանդուխտ տղայի հոգու ճիչն է, որն օտարության մեջ հիշում է իր սիրածին: Երգում հնչում է. «Նարո՛՜յ, Նարո՛՜յ, Նարո՛՜յ ջան»... Ընդամենը երկու բառ, բայց այդ բառերից, մեղեդուց դուրս է ժայթքում խորը կարոտի զգացումը: Այն արտահայտում է հայ պանդուխտի հուզաշխարհը, մեր պանդխտության պատմությունը:

— **Բայց այնուհետև տխրությունը վերածվում է ուրախ մեղեդու:**

— Այո: Ցանկացել եմ պատկերել եկեղեցական տոնակատարությունների ժամանակ վանքերի բակերում հավաքվող հայ ժողովրդին, որոնք ուս—ուսի տված պարում են մեր ազգային երաժշտության ուրախ ու առնական հնչյունների տակ: Դրա համար էլ երաժշտության մեջ հնչում են զարկեր, որոնք վերարտադրում են դիոլի ձայնը:

— **Ինչպե՞ս որոշվեց, որ Արթուր Փափազյանը պետք է նվագի այս սոնատը:**

— Երբ գրեցի այն, չգիտեի, թե ով պետք է կատարի: Արթուրի հետ միասին էինք սովորում, սակայն մեր միջև ոչ մի ընկերական կապ չկար, մի օր մտածեցի ցույց տալ նրան սոնատը: Արթուրը խնդրեց ինձ նվագել, քանի որ շատ տեղեր անհասկանալի էին իրեն: Հետո վերցրեց սոնատն ու ասաց, որ այն ինձ չի վերադարձնելու: «Հաջորդ համերգիս կամերային երաժշտության տանը նվագելու եմ»,— ասաց նա:

Համերգից մի օր առաջ զանգահարեց ու ասաց, որ որոշ հատվածներում օգնությանս կարիքն ունի: Իսկ համերգի ծրագիրն արդեն պատրաստ էր, և իմ երկը պետք է հնչեր համերգի ժամանակ: Սա շատ կարևոր պահ էր ինձ համար:

— **Ինչպե՞ս էիք Ձեզ զգում համերգի երեկոյին:**

— Ծրագրում Շուման էր, հետո իմ գործը, իսկ վերջում՝ Դեբյուսի: Արթուրը ոտքից գլուխ սպիտակ էր հագել: Նրա տպավորիչ դիմագծերը և պահվածքը բեմի վրա շատ ազդեցիկ էին: Երբ Արթուրն ավարտեց Շումանի կատարումը և վերադարձավ

բեմ, ես ամբողջովին դողում էի: Թվում էր, թե ուր որ է կընկնեմ աթոռից: Անչափ հուզված էի... Երբ ավարտվեց կատարումը, դահլիճը պայթեց բուռն ծափահարություններից և բացականչություններից: Օթյակից իջա և շարժվեցի դեպի բեմը: Գոչում էին բռավո՛ւ, բռավո՛ւ... Ինձ շրջապատեցին ունկնդիրները՝ դասախոսներ, լրագրողներ, ուսանողներ: Մարդիկ գրկում էին, համբուրում ու շնորհավորում: Ծաղկեփնջեր, գրկախառնություններ... Անշուշտ Արթուրի կատարումը նույնպես շատ նպաստեց սոնատի հաջողությանը: *Նվիրում Կոմիտասին* երկը նոր դեմեր բացեց ինձ համար:

— **Ինչպե՞ս եք սկսում որևէ երկի վրա աշխատել: Միշտ որոշակի ոգեշնչո՞ւմ է առկա:**

— Երբ որևէ երկ ես գրում, ապա պետք է ստեղծես այն հուզական դաշտը, որի միջոցով քո զգացմունքները կհաղորդվեն ունկնդրին: Միայն այդ դեպքում քո ունկնդիրը կվերապրի այն, ինչ դու ես զգացել: Այդպես գրվեց Ռեքվիեմը՝ սկզբից մինչև վերջ ողողված արցունքներով, լի ստեղծագործական տառապալից հուզումներով:

— **Իսկ ինչպե՞ս ստեղծվեց Topophono–ն Սինֆոնոլայի համար, և ի՞նչը ոգեշնչեց Ձեզ գրելու այն:**

— Շատ հուզվեցի, երբ առաջին անգամ ստացա Ա.Ղարաբեկյանի նամակը: Այն, որ ամերիկյան նվագախմբի ղեկավարը, որը հայ էր, դիմել էր ինձ երկ գրելու խնդրանքով, հրաշալի անակնկալ էր, սակայն չափազանց պարտավորեցնող: Մեկնեցի Դիլիջան՝ կոմպոզիտորների տուն: Այնտեղ ես ասես արահետներով զբոսնող մի ծեր մարդ լինեի: Այսպես ծնվեց Topophono–ի թեման՝ ծեր մարդը, որը թափառում է սարերում, խորհում է միայնության մասին, հիշում մեր պատմությունը, Եղեռնը, գաղթը: Ծեր մարդու կերպարը գալարափողի մենամվազն է, իսկ ընթացքը այն շարժն է, որ վերարտադրում են ջութակահարները, որոնք իրականում շարժվում են բեմի վրա: Ես մտածում էի, թե ինչպե՞ս փոխակերպված արտահայտեմ մեր ցավն ու պատմությունը:

Ցավոք, Բոստոնում իմ ստեղծագործության առաջին կատարմանը ներկա լիճնելու իմ մեծ ցանկությունը չիրականացավ: Ինչևէ, Ղարաբեկյանն ուղարկեց ծայնագրությունը: Նա հրաշալիորեն կարողացել էր զգալ և վերարտադրել հենց այն, ինչ ես զգացել եմ երկը ստեղծելիս: Ղարաբեկյանը հրաշալիորեն կարողացել էր վերարտադրել այն: Սրանում է կայանում դիրիժորի մեծ տաղանդը: Նա կարողացել էր զգալ իմ հոգին:

— **Ինչպե՞ս եք Ձեզ զգում նման հաջողությունից հետո:**

— Այն ինձ ավելի է պարտավորեցնում: Կարծում եմ՝ այժմ, երբ ամեն ինչ անցյալում է, մարդիկ ավելի մեծ ակնկալիքներ ունեն ինձնից, սպասում են, որ կստեղծվեն գործեր, որոնք կգերազանցեն նախորդներին:

Պերժ ժամկոչյանը, Արթուր Փափազյանը, Արամ Ղարաբեկյանը, Ֆելիքս Սինոնյանը իմ երաժշտության կնքահայրերն են: Նրանք ինձ ներկայացրին ունկնդիր-

ների ավելի լայն շրջաններին: Մշտապես երախտապարտ եմ լինելու բոլոր նրանց, ովքեր իմ ստեղծագործական կյանքի մասն են կազմել: Մեծ հույսեր եմ կապում Սինֆոնիկայի հաջողության հետ, որովհետև այդ սինֆոնիկ նվագախմբի տաղանդավոր դիրիժորը ամերիկացի ունկնդրին ծանոթացնում է ժամանակակից հայ կոմպոզիտորների հետ: Սա մեր և սփյուռքի հայերի համար մեծ հարստություն է:

— **Յետագայի ի՞նչ ծրագրեր ունեք:**

— Ստադիոն եմ ավարտել Շանթի «Հին աստվածները»: Հոգևոր աշխարհը շատ հարազատ է ինձ: Մինչև չավարտեմ այդ գործը, չեմ մեռնելու: Չնայած որ այն աջակցության չարժանացավ իր կրոնական թեմատիկայի պատճառով և չգիտեմ՝ այն կկատարվի մի օր, թե ոչ: Սակայն դա կարևոր չէ: Շատ ուրիշ բաներ եմ ցանկանում գրել, սակայն այս մեկը իմ կյանքի ամենամեծ նպատակն է:

— **Գիտեմ, որ երաժիշտ լինելը չափազանց պարտավորեցնող է: Բացի երգչախմբում երգելուց, կա՞ր որևէ այլ պատճառ ընտրելու երաժիշտի մասնագիտությունը:**

— Երկար տարիներ բանաստեղծություններ էի գրում «Մուրազ» ծածկանունով: Պոեզիան ինձ հնարավորություն է տվել արտահայտել իմ հուզաշխարհը: Նաև այսօր, երբ ընկճված եմ զգում ինձ, իմ ապրումներն արտահայտում եմ պոեզիայի միջոցով: Գրում եմ, նկարում, սակայն երաժշտությունն ինքնարտահայտման առումով ինձ համար ամենաբարձրն է: Չեմ կարծում, որ սխալվել եմ ուղիս ընտրության մեջ, որովհետև միայն երաժշտության միջոցով եմ կարողանում լավագույնս և ամբողջականորեն ինքնարտահայտվել: Այն, ինչ չեմ կարող ասել բառերով նույնիսկ բանաստեղծություններումս, հեշտորեն կարողանում եմ ասել երաժշտության միջոցով: Այնպես որ կարծում եմ, որ երաժշտությունը սրտիս ամենամոտ արտահայտումն է: Այն այնքան մոտ է, որ ստեղծագործելիս կարող եմ տխրել, ոգևորվել, հուզվել իմ սեփական երկերը գրի առնելիս կամ կատարելիս:

— **Ձեր հաջորդ կյանքում ի՞նչ կցանկանայիք դառնալ:**

— Եթե կրկին ծնվեի, ապա կընտրեի երաժշտությունը: Չնայած նրան, որ անմոռանալի դժվարություններ եմ տեսել իմ կյանքում: Ես ստեղծագործում եմ մի սեմյակում, որը և՛ հյուրասեմյակ է, և՛ ճաշասեմյակ, և՛ մնջարան: Դժվար է կենտրոնանալ աշխատանքիս վրա: Ինչևէ, ես աշխատում եմ: Եվ եթե մորից ինձ ընտրության հնարավորություն տրվեր, ապա երաժշտությունից բացի ուրիշ ոչինչ չէի ընտրի:

Երևան, 1988 թ. հունիս
Ժաքլին Աբրահամյան
Conversations with Contemporary Armenian Artists,
AMANA BOOKS, USA



Հայրը՝ Երվանդ Դելլալյան, հունական պարտիզանական ջոկատի անդամ, 1943 թ.
Yervand Dellalian, Harutiun Dellalian's father, 1943, member of Greek guerilla team



Աթենք, դպրոցը, ուր Հարությունը 1943-1947 հաճախել է տարրական դասարանները
The school where Harutiun received elementary education



Մայրը՝ Մարի Փաշայան, Հռոմի մայրապետական վարժարանի սանուհի, 1917 թ.
Marie Pashayan, Harutiun Dellalian's mother, 1917, student of the Rome Nunnery Lyceé



Ելույթ Սովետական բանակում ծառայության ժամանակ, Բելոռուսիա, 1958 թ.
Performance during service in the Soviet Army



Հունաստան, 4 տարեկան Հարությունը քրոջ՝ Հրիփսիմեի հետ
Four-year-old Harutiun with his sister Hripsimeh, Greece



Օպերային թատրոնի հրապարակում տիկնոջ՝
Հերմինե Դելլալյանի հետ, Երևան, 1962 թ.
At the Opera House square: Harutian with his
wife, Hermineh Dellalian, Yerevan, 1962



Ընտանիք, Երևան, 1984 թ.
Family, Yerevan, 1984



Ֆրեզերային հաստոցների գործարանում: Տարիներ հետո իր նախկին աշխատավայրում
At the factory, years later at his former workplace



Նյու Յորք, 1986 թ., ընդունելություն ԱՄՆ արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Թորգոմ Արքեպիսկոպոսի մոտ (աջից): Չախից աջ՝ Ս. Գրիգորյան, Զ. Դելլալյան, Է. Միրզոյան:
New York, reception at His Grace the Lord Archbishop Torgom, Leader of Eastern Eparchy, USA
From left to right: M. Grigorian, H. Dellalian, Ed. Mirzoyan



ԱՄՆ, 1986 թ., Լոս Անջելեսի Hollywood սրահում ելույթի ժամանակ
During the concert at Hollywood Hall, Los Angeles, USA, 1986



Նյու Յորքի ժամանակակից արվեստի թանգարանում:
Զ. Դելլալյանը կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի և քանդակագործ, նկարիչ Մարկոս Գրիգորյանի հետ, 1986 թ.
In New York Modern Art Museum. From left to right:
Composer Edward Mirzoyan, sculpturer, artist Marcos Grigorian, H. Dellalian, 1986



ԱՄՆ, 1986 թ. հյուրընկալության ժամանակ:
Չախից աջ՝ է. Միրզոյան,
ՀԱԹԵ ղեկերության նախագահ Վ. Մարտիրոսյան,
դաշնակահար Արա Գևորգյան
During the visit to the USA. From left to right:
Ed. Mirzoyan, V. Martirosian, President of AATM
Society and pianist Ara Gevorgian



Հ. Դելլալյանը Արամ Դարաբեկյանի հետ, Լոս
Անջելես, 1986 թ.
H. Dellalian with Aram Gharabekian,
Los Angeles, 1986



Հ. Դելլալյանը ՀԲԸՄ նախագահ Լուիզ-Սիմոն
Մանուկյանի հետ, Նյու Յորք, 1986 թ.
H. Dellalian with Luis Simon Manoukian,
President of AGBU, New York, 1986



Աթենք, 1988 թ. Հունաստանում
հյուրընկալության ժամանակ
Զ. Գրիգորյանի հետ
During Dellalian's visit to Greece, Athens, 1988.
H. Dellalian and Editor-in Chief of Nor Ashkharh
daily Z. Grigorian



*Ես աշխատում եմ ուսուցանել, որ ամեն աշակերտ
ունենա իր սեփական դատողությունը*

*I try to teach in a way that each student
learns to have his own independent thinking*



Արվեստի թիվ 1 դպրոցի դասարանը, ուր
1976–1990 թթ. դասավանդում էր Յ. Դելլալյանը,
այժմ կոչվում է իր անունով

The classroom in Art School 1 where Dellalian
used to teach during 1976–1990 is currently
named after Dellalian

Ծանուցիւմ

Berj Zamkochian

10 First Parish Road
Canton, Mass. 02021


Սիրելի Հարություն,

Նվագեցի Հաղթական Ռեքվիեմը Մեթեն սրահում:
Այն գտավ սպասածիցս ավելի ջերմ ընդունելություն:
Հարություն, այնքան կարևոր է, որ մենք այսպիսի հայտ-
նություններ անենք աշխարհին, որպես հայեր, ապա-
ցուցենք որ մենք կանք, ապրում ենք այսպես՝ ստեղծե-
լով, չնայած մեր գլխով անցած արհավիրքին: Քրիստո-
նեության իմաստով, որը ինձ համար կյանքի ընթերցման
միակ ձևն է, մենք անմահ, ենք ինչ էլ լինի մեզ հետ, և
մենք դա պիտի հայտարարենք աշխարհին: Դու ունես
հայի ոգի և Աստված օժտել է քեզ մեծ բարիքով, ասելու
այդ մասին մարդկությանը: Դու արել ես այն քո Ռե-
քվիեմով...

Որպես հայ, շնորհակալություն եմ հայտնում քեզ,
որպես երգեհոնահար՝ շնորհավորում եմ քեզ: Երգե-
հոնը թերևս միակ գործիքն է, որ կարող է այդ
ամենը ասել իրեն յուրահատուկ ձևով:

Սեր և մտերմություն

2.07.1985



Սիրելի Հարություն,

Վաղուց ուզում եմ պատասխանել ջերմ նամակիդ, բայց նախապես ուզում էի անել այն ամենը, ինչ արեցի և հետո միայն տեղեկացնել:

Երևի զարմացել ես, որ իմ առաջին համերգին Նյու-Յորքում նվագել եմ քո դաշնամուրային սոնատը, որովհետև իսկապես մեծ քաջություն էր պետք դրա համար: Բայց քանի որ առաջին իսկ պահից հավատացել եմ քո սոնատի գեղարվեստական մեծագույն արժեքին (դեռ Երևանում, կոնսերվատորիայի N 33 լսարանում, հիշո՞ւմ ես...), ուզեցի անպայման այն ներկայացնել ամերիկացի ունկնդրին: Չտեսնված մեծ ընդունելության արժանացավ սոնատը օտարների կողմից, էլ չեմ ասում հայերի մասին...

Նյու-Յորքի համերգից տասն օր առաջ նույն ծրագիրը նվագեցի Տորոնտոյում: Այնտեղ էլ քո ստեղծագործությունը շատ մեծ հետաքրքրություն առաջ բերեց: Վաղը մեկնում եմ Իտալիա՝ համերգների և մի քանի քաղաքներում դարձյալ կատարելու եմ ինձ համար այնքան սիրելի դարձած սոնատը... այնպես որ, սկսում ես աշխարհով մեկ հայտնի դառնալ... Ամբողջ սրտով շնորհավորում եմ հաջողությունը և պիտի աշխատեմ ավելին անել, քանի որ արժանի ես:

Ամուր համբուրում եմ քեզ՝

Արթուր Փափազյան

7.04.1985 Նյու-Յորք





USC FRIENDS OF ARMENIAN MUSIC PRESENT

ARTUR PAPAZIAN

INTERNATIONALLY RENOWNED ARMENIAN-AMERICAN PIANIST



KOMITAS - 6 Dances
CHOPIN - 24 Preludes, op. 28
DELALIAN - Dedication to Komitas
LISZT - Sonata in B Minor

Սիրելի Արթուր,

Չես պատկերացնի, ինչպիսի ուրախություն պատճառեցիր ինձ քո լուրերով, քերթերի նյութերով և քո նամակով, որին ես երկար ժամանակ է՝ սպասում էի: Carnegie Hall-ի քո դեբյուտը լավ իմաստով զարմացրել է շատ-շատերին, որոնց առաջին խոսքն էր՝ «Չի կարող պատահել», իհարկե այն պատճառով միայն, որ դա իմաստովն է անհասանելի բարձունք... Եվ փառք աստծո, դու կարողացար կարճ ժամանակում գրավել այդ բարձունքը, թող դա լինի սկիզբը այն մեծ ճանապարհի, որը դու պետք է անցնես քո արտիստական մեծ շնորքով ու տաղանդով:

Ամուր գրկում եմ քեզ:

Եղբայրդ՝ Հարություն,

Երևան

25.04. 1985

Սիրելի Հարություն,

Մի լավ նորություն ունեմ քեզ համար: Մոտ օրերս սկավառակի վրա ձայնագրելու եմ քո սոնատը: Հուսով եմ, որ այն աշխարհով մեկ կսփռվի և մեծ հաջողություն կունենա:

Արթուր Փափազյան,

Նյու-Յորք, 23. 06. 1985

SinfoNova Chamber Orchestra

OF BOSTON

ARAM GHARABEKIAN, CONDUCTOR



Յարգելի Պրն. Դելլալեան,

Շատ մեծ հաճույքով եւ հետաքրքրութեամբ լսեցի Ձեր *Նվիրում Կոմիտասին* սոնատի կատարումը անցեալ մարտին, Carnegie Hall-ում Արթուր Փափազեանի կատարմամբ: Չափազանց ուրախ եմ, որ նրա միջոցով ծանոթացայ Ձեզ հետ եւ այն միտքը յղացաւ որ «Սինֆոնովա» նվագախմբիս հետ կատարենք Ձեր մի նոր ստեղծագործություն: Շատ եմ ցանկանում աւելի մօտիկից ծանոթանալ Ձեր ստեղծագործական աշխատանքներին:

Արամ Ղարապետեան

Բոստոն, 1.07.1985

*
* *

Սիրելի Յարութիւն,

Ինչպէս գիտեք, կատարեցինք Ձեր ստեղծագործությունը փետրվարի 28-ին: Ափսոսում եմ, որ չկարողացաք ներկայ գտնւել պրեմիերին, յուսամ, որ մօտ ապագայում այդ առիթն էլ պիտի ստեղծուի: Ուղարկում եմ ձայնագրութիւնը: Ցանկանում եմ Ձեզ հետ բաժանել մեր ունեցած հաջողութիւնը: Պիտի ասեմ, որ այս գործը ընդհանուր առմամբ շատ խորը ազդեցութիւն թողեց ներկաների վրայ, զգացի, որ Topophobia-ի խորհուրդը փոխանցվել էր ունկնդրին: Համերգից յետոյ ինձ շրջապատեցին, շատերը ցանկանում էին յայտնել իրենց կարծիքը: Երկու հոգի արտասովելով էին խօսում իրենց զգացածի, տպավորութիւնների մասին: Մեկ ուրիշից լսեցի, թէ ինչպէս ֆիզիկապէս լարված է եղել կատարման ընթացքում, եւ թէ ինչպէս հետո ցավ է զգացել իր ողջ մարմնով... Սի խօսքով՝ շատ յատուկ տպավորութիւն... Մինչեւ հիմա (մեկ ամիս համերգից յետոյ) տարբեր շրջանակներում դեռ այդ մասին են խօսում եւ վիճաբանում: Ես անձամբ շատ մեծ բավականութիւն ստացայ այս կատարումից եւ անչափ ուրախ եմ, որ հայրենիքից ներշնչված արդի երաժշտութեամբ, պատճառ դարձա այս տարօրինակ եւ յատուկ արթնացումի: Այսպիսի արթնա-



ցումներն են, որ արուեստի աշխարհի հարստութիւնն են դառնում: Սիքելի Յարուքին, շատ շնորհակալ եմ, որ մաս ունեցա այս գործը ապրեցնելու մէջ: Ամեն մի նոր կատարում մի նոր աշխարհ է, եւ ամեն մի աշխարհ՝ մի նոր ապրում: 1987-ին Topophono-ն նորից կատարելու եմ Լոս-Անջելեսում:

... Գրեմք իրար:

Եղբայրաբար բարեւներով՝
Արամ Ղարապէկեան
Բոստոն, 4.04.1986

* * *

Սիքելի Յարուքին,

Անչափ ուրախ եմ, որ վերջապէս յաջողեցի քեզ հետ խօսել, շատ ուժեղ եւ մօտ կապ եմ զգում մեր մէջ, եւ, ինչպէս քեզ պատմեցի, քո երաժշտութեան միջոցով էլ դա հաստատուեց:

Նոյեմբերի 11-ին մենք Topophono-ն պիտի կատարենք Բոստոնում եւ 16-ին Լոս-Անջելեսում: Համերգների ծրագիրը ներկայացնում է ժամանակակից չորս կոմպոզիտորների գործեր, որոնցից երեքը յատուկ Սինֆոնովայի համար են գրած: Կոմպոզիտորներից երկուսը ամերիկացիներ են՝ Վիլյամ Թոմաս Մաքքիլի եւ Թոմաս Օբո Լի, միւս երկուսը՝ բնականաբար, դու եւ Էդուարդ Սիլգոյանը: Այս ծրագրում ցանկացել եմ ներկայացնել երկու երկրների կոմպոզիտորական մօտեցումներ եւ նոյն ժամանակ՝ երաժշտական երկու սերունդներ: Լոս-Անջելեսի համերգը յատկապէս յատկանշական է, քանի որ չորս կոմպոզիտորները ներկայ են լինելու...

Արամ Ղարապէկեան
Բոստոն 3.09.1986



Opening Concert of the 1986-87 Season

Avo Kuyumjian, piano

MIRZOYAN Symphony for Strings and Timpani
DELLALIAN Topophono-Chamber Concerto
McKINLEY Sinfonova
OBOELEE Morango...almost a tango

Tuesday, November 11, 8:00 PM
Jordan Hall, 33 Gainborough St., Boston
Tickets \$10, \$15, \$20

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԵԼԼԱՆՅԱՆ

«Էկլոգա»
Կոնցերտ Ֆլեյտայի, նվագախմբի,
դաշնամուրի և թմբիկների համար

Տաթևիկ Բաղդասարյան Ֆլեյտա
Էկա Մելիք-Չուպյան Դաշնամուր
Ալեքսանդր Սահակյան Թմբիկներ

(1937-1990)

պրեմիերա

1986 8 PM

AVILION, MUSIC CENTER, LOS ANGELES

825 818-507-8981 818-242-6512

09. 11. 2003
19:30 Uhr



Händel-Haus Halle
Glashalle

Program:

Dmitri Shostakowitsch (1906 - 1975): Prelude and Scherzo für Streicher
Eduard Mirzoyan (*1921): Symphony für Streichorchester und Pauken

Andante patetico. Allegro moderato
Allegretto ma non troppo
Adagio
Allegro vivo

Vartabet Komitas (1869 - 1935): Vier armenische Tänze
(Beorb. Aslamazian)

Harutyun Dellalian (1937 - 1990): ECLLOTIA für Flöte, Streicher,
Klavier und Schlaginstrumente

Aram Chatschaturjan (1903 - 1978)/Alfounain: Chatschaturiana
NCOA commission for the Chatschaturjan Centennial

Ausführende:

Ella Melik Husian, Klavier
Tatevik Baghdasarian, Flöte
NATIONAL CHAMBER ORCHESTRA OF ARMENIA
Dirigent: Aram Gharabekian

ARMENIAN AMERICAN THEATRICAL MUSICAL SOCIETY
PRESENTS

SinfoNova Chamber Orchestra
OF BOSTON



ARAM GHARABEKIAN, CONDUCTOR
AVO KUYUMJIAN, PIANO SOLOIST
WILLIAM THOMAS MCKINLEY "SinfoNova"
West Coast Premiere

HAROUTIUN DELLALIAN "ToPoPhono" Chamber Concerto for
French Horn, Piano and Strings
West Coast Premiere

THOMAS OBOE LEE "Morango... almost a tango"
West Coast Premiere

EDWARD MIRZOYAN SymPhony for String Orchestra
and TimPani

SinfoNova commission

1986 8 PM

AVILION, MUSIC CENTER, LOS ANGELES

825 818-507-8981 818-242-6512



ԺՈՐԺ ԲԵՋԵ (1838-1875) - «Արլուիկ», սյուիտ թիվ 2
1. Հովվերգություն: 2. Միջնամկագ:
3. Մեմուհ: 4. Ֆարանդոլա

ՄՈՐԻՍ ԱԼԿԵԼ (1875-1937) - Իսպանական ուսպողիա
1. Գիշերային նախերգ: 2. Մարզահեյա:
3. Հարամներա:
4. Ֆերիա (ծողովորական տոնախմբություն)


ՅՈՒՆԱՆ ԲՐԱՄՍ (1833-1897) - Միմֆոնիա թիվ 4
(նվիրվում է կոմպոզիտոր Հարություն
Դելալյանի հիշատակին)
1. Ոչ շատ արագ: 2. Հանդարտ, չափավոր:
3. Արագ խաղացվում:
4. Արագ, եռամղուն եւ կրթոտ

Դիլիժոք **ԱՐԱՄ ԴԱՐԱՔԵՂՅԱՆ** (ԱՄՆ)

Սիրելի Նարինե,

Ամեն անգամ, երբ կրկին ու կրկին ունկնդրում եմ Ձեր թանկագին հայրիկի երաժշտությունը, ինձ այն խորապես հուզում է: Ես այն երբեք չեմ մոռանում: Նրա ծայնագրությունների լազերային սկավառակը միշտ ինձ հետ էր Եվրոպայով մեկ կատարած համերգային շրջագայությունների ժամանակ, և մի քանի անգամ լսել եմ այն: Նա անհավատալիորեն խորը, անվախ մտածողություն ունեցող երաժիշտ է: Այսօր կարող եմ ասել, որ նրա մահը մեծ կորուստ էր ոչ միայն հայկական մշակույթի, այլ նաև ողջ արևմտյան երաժշտության համար: Նա կարողացել է երաժշտության միջոցով հստակորեն արտահայտել իր հույզերն ու մտքերը, որոնք հասկանալի են ինչպես մտավորականին, այնպես էլ սովորական երաժշտասերին: Անչափ շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն տվեցիք ծանոթանալու նրա երաժշտությանը: Հուսով եմ նաև, որ կկարողանաք ինձ տրամադրել նրա սիմֆոնիկ գործերից մի քանիսը:

Լավագույն մաղթանքներով,



Էմիլիո Պոմարիկո

16.03.2004, Սիլան



Սիրուր Մեսչյան

- Ինչպե՞ս շնորհակալ եմ...
Ես էլ չեմ հասցնում թանկ, հաճախ երբ,
երբորք հարկ հատուցելու քայլափայլ
և վաշտամարտ... և անհամարժեք -
գեղարվեստ: Այն երաշխիք օգնել է ինձ
և երբեք միջանկյալ հիմեղ լինեմ -
Զեյնալիք չհամբեր:

Մ. Մեսչյան

*Մեջբերումներ
մասնակից*

The Watertown Press

12 նոյեմբերի 1986

Հարություն Դելլալյանի Topophono կոնցերտը Սինֆոնովա նվագախմբի և դիրժոր Արամ Ղարաբեկյանի կատարմամբ միաժամանակ ցնցեց և հիացրեց Բոստոնի երաժշտական հանդիսատեսին: Կոնցերտը փայլուն, հնարամիտ նորամուծության արգասիք է, թե՛ գրառման

ծներով և թե՛ հորինվածքային առանձնահատկություններով:

Դելլալյանի Topophono կոնցերտի կատարումը, անկասկած, ամենագրավիչ և հիշարժան երևույթն էր Բոստոնի այս համերգային շրջանի ընթացքում:

South End News

20 նոյեմբերի 1986

Ուիլիամ Թոմաս Մաքքինլիի, Հարություն Դելլալյանի, Թոմաս Օբոյ Լիի և Էդուարդ Միրզոյանի ստեղծագործությունները պատկանում են այն մի քանի լավագույն ժամանակակից գործերի թվին, որ վերջին ժամանակներս ինձ հաջողվել է ունկնդրել: Նրանց բնորոշ է հե-

տաքրքիր կառուցվածքը, զարգացումների ու երաժշտության անկեղծությունը:

Համերգի կիզակետը Դելլալյանի Topophono-ն էր:

Ֆրանկ Բենոլ

Los Angeles Times

27 նոյեմբերի 1986

Անշուշտ, համերգում կատարված Դելլալյանի Topophono կոնցերտը պատկանում է քսաներորդ դարի իսկական կոմպոզիտորի գրչին:

Ցնցող տպավորություն է թողնում մտքի վսեմ խորությունը: Ահա թե ինչպիսին պետք է լինի ժամանակակից երաժշտությունը:



8 մարտի 1986

Սինֆոնիկան Մեկնաբանեց Դելլալեանի “Խնդրայարոյց” Գործը

Դելլալեան Ամերիկահայութեան ծանօթ դարձավ դաշնակի համար գրուած իր Նուիրում Կոմիտասին ստեղծագործութիւնով: Նոյն բնոյթի յօրինում մըն էր Topophobia մկրտած գործը, որ զգայացունց բնոյթ մը ունեցաւ, ոմանց դրական իմաստով, ուրիշներուն՝ shocking առումով:

Դելլալեանի գործը հիմնուած է ծայրի եւ շարժումի յարատեւ փոփոխութեան վրայ: Որքան դասական երաժշտութիւնը կը յիշեցնէ, նոյնքան մաւել կ'օգտագործէ արդիական երաժշտութեան ծայնային միջոցը՝ առանց երբեք վերացական վիճակներ պարզելու: Իր մօտ ծայրը՝ անյարիր եւ ականջները “սղոցող” սուր կամ թալ ծայնանիշեր չեն, օդին մէջ արձակուած: Իսկ որպէս եղանակային նախադասութիւններ, օգտագործած է Կոմիտասեան երգերու նախադասութիւնները:

Ձայներու շարժումի որպէս ուրիշ միջոց փոխ առնուած են մաւել թատերական տեղափոխութիւնները, որոնք երաժշտական աշխարհին համար նորութիւններ չըլլալով հանդերձ, նոր է

որ կ'երեւան հայ երգահանի մը ստեղծագործութիւններուն մէջ:

Դելլալեանի “միջին ճամբու” մը վրայ գտնուող այս ստեղծագործութիւնը ոչ կրնար ամբողջովին գոհացնել շեշտուած արդիականութիւն մը փնտռողը եւ ոչ ալ դասական ծանօթ երաժշտութեան դպրոցներուն հետեւողը: Հայրենի երաժշտին գործը կեանքի եւ մահուան նկարագրութիւնն է, տխրութեան եւ գեղջկական խնջոյքի նկարագրականը, ուր հայկական մոթիվներուն շարահիւսուած ներկայացաւ Շոփէնի հանրածանօթ Մահերգը: Յաղթողը դարձաւ կեանքը:

Դելլալեանի գործին մասին կարելի է կողմ եւ դէմ երկարօրէն արտայայտուիլ: Այսքանը իսկ իր օգտակար եւ դրական կողմը ունի: Այսուհանդերձ, այս գործը ընդհանրապէս ցնցիչ տպաւորութիւն ձգեց ունկնդիրին վրայ: Խմբավար Արամ Ղարաբէկեան, որ բժախնդիր եւ խստապահանջ խմբավար մըն է, փայլուն եւ ներդաշնակ մեկնաբանութիւն մը ներկայացուց իր ղեկավարին ճիպոտին ներքեւ:

ԵՐԿԵԱՆԷ

27 նոյեմբերի 1986

Յարութիւն Դէլլալեան եւ Արամ Ղարապէկեան զուգընթաց անուններ պիտի մնան մեր յիշողութեան մէջ:

«Գեղարուեստական յայտնութիւն» մըն էր Յարութիւն Դէլլալեանի Topophonos քոնչէրթոն, լարային նուագախումբի, դաշնակի եւ փողի, որ հանդիսացաւ յայտագրին բարձրակետը:

Բացառիկ ինքնատիպ, անսովոր ստեղծագործութիւն եւ հոյակապ կատարում:

Ահա քսաներորդ դարու երիտասարդ ստեղծագործողի խօսքը, պոռթկումը զգացումներու, մտքի խորութեան եւ կրքի ուժգնութեան արտայայտութիւնը: Դէլլալեան անկասկած ունի ուժեղ արուեստագէտի անհատականութիւն:

Հիացանք, զգացինք գեղեցիկի, շիտակ, մաքուր զգացումներու ժամանակակից մարդու բնական, անբռնազրօս տրամադրութիւնները:

Խորունկ, բազմիմաստ, բազմերանգ երկ մը, հայ ժողովուրդի պատմութեան նկարաշար մը: Կ'արտացոլայ մարդու փառաբանումը, տառապանքը, երազը, սէրը, երջանկութեան ձգտելու տենչը, մահը, եւ այս բոլորը այնքան յստակ եւ անկեղծ շաղախուած: Մտայղացմամբ լուրջ, ժամանակի հեւքն ու ռիթմն արտայայտող, յուզականօրէն համակած գործ է սա: Ստեղծագործութիւնը օժտուած է ազգային հնչերանգներով, առկայ է ազգային-աւանդական հիմքը, շունչն ու հոգեբանութիւնը, օգտագործած է ֆոլքլորի քաղուածքային նմոյշներ: Այնքան ալ դիւրին չէ ծամանակակից երկ մը ընկալել մէկ անգամէն. բայց սա տարբեր էր իր իւրայատկութեամբ: Ունկնդրին ստիպեց թափանցելու երկի հոգեբանական խորք առած պատմողականութեան մթնոլորտը:

Անգինէ Սուրատեան



Հարություն Դելլալյանը համարվում է ամենաակամավոր և ինքնատիպ ժամանակակից հայ կոմպոզի-

տորներից մեկը: Իր Topophonos կոնցերտը եզակի և յուրօրինակ երաժշտական կտավ է:

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ

13 դեկտեմբերի 1988

Հայրենի երգահան Յարութիւն Դելլալեանի Topophonon արդիաշունչ գործը, զոր պոստոնահայերուն ներկայացուցած էր Սինֆոնովա Լարային Նուագախումբը, մասկազմած է երաժշտութեան միջազգային օրւան առթիվ Մոսկուայի Յօրինողներու Տան մէջ տեղի ունեցած համերգին, Փրոքովիեւի, Ստանկո-

վիչի եւ Կալինինի լայնաշունչ գործերու կողքին:

Հարութիւն Դելլալեանի երաժշտական աշխարհը խորհրդաւոր աշխարհ մըն է, ամոր երաժշտութեան ծայնը դժուարացնելով դարերու խորերէն արծագանք կը գտնէ ժամանակակից աշխարհին մէջ:

Ձապեն Գրիգորեան

Советская музыка

№11, 1979 թ.

Հարություն Դելլալյանի *Թավջութակի և դաշնամուրի սոնատը* քննարական անկեղծ պաթոսով տողորված երկ է: Այս յուրատիպ

երաժշտությունը մարդկային խոր ու նվիրական զգացմունքների գովերգումն է:

Ն. Ջիվ, Ե. Բառանկյին

ՅԱՐԱՐՀ

5 ապրիլի 1998

Հանդիպումը՝ Լեւոն Մուրատեան ու Մարինա Դելլալեան հայ արուեստագետներու հետ Փարիզի Կիւպէնկեան Մշակութային Կեդրոնի սրահներուն մէջ ուրախ առիթ մը եղաւ մեզի համար:

Եւ ինչ մեծ հրճուանքով ունկնդ-

րեցինք Յարութիւն Դելլալեանի թաւջութակի գեղեցիկ սոնաթը, որուն հաւանաբար առաջին ունկնդրութիւնն էր Փարիզի մէջ: Ահա վաղամեռիկ հայ երգահանին ուրիշ մէկ գործը: Տարածումի արժանի, նորարար կշռոյթներով...

The New York Times

24 մարտի 1985

Ծրագրի ամենաուշագրավ գործը Հարություն Դելլալյանի *Նվիրում Կոմիտասին* սոնատն էր: Ունկնդրին հալածող մի ստեղծագործություն, որտեղ օգտագործված են ժողովր-

դական մեղեդիների ելևջներ, դաշնամուրի ներքին լարերի հնչողություններ և երգեցողություն...

Թիմ Փէյջ

The Monitor

26 մարտի 1985

Նվիրում Կոմիտասին սոնատը հոգեբանական տվյալաճյուղի դրամատիկ գործ, որի ունկնդրումը սակայն ամենևին էլ ցավազին չէ: Նախ և առաջ, ստեղծագործությունն ունի դյուր ընկալվող երաժշտական հնչեղություն: Ինչպես ցանկացած գործի անդրանիկ կատարման դեպքում, այստեղ ևս ենթադրվում է, որ կատարողն ունկնդրին է ներկայացնում ճիշտ մեկնաբանությունը: Իր կա-

տարմամբ Փափազյանը հիանալիորեն բացահայտեց ստեղծագործության հուզական կողմը՝ դրանով իսկ ունկնդրին հաղորդակից դարձնելով ստեղծագործության բարձր հուզականությանը: Դահլիճը ջերմորեն ընդունեց ստեղծագործությունը: Հոգեբանական հնչերանգով հագեցած այս ստեղծագործությունը ապշեցուցիչ տպավորություն է թողնում:

Լարի Ս. Լեդֆորդ

Комсомолец

12 մայիսի 1983

Ունկնդիրը մեծագույն հետաքրքրություն ցուցաբերեց Դելլալյանի *Նվիրում Կոմիտասին* սոնատի նկատմամբ: Այս ստեղծագործության մեջ բյուրավոր ազգային մեղեդիների միջոցով հառնում է կոմիտասյան աշխարհը: Սոնատի երաժշտության ամենամուրբ լեզա-

տոն ասես ներարկված է հայոց լեռների ու բուսականության բույրով, հրաշալի եկեղեցական տոնի՝ «Տյառնընդառաջ» խարույկների և մեկ այլ սահմոկեցուցիչ կրակի՝ Եղեռնի, բոցկտումներով:

Ա. Ֆրիմերման

ԵՄԻ ԿԵԱՆԲ

10 հունիսի 1984

Համերգի Բ. մասին մեջ (Los Angeles), Արթուր Փափագեան հմայեց ունկնդիրները՝ Յարութիւն Դէլլալեանի *Նուիրում Կոմիտասին* դաշնակի սոնաթով: Դէլլալեանի ուշագրաւ եւ շշմեցուցիչ սոնաթան գեղարուեստական յայտնութիւն մըն էր: Ունկնդիրը զամող երկ մը, ուր օգտագործուած են ժողովրդական մեղեդիներ, մեղմ երգեցողութիւն եւ դաշնակի ներքին լարերու Pizzicato եւ glissando հնչողութիւններ: Բացառիկ ինքնատիպ, անսովոր ստեղծագործութիւն եւ հոյակապ կատարում:

Հաւատարիմ մնալով ազգային, իւրացնելով համաշխարհային մտածողութեան արտայայտչական ձեւերը՝ Դէլլալեան աշխարհին ներկայացուց հայ երաժշտութիւնը ժամանակակից մտածողութեամբ:

Ահա 20-րդ դարի երիտասարդ ստեղծագործողի խօսքը, պոռթկումը զգացումներու, մտքի խորութիւն եւ կիրքի ուժգնութեան արտայայտութիւն: Ցնցիչ եւ ազդու երկ մըն է, մէկ անգամ լսելը չի բաւարարէր:

Անգիմէ Մուրատեան

Toronto Star

12 մարտի 1985

Համերգի ժամանակ Արթուր Փափագեանը ներկայացրեց Հայաստանաբնակ կոմպոզիտոր Հարութիւն Դէլլալեանի *Նվիրում Կոմիտասին* սոնատը, ուր կոմպոզիտորը վարպետորեն ստեղծել էր ավելի քան հուզային, դրամատիկ, բռնկվող բնույթի մի ստեղծագործություն,

օգտագործելով լարերի վրա glissando-ներ, թափանցիկ երգեցողություն: Այս գերող տրամադրությունը հրաշալիորեն կապվեց սոնատին հաջորդող Բեթհովենյան երաժշտությամբ:

Ռոնալդ Համբլտոն

Գանձասար

22 դեկտեմբերի 1993

Յայտագրին գազաթնակետը կը կազմէր Յարութիւն Դելլալեանի սոնաթը՝ Նուիրուած Կոմիտասին: Թէ ինչ կ'անցնի կը դառնայ Կոմիտասի էութեան մէջ, նստած Փարիզի իր սենեակը, թէ ի՞նչ կ'անցնի իւրաքանչիւր հայու հոգիէն, երբ կը վերյիշէ ջարդը... հարցուցեք Յարութիւն Դելլալեանին, հարցուցեք Սեդրակ Երկանեանին եւ անոնք ձեզի կը պատմեն, կը թարգմանեն վիրաւոր հոգիի մը ապրումները, տեսիլքները, վախերը, որոնք կը կետադրուին մեղեդիներու ծուլներով, կը հրահրուին քաղաքականութիւն կոչուած սրի-

կայութեամբ, ի վերջոյ իյնալու համար մոռացումի եւ անտարբերութեան ճիրանները:

Գործին կատարումէն երկար րոպէներ ետք, սրահը սահմռկած, կծկուած ինք իր վրայ կը սպասէր. ծափողջոյններու տարափին հետ, մարդիկ կը մրմնջէին.

— Մեզի համար դիւրաւ ընկալելի պատառ չէ, բայց սքանչելի է, հոյակապ....

— Այնպէս կը նուագէր... կարծես կը մեռնէր, կը մեռնէր....

Մ. Երամեան

Советская музыка

№ 2, 1983 թ.

Դելլալեանի ստեղծագործությունների ազգային առանձնահատկություններն արտահայտվում են կոմպոզիտորի ազգային մտածելակերպով, որն արտացոլվում է ժամանակակից գրելաոճի զանազան միջոցների կիրառման մեջ: Այս առու-

մով չափազանց հետաքրքիր է կլարնետի և դաշնամուրի համար գրված *Meditations* սոնատը, որն աչքի է ընկնում իր բարձր գեղարվեստական արժեքով:

Ս. Բոգդանովա,
ժ. Սմիռնովա



09 մայիսի 1987

Մարտի 16-ին տեղի ունեցավ աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ ժամկոչյանի համերգը Քեօլնի Ս. Նիկողայոս տաճարին մեջ:

Մինչ Ֆրանց Լիսթ, Ե.Ս. Պախ, Մարսել Տիլփրե ծանոթներ են գերման երաժշտասերներու, նորութիւն էին Տատլի Պաք եւ մանաւանդ հայրենի երգահան Յարութիւն Դէլլալեանը, որուն համերգին մաս կազմող գործը՝ *Հաղթական Ռեքվիեմ*, Դէլլալեան այն նվիրած է ժամկոչեանին: Այս իւրօրինակ ստեղծագործութիւնը փոթորկումներու, ցաւի, մահատարած լռութեան եւ հոգեհանգիստի զանազան փուլերէն յետոյ, իր յաղթական հնչումներով կ'ոգեկոչէ, իր ամբողջութեամբ, նոյնիմքն հայ ժողովուրդը: Համադրուե-

լով հոգեւորական միջավայրին, Ս. Յարութեան Տօնին սպասումի այս օրերուն մէջ, Աւետումի փոխադարձող արձագանքներ կը հնչեցնէ հոգիներու մեջ:

Ծանոթանալով Յ. Դէլլալեանի այս ստեղծագործութեան, հայերուս հոգեպարարունը եղաւ կրկնակի. քանի որ այն ծածուկ մտավախութիւնը թէ արդեօք այս գործն ալ կը նմանէր ուրիշ արդիական գործերու, որ աւելի մտքի ու տրամաբանութեան կը խօսին քան թէ սրտի, մեկ անգամով չքացավ: Իսկապէս Դէլլալեանի այս գործը թէ՛ արդիական է, թէ՛ խոր յուզական: «Մարդուս մորթին տակ կ'երթայ » կըսեն գերմանացիները:

Տոքթ. Պ. Պարթեւեան



11 մայիսի 1985

Պրն. ժամկոչեան ներկաները կախարդեց իր գերազանց նուագածութեամբ: Ընտրած էր օրուան յարմար կտորներ: Յայտագրի առաջին մասը նուիրած էր Ի. Ս. Պախին, որուն ծննդեան երեք հարիւրամեակի տօնակատարութիւնը միջազգային չափա-

նիշով նշուեցավ (ի դեպ, այդ առթիւ Պրն. ժամկոչեան հրաւեր ստացած էր Արեւմտ. Գերմանիոյ կառավարութեանը՝ նուագելու Պախի երգեհոնային ամբողջական գործերը, Քեօլնի մայր տաճարին մէջ եւ այլուր): Յայտագրին Բ. մասը նուիրուած էր Ցեղասպանու-

թեան 70–րդ տարելիցին: Չափազանց ուշագրաւ էր հայաստանեան երաժիշտ Յարութիւն Դելլալեանի Requiem Trionfale–ն (Յաղթական մահերգ): Զեղինակն իր այս յօդունումը

նուիրած էր երգեհոնահար Պերճ Ժամկոչեանին: Երաժշտական յօդունումը լի էր խորապէս գրավիչ իր խոր հայկականութեամբ եւ նորարարութեամբ:

Mitteldeutsche Zeitung

11 նոյեմբերի 2003

Արամ Խաչատրյանի ծննդյան 100 ամյակի կապակցությամբ Հալլէի Handel–Haus–ում տեղի ունեցավ մի սքանչելի համերգ Հայաստանի Պետական Կամերային նվագախմբի կատարմամբ, որի ղեկավարն էր դիրիժոր Արամ Ղարաբեկյանը:

Հ. Դելլալյանի Ecloga Կոնցերտը, գրված ֆլեյտայի, լարայինների և դաշնամուրի համար, մի անսովոր, ավանգարդիստական երկ է: Տաթևիկ Բաղդասարյանի սքանչելի կատարումը մեկ անգամ ևս ընդգծեց, թե ծայնը և աղմուկը որքան մոտ են գտնվում միմյանց: Այս երաժշտական երկը մասամբ նման է ներկազարդված ծայների, որտեղ նկարիչը, որը ինքը մենա-

կատարն է, մեկ ընդհանուր տոնից նկարում է երեք ծայնային գույներ:

Վերջաբանում մենակատարը մեջքով շրջվում է դեպի հանդիսատեսը:

Սա և՛ տեսողական, և՛ ծայնային փոփոխություն է մտցնում և առաջացնում մեղիտատիվ մթնոլորտ՝ ունկնդրին տանելով դեպի անտիկ ժամանակներ:

Ecloga–ն գույներով լեցուն ստեղծագործություն է, որը ստեղծվել է մոտ 20 տարի առաջ: Այս ստեղծագործությունը սովերի մեջ թողեց մեծ վարպետ Ա. Խաչատրյանին: Համերգը ակամա արժեք ունեցավ՝ իր ուշադրությունը սևեռելով հենց այս գործին:

Էփարդ Փեսրիք



*Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչվում ենք հայ,
Գիտենք դեռ չանցած վերքերից տնքալ,
Բայց մոր ցնծությամբ խնդալ ու հրճվել...
Կանք: Պիտի լինենք,
Ու դեռ շատանանք:*

Մեծագույն տաղանդի գրչի տակից դուրս եկած տողեր, որոնք անվերապահորեն պետք է վերագրենք Հարություն Դելլալյանին մահ:

Երևանի քաղաքապետարանի որոշման համաձայն՝ Նոր Զեյթուն թաղամասի փողոցներից մեկը, որտեղ ապրել է 1947-ից մինչև իր մահկանացուն կնքելը, այսուհետև կրում է երգահան, անխոնջ մտավորական Հարություն Դելլալյանի անունը:

Այս անվանակոչությունն անմահացրել է հայ մտավորականի, մարդու անբասիր անունը:

Փա՛ռք ու պատիվ անունիդ, Հարություն Դելլալյան:

Վալենտին Թովմասյան

Yerevan Municipality decided to name the street in Nor Zeitun where Dellalian lived from 1947 until his last days in 1990, after the great composer (as from 2001).